



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

### ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

26 հունիսի 2019 թվական

2-ԲԴ ՆՏՏԱՇՐՋԱՆԻ 5-ԲԴ ՆԻՍ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

### ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 12.40

#### Հայկ Մարության

-Ավագանու հարգելի անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել են  
ավագանու 25 անդամ՝

Հասմիկ Խաչունց՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Դավիթ Խաժակյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Հոփսիմե Առաքելյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Մեսրոպ Պապիկյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Անի Խաչատրյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Լյուդմիլա Սարգսյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Լևոն Զաքարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Թեհմինա Վարդանյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Միքայել Մանրիկյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Հայկ Հովհաննիսյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Մարկոս Հարությունյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Սաթենիկ Մկրտչյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Արմեն Ներսիսյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,  
Մերգեյ Ապրեսյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Գայանե Վարդանյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Էռնեստ Ավանեսով՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Գրիգորի Երիցյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Արմեն Գալջյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Գայանե Մելքոն Մելքոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Աննա Ջավախյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Արման Անտոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Հայկ Միրզոյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Արթուր Մանուկյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Լիլիթ Պիպոյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Արուսյակ Հարությունյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն:  
Առաջին հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Հասմիկ Խաչունց, խնդրե՛մ:

### **Հասմիկ Խաչունց**

-Շնորհակալություն, հարցս վերաբերում է արվեստի դպրոցներին: Խնդիրը հետևյալն է. մենք հիշում ենք, որ մի քանի նիստ առաջ բյուջետային փոփոխություն տեղի ունեցավ և համայնքի կողմից արվեստի դպրոցներին տրվող սուբսիդիան ավելացավ: Այդ ժամանակ ամրագրեցինք, որ այդ միջոցները, որոնք ըստ էության չէին գանձվելու ծնողներից, այլ համայնքն էր սուբսիդավորելու, ուղղվելու էր նաև արվեստի դպրոցների ուսուցիչների աշխատավարձերի բարձրացմանը: Ցանկանում եմ հասկանալ այս հարցի հետ կապված ինչ զարգացումներ ունենք և, եթե հնարավոր է, նշել մոտավոր ժամկետներ, թե երբ կունենաք այդ բարձրացումները:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը, խնդրեմ:

### **Տիգրան Վիրաբյան**

-Շնորհակալ եմ հարցի համար: Արվեստի և երաժշտական դպրոցների մասով պիտի ասեմ, որ բարձրացումները և սուբսիդիայի ավելացումը կապված էր ժամաքանակների, դասաժամերի ավելացման հետ: Այն դասաժամերը, որոնք ավելացել են և այն ուսուցիչները, ովքեր հավելյալ դասաժամեր կպարապեն, բնականաբար, հավելյալ կվճարվեն: Հաշվարկները կատարվում են ըստ ժամաքանակների:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյան, խնդրեմ:

### **Դավիթ Խաժակյան**

-Շնորհակալություն: Պարոն քաղաքապետ, առաջին հարցս վերաբերում է մի կարևոր աշխատանքի, խոսքը Երևանի պատմության գրքի մասին է, որի վրա աշխատել են Հայաստանի մի խումբ պատմաբաններ, որը նախաձեռնվել է քաղաքապետի նախկին խորհրդական Գագիկ Բաղդասարյանի կողմից: Հրապարակվել է գրքի հանրամատչելի տարբերակը, սակայն առկա են ն՝ գիտական մասը, ն՝ վերջինիս անգլերենով թարգմանությունը: Այս գիրքը նախատեսված էր հրատարակման Երևանի **2800**-ամյակի համար, որը պետք է արտացոլեր Երևանի պատմությունը հավաքական տեսքով, որովհետև այս առումով ունենք հատվածական գրականություն, սակայն այս գիրքը պետք է լիներ վերջիններիս հավաքականը:

Հարցս վերաբերում է գրքի մյուս հատվածներին, գիտեք, որ շատ հաճախ մեր հարևան պետությունների կողմից հայ ժողովրդի պատմությունը շահարկման առարկա է դառնում: Կարծում եմ առաջին հերթին մենք պետք է ջանանք մեր պատմությունը ցույց տալ, ամրապնդել, որպեսզի այս կամ այն պաշտոնյաները Երևանը չշփոթեն այլ պետությունների, այլ ազգերի պատկանելության հետ, ուստի՝ կարևոր է, որ այս առումով մենք մեր պատմությունն ունենանք հավաքական տեսքով և այսպիսի ֆունդամենտալ աշխատանքները պետք է խրախուսենք:

Իմ առաջարկը և հարցը վերաբերում է այս գրքի շարունակությանը՝ գիտական մասին, վստահ եմ հարցին տիրապետում եք, այդ պատճառով եմ հարցս հրապարակավ ուղղում: Ի՞նչ կարծիքի եք աջակցելու, որպեսզի **2**-րդ՝ գիտական մասը և հանրամատչելի մասի թարգմանությունը ևս հրապարակվի, ինչը, կարծում եմ, կլինի թե քաղաքապետարանի կողմից իրականացվող մեծ աշխատանք, թե հետագայում նաև համայնքապատկան հիմնարկներին դրանք տրամադրելու տեսանկյունից: Ծանոթացել եմ գրքի հանրամատչելի տարբերակին, որն իսկապես ֆունդամենտալ աշխատանք է:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն, պարոն Խաժակյան, հարցն իհարկե կարևոր է, ինչպես նաև կարևոր են այլ հարցեր՝ կապված ն՝ մշակույթի, ն՝ սպորտի, ն՝ այլ ոլորտների հետ: Մա ընդհանրացնում եմ, որովհետև քաղաքապետի տեղակալ պարոն Վիրաբյանի հետ քննարկում ենք ունեցել, որոշում է կայացվել ունենալ հանձնաժողովներ, որոնց անդամները լինելու են նաև Երևանի ավագանու անդամները: Նպատակն այն է, որ ոչ թե միանձնյա որոշում լինի քաղաքապետի կողմից կամ քաղաքապետարանի աշխատակազմի կոնկրետ

այդ գործով զբաղվող մի մարդու կողմից, այլ հանձնաժողովը որոշի: Ինչու՞ եմ այսպես ասում, որովհետև վերջիվերջո այս ամենը բխում է ֆինանսներից, այսինքն՝ հանձնաժողովը որոշի, թե որ գրքին կամ մշակութային ստեղծագործությանը, կամ սպորտային ինչ-որ միջոցառմանը որքան գումար տալ, որին՝ ոչ: Քանի որ առաջարկները շատ-շատ են, ես ընդհանուր եմ պատասխանում, որի մեջ կա նաև Ձեր հարցի պատասխանը: Առաջարկները շատ են, եթե չեմ սխալվում հանձնաժողովն արդեն ստեղծված է, կարծում եմ այս հարցը կարելի է քննարկել հանձնաժողովում և եզրակացությունն ի կատար կածվի:

### **Դավիթ Խաժակյան**

-Շնորհակալություն, այդ պարագայում սա առաջարկում եմ ընդունել որպես հրապարակային առաջարկ քննարկելու այս հարցը, որովհետև աշխատանքն իսկապես ֆունդամենտալ է և, կարծում եմ, արժե որպես առաջնային հարց, այդ թվում և իմ առաջարկությամբ, քննարկել:

Մյուս հարցս վերաբերում է մի խնդրի, որը եկել է բնակիչներից: Դավթաշեն վարչական շրջանի առաջին թաղամասի բնակիչները և թիվ **200** դպրոցի աշակերտների ծնողներն ստորագրահավաք են անցկացրել և ներկայացրել վարչական շրջանի ղեկավարին՝ **հ. 61** մանկապարտեզի և ավտոտնակների միջև եղած ճանապարհահատվածի երկայնքով մայթ ձևավորելու համար:

Ինձ տեղեկացրին, որ այս խնդրով դիմել են պարոն Թումասյանին, բայց քանի որ հստակ չէ, թե ինչ արձագանք կա, հնչեցնում եմ հարցս սրա հետ կապված: Խոսքը վերաբերում է մի հատվածի, որտեղով պարբերաբար անցնում են աշակերտները, երեխաները և մայթ չկա, սակայն այնտեղ այդ հնարավորությունը կա: Պարոն Թումասյան, վստահ եմ ուսումնասիրել էք, ի՞նչ կարծիք, տեսակետ ունեք սրա վերաբերյալ:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավար Միքայել Թումասյանը:

### **Միքայել Թումասյան**

-Շնորհակալություն հարցի համար, անկեղծ ասած՝ ես անձամբ չեմ ուսումնասիրել, հանձնարարել եմ տեղակալիս, որպեսզի նա ուսումնասիրի: Ոչ մի խոչընդոտ չեմ տեսնում, այդ հատվածում, եթե չկան խանգարող ավտոտնակներ, որոնք պետք է քանդվեն, մայթն անպայման կկառուցվի: Շնորհակալություն:

### **Հայկ Մարության**

-Պարոն Թումասյան, կխնդրեի ներկայացնել քանի մետր մայթ է արդեն կառուցվել և պլանավորված է կառուցել, որ Դավթաշենի բնակիչներն իմանան:

### **Միքայել Թումասյան**

-Հսկայական տարածություններ են կառուցվում, Դավթաշենի Փիրույան փողոցի խաչմերուկից և Եղվարդի խճուղու խաչմերուկից կառուցվում է ամբողջովին նոր ճեմնուղի, մոտավորապես, 220 մ երկարությամբ և 3 մ-ից ավել լայնությամբ: Հուսով եմ 1 շաբաթից կհանձնեք շահագործման և ունենք ծրագրեր այլ մայթեր կառուցելու, բայց քանի որ հողատարածքները դեռևս կառուցապատված չեն, սպասում ենք կառուցապատողներին, եթե նրանք ստանան շինթույլտվություններ, այդ մայթերի կառուցումն ավտոմատ կդառնա իրենց պարտականությունը: Այդ պատճառով սպասում ենք, բայց մայթերի կառուցումն իմ անմիջական ուշադրության կենտրոնում է, շնորհակալություն:

### **Դավիթ Խաժակյան**

-Պարոն Թումասյան, խնդրում եմ կոնկրետ այս հատվածի՝ հ. 61 մանկապարտեզին կից մայթի կառուցմանը տրամադրել առաջնահերթություն, առկա է ստորագրահավաք, Ձեզ ներկայացվել է, խոսքը դպրոցի աշակերտների և մանկապարտեզի երեխաների անվտանգությանն է վերաբերում, շնորհակալություն:

### **Միքայել Թումասյան**

-Պարոն Խաժակյան, վստահ եղեք ամենակարճ ժամանակահատվածում կիրականացվի:

### **Հայկ Մարություն**

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Հռիփսիմե Առաքելյան, խնդրեմ:

### **Հռիփսիմե Առաքելյան**

-Պարոն քաղաքապետ, կարծում եմ տեղյակ եք, քանի որ այդ օրերին հանդիպումների շրջանակում Սանկտ-Պետերբուրգում էիք գտնվում: Պետք է նշեմ, որ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության նախաձեռնությամբ նախորդ շաբաթ կազմակերպեցինք Երևան քաղաքի կանաչապատման արդի խնդիրների հետ կապված լսումներ:

Հատուկ շնորհակալություն բնապահպանության վարչության պետ պարոն Հակոբյանին՝ աջակցելու և կանաչապատման հետ կապված Երևանում առկա խնդիրները մանրամասն ներկայացնելու համար:

Ցանկանում եմ Ձեզ տեղեկացնել, որ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցությունից ավագանու որևէ անդամ չներկայացավ, չմասնակցեց այդ լսումներին, որոնց ընթացքում շատ հարցեր քննարկվեցին: Այդ հարցերից մեկը ցանկանում եմ բարձրաձայնել և ներկայացնել պարոն Մեսչյանին: Բնապահպանները բարձրացնում էին հետևյալ խնդիրը. նախկինում քաղաքապետին կից գործել է բնապահպանության և քաղաքաշինության հանձնաժողովը, որն

այժմ կիսվել է: Պարոն Մեսչյանը միայն քաղաքաշինության մասով է կոմպետենտ, սակայն քաղաքաշինության հանձնաժողովի անդամների թվում չկան բնապահպաններ, որն իրենց համար շատ խնդրահարույց է: Իրենց պատասխանել են, որ սա բացառապես վերաբերում է քաղաքաշինական խնդիրներին և բնապահպաններն այստեղ անելիք չունեն, սակայն բոլորս հասկանում ենք, որ քաղաքաշինական խնդիրներն առանց բնապահպանական գույրնթաց գործընթացների չեն կարող լինել: Ամեն դեպքում բնապահպանների եզրակացությունը, կարծիքը, տեսակետը յուրաքանչյուր քաղաքաշինական գործընթացում միանշանակ շատ կարևոր և առկա է, կարծում եմ կիսում եք այս տեսակետը:

Պարոն Մեսչյան ցանկանում եմ տեղեկանալ, թե ի՞նչ գործընթացում է սա, արդյոք մտադիր չեք գոնե մեկ բնապահպան, մեկ մասնագետ ներգրավել այս հանձնաժողովում, որպեսզի այդ խնդիրներին բախվելու դեպքում ունենաք նաև բնապահպանական մասնագիտական եզրակացություն: Շնորհակալություն:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Արթուր Մեսչյանը, խնդրեմ:

### **Արթուր Մեսչյան**

-Բնականաբար ես չեմ կարծում որևէ գործընթաց՝ կապված քաղաքաշինության հետ, որտեղ անտեսենք բնապահպանությունը: Դա բացառված է, չգիտեմ այդ տեղեկատվությունը Ձեզ ով է ասել: Թեման հետևյալն է. բացի քաղաքաշինական խորհրդի անդամներից, ունենալու ենք մշտական խորհրդատուներ, որոնք քաղաքաշինության հանձնաժողովի անդամներ չեն, որովհետև նրանք ճարտարապետներ չեն: Իրենք կհրավիրվեն, կմասնակցեն գրեթե բոլոր նախագծային ծրագրերին:

Այն ծրագրերը, որոնք չեն առնչվում բնապահպանության հետ, բնականաբար՝ իմաստ չունի իրենց ներկայությունը, սակայն ցանկության դեպքում, կարող են ներկա լինել: Անհնար է այսօր որևիցե քաղաքաշինական խնդիր լուծել առանց բնապահպանության համաձայնության և ուսումնասիրության: Ես չգիտեմ որտեղից է այդ տեղեկությունը:

### **Հռիփսիմե Առաքելյան**

-Տեղեկությունն այդ օրվա բաց լսումների արդյունքում բարձրաձայնել է հայտնի բնապահպան Կարինե Դանիելյանը, ով նախկինում ներգրավված է եղել այդ աշխատանքներում: Սրտացավություն կա, որպեսզի բնապահպաններից որևէ մեկը ներգրավված լինի այդ աշխատանքային գործընթացներում, քանի որ, իսկապես, հնարավոր չէ քաղաքաշինական գործընթացներ իրականացնել առանց նրանց տեսակետը հաշվի առնելու: Թող լինի մեկ ուրիշը, հարցն անձնավորված չդիտարկեք, պարզապես որ ասում եք

որտեղից գիտեք, ես տեղեկատվության հղումն եմ Ձեզ ներկայացնում, որին ներկա են եղել շատ մասնագետներ, մեր ամբողջ խմբակցությունը և բնապահպանության վարչության պետը: Շնորհակալություն:

### **Արթուր Մեսյան**

-Մոտավորապես մեկ շաբաթ առաջ Տիկին Դանիելյանը եղել է ինձ մոտ, բավականին երկար, հետաքրքիր և բովանդակալից զրույց ենք ունեցել: Մենք պայմանավորվեցինք, որ այսպես ենք աշխատելու քաղաքաշինական խորհրդի հետ, դրա համար ես զարմացած եմ: Ինձ թվում էր, որ բոլոր հարցերը՝ կապված մեր հարաբերությունների հետ, պարզված էր: Շնորհակալություն:

### **Հռիփսիմե Առաքելյան**

-Երկրորդ հարցս հնչեցնեմ, որի շուրջ, իհարկե, բազմիցս խոսել եմ և կրկին կանդրադառնամ այդ խնդրին: Հոկտեմբեր ամսից ինչ մենք գործունեություն ենք ծավալում որպես ավագանու անդամ, այս խնդրի մասին պարբերաբար բարձրաձայնում եմ, որի արդյունքում մենք քաղաքային իշխանությունից միշտ մարդիկ ենք գործուղում տվյալ վայրը: Մարդիկ գնում, գալիս են, բայց տեղից շարժվող որևէ գործընթաց չեմ տեսնում: Խոսքը Լեռնյի փողոց հ. 35 տան մասին է: Մեկ փաստ կարող եմ ի ուրախություն արձանագրել, որ վերջապես Կենտրոն վարչական շրջանի ղեկավարը գտնվել է այդ վայրում: Սա կարծես թե ամենամեծ ձեռքբերումն է իմ բարձրացրած հարցի շուրջ:

Պարոն Մնացականյանը եղել է այնտեղ, ցավոք, իր ֆիզիկական կառուցվածքի պատճառով չի կարողացել անգամ այդ տան շենքից ներս մտնել, որովհետև դա ուղղակի հնարավոր չէ: Դա մի փոքր հյուղակ է, կրկին նույն բնորոշիչները կասեմ: Բոլորը շատ տխրել են, ասել են այս ինչ խայտառակ իրավիճակ է և գնացել են: Պետք է արձանագրեմ, որ սոցիալական ապահովության վարչության պետ տիկին Զաքարյանը նույնպես եղել է այնտեղ, փորձել են ինչ-որ բանով օգնել, ֆինանսական որոշակի աջակցություն է տրամադրվել՝ **18.000** դրամ, որը բնականաբար տվյալ ընտանիքի խնդիրը չի լուծում:

Պարոն քաղաքապետ, հիմա կարող եմ ասել, Դուք էլ գնացեք տեսեք: Դուք էլ կգնաք կտեսնեք, կասեք, այո, սոսկալի է, բայց այդ խնդիրը չի լուծվի: Խոսքն այդ մարդկանց ֆիզիկական գոյության մասին է, առաջիկայում եղանակները կցրտեն, մենք չենք կարող ասել, թե այս ընտանիքի համար այդ հողաշեն տարածքում բնակվելն ինչ հետևանք կունենա: Ցանկանում եմ տեղեկանալ Կենտրոն վարչական շրջանի ղեկավար պարոն Մնացականյանից, թե ինչ կարող է ասել հիմա այս հարցի վերաբերյալ: Ես մեկ տարի այս խնդրի շուրջ խոսում եմ, արդյունքում պարբերաբար միայն հյուրեր ենք ընդունում այդ տանը:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Վիկտոր Մնացականյանը, խնդրեմ:

### **Վիկտոր Մնացականյան**

-Տիկին Առաքելյան, չգիտեմ ինչ էք սպասում ինձնից, բայց ասեմ, որ իսկապես մի քանի անգամ եղել ենք և՛ ես, և՛ իմ տեղակալը, և՛ կոմունալ ծառայության աշխատակիցները: Կարծում եմ, եթե այդքան անհանգստացած էք, պետք է Ձեզ տեղեկացրած լինեին, որ մենք բանակցում ենք իրենց հետ: Կան հարակից բնակիչներ, ովքեր դեմ են, որպեսզի այդ տունը քանդվի և ծառը կտրվի, այդտեղ խնդիրը ծառն է:

Պարոն քաղաքապետ, իրականում վիճակը շատ ծանր է, ծառը բերել է շենքի և տանիքի դեֆորմացիայի: Մենք անգամ մեր կոմունալ բաժնի և մեր պարզևավճարներից մի ֆոնդ ենք առանձնացրել, քար ենք գնել: Պետք է արդեն մոտենայինք այն հարցին, թե ով կարող է մեզ օգնել որպես, այսպես ասած, բիզնեսի սոցիալական պատասխանատվություն, հարակից բիզնեսների հետ և բնակիչների հետ խոսեինք կառուցապատման հարցով, որովհետև իրականում շատ փոքր է բնակարանը: Հարցը մի քիչ երկարեց, որովհետև հարակից տարածքում՝ ընդամենը **10-20** մ հեռավորության վրա, «Փակ շուկա» սուպերմարկետի սեփականատերը սկսել է գնել բոլոր տները: Արդեն մոտավորապես, եթե չեմ սխալվում, **2000** քմ գնել է, մենք առաջարկել ենք, կարող է հերթից առաջ նաև այդ տունը գնեն, որովհետև ինչ-որ ինվեստիցիոն ծրագրեր ունեն այդտեղ: Սպասում ենք իրենց պատասխանին, դրա համար են այս պահին կանգ առել մեր բանակցությունները: Քարը մենք արդեն ունենք, Կենտրոն վարչական շրջանի աշխատակիցների ուժերով մենք դա կարող ենք իրականացնել: Տիկին Առաքելյան, եթե Դուք նշեք, որ մասով ենք պարտական այդ շենքի հարցը լուծել, այսինքն՝ բնակիչներին տեղափոխել, ես կպատասխանեմ ավելի մանրամասն:

### **Հռիփսիմե Առաքելյան**

-Մենք Արցախի փողոցի հետ կապված լուծեցինք այդ խնդիրը, որը երկար ժամանակ չարչրկված հարց էր: Ես ուրախ եմ, որ Դուք այնտեղ եղել էք, քանի որ այնտեղ լինելու արդյունքում Դուք տեսել էք, որ դա տուն կոչել ուղղակի հնարավոր չէ, որտեղ ապրում է ընտանիք: Պարտավորված չենք ռ՞րն է: Երևանի քաղաքային իշխանությունն ենք, Ձեր վարչական շրջանում է դա գտնվում, եթե մեր երևանցու, բնակչի կյանքին վտանգ է սպառնում դա նաև մեր խնդիրն է:

### **Վիկտոր Մնացականյան**

-Տիկին Առաքելյան ընդամենը մի փողոց այն կողմ՝ Կոնդում, ունենք հարյուրավոր այդպիսի տներ: Ձեր նշած Արցախի փողոցի դեպքում, այնտեղ կա սեյսմիկայի առկայություն:



Դուք ունեք սեյսմիկ որևէ հավասագիր, թե ինչ վիճակում է այդ տունը:

**Հոփսիսիմե Առաքելյան**

-Իսկ Դուք այդտեղ տուն տեսե՞լ եք:

**Վիկտոր Մնացականյան**

-Իհարկե, ուղղակի անհարմար է մտնելը:

**Հոփսիսիմե Առաքելյան**

-Ես ցավում եմ, որ պարոն Իսախրյանն ընդհանրապես չի արձագանքում այս հարցի վերաբերյալ: Ինքը պարբերաբար այնտեղ եղել է և շատ լավ գիտի, որ դա տուն չէ:

**Վիկտոր Մնացականյան**

-Ի դեպ, տեղեկացնեմ, որ պարոն Իսախրյանը ևս ֆինանսական աջակցություն է ցուցաբերել այդ քարը գնելուց, ինչպես նաև իմ մի պարզևավճարն ամբողջությամբ գնալու էր այդ տան համար: Մենք ցանականում էինք այդ ակցիան ավարտել, ուղղակի ուզում էինք «Փակ շուկա» սուպերմարկետի սեփականատիրոջ հետ բանակցություններն ավարտել, այդ պատճառով, կարծում եմ, մեկ ամիս հետո կպատասխանենք:

**Հայկ Մարության**

-Շնորհակալություն: Այս ընթացքում բազում նման դեպքեր են եղել, կոնկրետ երկուսը, որոնք տպավորվել են, մշակույթի գործիչներ են եղել, նրանցից մեկին իմ ընդունելության օրն ընդունել եմ: Շատ օրյեկտիվ պատճառներով այդ հայտնի մարդը և իր ընտանիքը հայտնվել էին դրսում: Բավականին տարիքով է և դժվար կարողանա աշխատել այդ գումարը, որպեսզի բնակարան գնի: Եկել ու խնդրում էր՝ արդյոք քաղաքապետարանը կարո՞ղ է իրեն տուն տրամադրել: Ես բացատրեցի, որ դա մեր լիազորությունների մեջ չի մտնում, այդպիսի ծրագրեր չենք իրականացնում:

Շատ հաճախ դրսում մոտենում են ինձ և զրուցում հետս: Մոտեցավ մեր մշակույթի հարգարժան գործիչներից ևս մեկը, ով աշխատում է Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում: Նույն վիճակում էր, ընդհանրապես տուն չունեք, ապրում են վարձով, խնդիր ունեն վարձը տալու, դրսում մնալու: Ես, իհարկե, մեծ ցավով լսեցի այդ ամենը, որովհետև դա իմ պարտականությունն էր, բայց ներողություն խնդրելով, ասացի, որ քաղաքապետարանը լիազորությունը չունի բնակարաններ տրամադրելու այդ մարդկանց:

Ընդունելությունների ժամանակ մեծամասամբ գալիս են այսպիսի խնդիրներ ունեցող մարդիկ: Մի կին էր եկել, ով մեր համակարգի աշխատակից է, ամուսնավուծված է և երկու երեխա ունի: Այս պահին քանի որ աշխատավարձն էլ ցածր է, խնդիր ունի երկու երեխայի հետ դուրսը մնալու: Իրեն գումար է անհրաժեշտ, որպեսզի կարողանա վարձը վճարել: Քանի

որ տները թանկացել են, վարձը նույնպես թանկացնում են, չի կարողանալու վճարել և կհայտնվի դրսում: Նա ինձ հարցնում էր. «Պարոն քաղաքապետ ես հիմա ի՞նչ եմ անելու»: Ստիպված նույն պատասխանը տվեցի, ես չեմ կարող ասել, որ առաջին 5-ին հատկացվի բնակարան, իսկ մնացած հազարավոր մարդկանց՝ ոչ, վերջացավ: Մա, ցավոք սրտի, այն պատասխանն է, որ տալիս է Երևանի քաղաքապետը բնակիչներին, որովհետև իր լիազորությունների մեջ նման գործառույթ չի մտնում, ծրագիր չկա:

Եկեք ավագանու անդամներով որոշում ընդունենք, որ սա մեր բյուջեն է, որից որոշակի գումար նախատեսենք, բնակարաններ գնենք և տրամադրենք **10** ընտանիքի: Որոշենք ինչ պարամետրերով ենք դա իրականացնելու, այդ **10** ընտանիքին տրամադրենք, ասենք սա արել ենք:

Այստեղ որ գալիս ենք, չենք ասում այդ հարցը մի բարձրացրեք, բայց ես ինքս կարող եմ հաջորդ նիստին ինձ հանդիպած մարդկանց խնդիրները ներկայացնել: Ինչ կարող ենք անել, ես դրա պատասխանը չունեմ, քաղաքապետարանի լիազորություններից դուրս է: Եթե ուզում եք հատուկ վերաբերմունք կոնկրետ այդ մարդուն, շատ լավ, նախագիծ ներկայացրեք, ավագանին կարող է գույք նվիրաբերել, նախ գնել, հետո ձեր որոշմամբ նվիրաբերել այդ մարդուն: Այդ դեպքում, ես որպես քաղաքապետ լիազորություններ ունեմ ձեր որոշումն ի կատար ածելու:

Հարցին կանդիդատնա քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը, խնդրեմ:

### **Հրաչյա Սարգսյան**

-Պարոն քաղաքապետ, ճիշտ է այս հարցը մի քանի անգամ հնչեցվել է, բայց չի ասվում նաև այն փաստը, որ մի քանի անգամ, դեռ հոկտեմբեր ամսից և դրանից առաջ, իրենց առաջարկվել է, որպեսզի այդ բնակարանը վաճառեն, բայց իրենք չեն համաձայնվել: Ինձ մոտ կասկած է առաջանում, որ, եթե նույնիսկ համայնքը բնակարան գնի ու նվիրաբերի իրենց, իրենք չեն տեղափոխվելու, քանի որ բնակվել են այդտեղ և ցանկություն կունենան երևի Կենտրոն վարչական շրջանում բնակվելու: Խնդրում եմ, եթե իրենց հետ շփվում ենք կամ խոսում ենք, այդ փաստերն էլ արձանագրել, քանի որ միակողմանի է ստացվում: Մենք ներկայացնում ենք, որ համայնքն ընդհանրապես չի աջակցում, կամ չի ցանկանում ինչ-որ ձեռք մեկնել այդ ընտանիքին, իսկ իրենց կողմից ամեն ինչ իդեալական է:

### **Հայկ Մարության**

-Ես ուզում եմ ասել, որ եղել են վթարային շենքեր, որտեղից բնակիչներին մենք տարհանել ենք, որովհետև վտանգ է եղել, վարձակալել ենք բնակարան, տվել ենք իրենց, որպեսզի իրենք անվտանգ ապրեն, այնուհետև մեր ստուգող մարմինը գնացել, տեսել է, որ

մեր տված բնակարանը տվել է վարձով, ինքը վերադարձել, բնակվում է այն վտանգավոր տեղում, որը մինչև այդ ասում էր, որ առաստաղը կրնկնի գլխին, ինձ շուտ բնակարան տվեք: Բնակարանը տվեցինք, ինքը վարձով է տվել, եկել այստեղ է ապրում, ցավոք սրտի, այսպիսի դեպքեր էլ են լինում:

#### **Հոփսիսիմե Առաքելյան**

-Պարոն քաղաքապետ, պարոն Սարգսյանը դիտարկում արեց, նշեմ, որ երբ ինձ տեղեկացրեցին, որ նման առաջարկ է եղել, այդ մարդկանց հետ շփվեցինք, հարցրեցինք, ասացին, որ ոչ ոք իրենց տուն չի էլ առաջարկել, որ իրենք էլ ասեն չենք գնում ուրիշ տեղ: Պարոն Սարգսյան, այդպիսի բան չի եղել, մարդկանց ուրիշ տեղ տուն չեն առաջարկել, որ իրենք էլ ասեն՝ չէ, մենք պետք է մնանք փոքր կենտրոնում: Մեր ներկայիս քաղաքային իշխանությունների կողմից ընդհանրապես նման բան չի առաջարկվել, նախկիններն էլ չեն առաջարկել: Նախկիններից որևէ մեկը չի էլ գնացել այդտեղ: Ես ուրախ եմ, որ գոնե հիմա մեր քաղաքային իշխանությունից մի քանի մարդ ոտք դրեցին այդ թաղամաս ու տեսան ինչի մասին է խոսքը: Նախկինների հետ միայն նամակների մակարդակով է շփում եղել, ոչ ոք անձամբ չի էլ գնացել:

#### **Հայկ Մարության**

-Վստահեցնում եմ Ձեզ, մենք մեր լիազորություններից դուրս ամեն ինչ անում ենք, որպեսզի այդ մարդկանց ձեռք մեկնենք: Լիազորությունների սահմաններում մենք պարտավոր ենք անել, իսկ լիազորություններից դուրս՝ փորձում ենք ամեն ինչ անել: Եթե ուզում եք այս հարցին զլոբալ լուծում տալ, ներկայացրեք նախագիծ, ասեք գնում ենք բնակարան, նվիրում ընտանիքներին, թող ավագանին որոշում կայացնի:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Մեսրոպ Պապիկյան, խնդրեմ:

#### **Մեսրոպ Պապիկյան**

-Հարցս վերաբերում է բնակֆոնդին: Ինչպես նշեց Լևոն Զաքարյանը՝ Արցախ փողոցի հ. 2 շենքի, բնակիչների մի մասը չցանկացան տեղափոխվել նոր բնակարաններ, քանի որ, նախկինում ապօրինությունների հետևանքներով, բնակիչները տարիներ շարունակ զրկվել են իրենց բնակարաններից և իշխանության հանդեպ անվստահություն է առաջացել: Ինչպես նշեցիք, երբ բնակիչների առաջին մասը տեղափոխվի նոր բնակարաններ, իշխանության հանդեպ վստահություն կառաջանա:

Ցանկանում եմ իմանալ, ինչ ծրագրեր կան Երևանի բնակֆոնդը մեծացնելու և ապագայում վթարային շենքերից բնակիչներին վերաբնակեցնելու վերաբերյալ:

#### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը, խնդրեմ:

## **Հայկ Մարգարյան**

-Այս պահին վերաբնակեցման գործընթացը, ինչպես արդեն նշել ենք, մոդելավորված է բացառապես «մասնավոր» և «համայնք» համագործակցության շրջանակներում: Այս օրենսդրությունը երբ ընդունվի Ազգային ժողովի կողմից, ավելի հեշտ և կանոնակարգված կիրականանան այս համագործակցությունները: Այս պահին նախագծում ներառված են չորս չորրորդ կարգի վթարային շենքեր: Անցած նիստի ժամանակ պարոն Խաժակյանը նույնպես բարձրացրեց այս հարցը, և առաջարկը, որը հնչեց, այս պահին քննարկման փուլում է:

Այժմ փորձում ենք ազատել հնարավոր հողատարածքներ բնակարանային շինության համար, որտեղ կիրականացվեն ներդրումային նախագծեր՝ այն պայմանով, որ քաղաքը կստանա այդ շինարարությունից իր բնակֆոնդը, որը կտրամադրվի չորրորդ կարգի վթարային շենքերի բնակելի ֆոնդերի վերաբնակեցման նախագծին:

Այսօր մեծ խնդիր ունենք հողատարածքների հայթայթման հետ կապված, որովհետև քաղաքի ամբողջ հողային ֆոնդը զգալիորեն սպառված է մասնավորությունների արդյունքում: Արգումանյան փողոց հ. 10 շենքի համար այժմ փնտրում ենք հարմար բնակելի շինարարության տարածք, որպեսզի ներդրողը բազմահարկ շենք կառուցի և վերաբնակեցնի: Շատ բարդությունների ենք առնչվում, չկան նման հողատարածքներ: Մեր այսօրվա միակ հեռանկարային մոդելը՝ դա հաջորդական, շղթայական տեղափոխումն է: Այսինքն՝ այժմ Արգումանյան 10, 17 և 8ա տարածքները, երբ կառուցապատվեն դրանց տեղում կազատվեն նոր տարածքներ, որտեղ նոր գուգահեռ շղթայական երեք շենքեր կվերակառուցվեն և հաջորդ շենքերը, երբ կտեղափոխվեն նոր շենքեր, այդ տարածքները նորից կվերակառուցվեն նոր մոդելով:

Խնդիր կառաջանա մասնավորապես բազմահարկ շենքերի դեպքերում, որովհետև հինգհարկանի շենքի փոխարեն տասնհինգհարկանի շենք կառուցելու դեպքում բիզնես մոդելն ստանում է իր տրամաբանությունը: Տասնհինգհարկանի շենքի դեպքում նորից տասնհինգ հարկ կառուցել՝ բիզնես տրամաբանություն գտնել հնարավոր չէ: Այս դեպքում պետք է գլոբալ լուծումներ փնտրել: Խոսքը կարող է վերաբերել բնակարանների պարտադիր ապահովագրության համակարգի քննարկմանը, որը կապահովի համապատասխան ֆոնդեր երկար տարիների ընթացքում այդ շենքերի պահպանման համար: Պարոն Մեսչյանի հետ քննարկել ենք քաղաքում իրականացվող ցանկացած շինարարության պարագայում Երևան քաղաքի մասնաբաժնի քեյսը:

## **Հայկ Մարության**

-Կհավելեմ, որ այդ հողատարածքների բացակայությունը խնդիր է առաջացնում նաև ներդրողների համար, քանի որ ցանկանում են աճուրդով հողատարածք գնել և

կառուցապատումներ իրականացնել քաղաքի կենտրոնական հատվածներում: Երեկ այս հարցի շուրջ քննարկումներ ենք ունեցել, և պետք է սկսենք շարժվել այն տրամաբանությամբ, ինչպես անում են ուրիշ շատ քաղաքներում, որ քաղաքները զարգանան ոչ միայն վերև, այլ ընդարձկվեն: Պետք է հասկանալ, որ եթե, քաղաքի կենտրոնական մասում այլևս չկան համապատասխան տարածքներ կառուցապատելու համար, քաղաքը պետք է զարգանա դեպի արևելք, արևմուտք, հյուսիս, հարավ, որպեսզի կառուցապատումները լինեն նորմերին համապատասխան՝ կանաչ տարածքները պահպանվեն, հարակից շենքերը միմյանց շատ մոտ չլինեն և այլն:

### **Մեսրոպ Պապիկյան**

-Երկրորդ հարցս հնչեցնեմ: Վերջերս ուստիկնություն հարցում եմ կատարել վերջին տասը տարվա ընթացքում ավտովթարներից զոհերի քանակի վերաբերյալ: Ցավով պետք է նշեմ, որ նվազման ոչ մի միտում չկա, այլև տարեկան աճում է այդ ցուցանիշը: Լինելով քաղաքային իշխանություն՝ մենք ստանձնում ենք քաղաքացիների անվտանգության ապահովումը: Շատ այլ երկրներում գոյություն ունի ավտովթարներից մահվան 0% ցուցանիշի փաստաթուղթ: Խաչմերուկներում գործում են այնպիսի մեխանիզմներ, որի հետևանքով նվազում են ավտովթարների և զոհերի թիվը:

Ի՞նչ նախաձեռնություններ կան, որպեսզի մեր քաղաքում նույնպես գործի այդպիսի մեխանիզմ: Հավելեմ՝ մի քանի ամիս առաջ «Նորմալ Երևան» նախաձեռնությունը հարակից խաչմերուկի համար լուծում էր գտել, որտեղ տեղի ունեցավ մեր աշխատակցի դեպքը, թե ինչպես կազմակերպել հետիոտնի անցումային հատվածը, լուսավորությունը, որպեսզի նման դեպքերի ռիսկը նվազի:

### **Հայկ Մարություն**

-Այո, ցավով նշեմ, որ այսօր Երևանը բավական վտանգավոր է ոչ միայն հետիոտնի, այլև վարորդի համար: Այս հարցին պետք է զլոբալ լուծում տրվի: Քաղաքապետարանի նախաձեռնություններին պետք է միանա նաև ուստիկնությունը և այլ գերատեսչություններ: Իմ կողմից արդեն տրվել են հանձնարարականներ, որպեսզի Երևանի անցումներում կիրառվեն հատուկ լուսավորություններ: Այս հարցի շուրջ պարոն Հրայր Մարգարյանի հետ աշխատանքներ ենք իրականացնում և շուտով Հայկ Մարգարյանը կմիանա գործընթացին՝ ֆինանսական մասով: Քանի որ, ամբողջ քաղաքում հնարավոր չէ միանգամից իրականացնել այդ գործընթացը, պետք է առաջինը գույքագրվեն մուլթ և վտանգավոր անցումները և լուսավորվեն:

Ձեր նշած քաղաքներում, վթարները կանխելու համար, առաջին հերթին նվազեցրել են ավտոմեքենաների թույլատրելի առավելագույն արագության շեմը: Եվրոպական շատ

երկրներում թույլատրելի առավելագույն արագությունը **50** կմ ժամ է, և եթե մենք պատրաստ ենք՝ **60** թույլատրելի արագությունը նվազեցնենք **50** կմ ժամի: Առավել ևս ունենք հատվածներ, որտեղ թույլատրելի առավելագույն արագությունը **70** կմ ժամ է, այն դեպքում, երբ տվյալ հատվածում բավական երկար հետիոտնային անցում է գծանշված: Ինձ համար անընդունելի է **8** շաբթ ունեցող փողոցի վրա գծանշված հետիոտնային անցումը, որտեղ չկա լուսացույց և թույլատրելի առավելագույն արագությունն այդ հատվածում **70** կմ ժամ է:

Վերգետնյա և ստորգետնյա անցումների հետ կապված նշեմ, որ ես անձամբ մոնիթորինգ եմ անցկացնում, շաբաթ, կիրակի օրերին քաղաքացիների հետ զրուցում եմ: Շատ դեպքերում, երբ առկա են վերգետնյա կամ ստորգետնյա անցումներ, մարդիկ զլանում են և գրեթե չեն օգտվում այդ անցումներից, նախընտրում են արագ և կարճ տարբերակը, որի արդյունքում հաճախ պատահում են ողբերգական դեպքեր: Եթե քաղաքն ամբողջությամբ պատենք վերգետնյա և ստորգետնյա անցումներով, սակայն քաղաքացիները շարունակեն նման կերպ հատել ճանապարհը, դա կնշանակի ծախսվում են մեծ գումարներ, սակայն դա չի տալիս ոչ մի արդյունք և դա լուծում չէ:

Նորից նշեմ, որ գոնե ոստիկանությունը պետք է ունենա հատուկ ստորաբաժանում, որը կվերահսկի այդ պահին ճանապարհը խախտումով հատողներին: Առաջնային, որ կարող ենք անել այս հարցի կարգավորման համար, դա արագության նվազեցումն է, որը, վստահ եմ, կտա իր դրական արդյունքը: Չեմ կարծում կխոչընդոտի քաղաքի երթևեկությունը: Այս տարի նախատեսվում է մի քանի վերգետնյա անցումներ կառուցել և հետիոտնային անցումների մոտ լուսացույցներ տեղադրել:

Հարցին կանդրադառնա քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը, խնդրեմ:

### **Հրաչյա Սարգսյան**

-Պարոն քաղաքապետ, Ձեր հանձնարարականի համաձայն, մենք արդեն ոստիկանության հետ համաձայնեցրել ենք այն **18** կետերը, որտեղ կտեղադրվեն կարգավորող լուսացույցներ: Այս պահի դրությամբ տվել ենք նախագծման, մեկ ամսից մրցույթ կհայտարարենք և մինչև սեպտեմբերի վերջ կարծում եմ կունենանք կարգավորող լուսացույցներ **18** կետում, որտեղ վթարները բավական շատ են լինում:

### **Հայկ Մարության**

-Գուքագրվում են ամենավտանգավոր կետերը և այդտեղ լուծումներ են տրվում, բայց, այնուամենայնիվ, այս հարցին գլոբալ լուծում է անհրաժեշտ: Այս պահին խնդրում եմ ձեզ՝ ավագանու հարգելի անդամներ, քննարկումներ ունենալ Երևանում առավելագույն

արագությունը նվազեցնելու հարցի շուրջ: Կարծում եմ այս փոփոխությունը բավական մեծ արդյունք կտա:

Հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Անի Խաչատրյան, խնդրե՛մ:

### **Անի Խաչատրյան**

-Շնորհակալություն, քաղաքապետարանի առողջապահության վարչությունը շաբաթը մեկ անգամ տեղեկատվություն է տարածում, որ Երևանում այս շաբաթ ծնվել է X քանակությամբ տղա, Y քանակությամբ աղջիկ: Դիմում եմ վարչության պետին, պարոն Բաբինյան Ձեզ, բացի սիրուն բալիկների նկարներով ծնելիության թվի վերաբերյալ տեղեկատվություն տարածելուց, որն ի դեպ Ձեր վարչության ջանքերի արդյունքը չէ, ինչով է զբաղվում Ձեր վարչությունը:

Առողջապահության ոլորտի Ձեր վարչության պատասխանատվության տակ գտնվող հատվածում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնցից մեկը, վերջերս բուռն քննարկման առարկա դարձավ «Հայ ծնողների ակումբ» ֆեյսբուքյան էջում: Այնտեղ նաև ակտիվ մասնակցություն ուներ առողջապահության նախարարի խորհրդական, Երևանի ավագանու անդամ Աշոտ Սարգսյանը:

Հարցում էր արվում պոլիկլինիկաների կողմից տրամադրվող անվճար դեղորայքի վերաբերյալ, մասնավորապես՝ վիտամին D-ի անվճար տրամադրելու վերաբերյալ: Հարյուրավոր ծնողների արձագանքից պարզ դարձավ, որ ոչ միայն չեն ստացել դեղորայքը, այլ նույնիսկ տեղյակ չեն, որ պետությունն անվճար դեղորայք է տրամադրում: Իմ բալիկը հաշվառված է տխրահռչակ 19 պոլիկլինիկայում, ես, որպես ծնող, երբևիցե տեղեկատվություն չեմ ստացել անվճար դեղորայքի տրամադրման վերաբերյալ: Ու՞ր են գնում այդ դեղերը, պարոն Բաբինյան, պատահաբար Ձեր մտերիմներից մեկը, միգուցե, դեղատու՞ն ունի:

Մեկ այլ խնդիր պոլիկլինիկաների բուժկազմն ուղղորդում է հիվանդներին մասնավոր լաբորատորիաներ՝ պատճառաբանելով պոլիկլինիկաների լաբորատորիաների անալիզների ոչ արժանահավատ պատասխանները: Այնինչ՝ պոլիկլինիկաները հազեցած են տեխնիկայով: Օրինակ՝ տխրահռչակ նույն 19 պոլիկլինիկայի մամոգրաֆիայի սարքը, որ 1,5 տարի չէր աշխատում, մենք բոլորս այնտեղ ներկա ենք եղել, մամուլում էլ կա այդ մասին տեղեկատվություն, դա վառ օրինակ: Սա վկայություն է այն մասին, որ ատկատի մեխանիզմը նորից շարունակում է գործել, պարոն Բաբինյան:

Ոլորտի մեկ այլ շատ կարևոր խնդիրը պատվաստումների վերաբերյալ է, որի իրազեկումը գոյություն չունի պոլիկլինիկաների կողմից:

Անցնենք մեկ այլ, ավելի նուրբ հարցի, վերջերս դրա անունը վերինգ են դրել: Երևան քաղաքում կա ընդամենը մի քանի կառավարման հանձնված բուժհաստատություն և այդ հաստատությունների շուրջ, չգիտես ինչու, Ձեր անունն է շոշափվում, պարոն Բաբինյան: Մասնավորապես, նորից կրկնեմ, տխրահռչակ **19** պոլիկլինիկայի բաժնի պետերից մեկը Ձեր հորաքույրն է, Էրեբունու «Գրիգոր Նարեկացի» ծննդատան փոխտնօրենը Ձեր քույրն է: Այս բուժհիմնարկների, ինչպես նաև Կարդիոլոգիայի ինստիտուտի դիահերձարանի վերաբերյալ ևս շրջանառվում են լուրեր, որ Դուք ունեք մասնաբաժին և Ձեր ենթակայության տակ գտնվող Երևան քաղաքի շտապօգնության ուղղորդում եք սովյալ դիահերձարան, պարոն Բաբինյան:

Խնդրում եմ բացատրություն տալ բոլոր այս լուրերի վերաբերյալ: Հավելեմ, որ ծուխն առանց կրակ չի լինում: Փորձը ցույց է տալիս, որ մեր փոքրիկ քաղաքում, սովորաբար, շրջանառվող լուրերը միշտ ճիշտ են դուրս գալիս:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի առողջապահության վարչության պետ Կամսար Բաբինյանը, խնդրեմ:

### **Կամսար Բաբինյան**

-Շնորհակալություն հարցի համար: Սկսեմ վերջից, իմ հորաքույրն աշխատում է թիվ **19** պոլիկլինիկայում՝ որպես մայրապետ: Այո, ճիշտ է քույրս աշխատում է «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոնում՝ որպես փոխտնօրեն: Ձեր բերած այն պնդումները, որ ես որևիցե առնչություն ունեմ նշված հիմնարկների հետ, իրականությամբ բացարձակ չի համապատասխանում, Դուք կարող եք ստուգել:

Ինչ վերաբերում է պատվաստումներին՝ նշեմ, որ Դուք հետևում եք Երևանի քաղաքապետարանի առողջապահության վարչության պաշտոնական էջին, որ մենք բացել ենք: Այնտեղ, եթե Դուք հետևում եք երեխաների ծնունդներին, պետք է նաև տեսնեք, որ, մոտավորապես, մեկ շաբաթ առաջ քննարկում է եղել պատվաստումների վերաբերյալ: Պետք է ասեմ, որ ունենք պոլիկլինիկաներ, որտեղ եղել են թերացումներ պատվաստումների ազգային ծրագրի հետ կապված: Կիրառվել են պատասխանատվության միջոցներ այդ պոլիկլինիկաների տնօրենների և այն պատասխանատուների նկատմամբ, ովքեր զբաղվում են պատվաստման գործով:

Անվճար դեղորայքի հետ կապված հարցին ծանոթ ենք, պարոն Սարգսյանի հետ դրա շուրջ բավականին քննարկումներ ենք ունեցել: Ինչպես գիտեմ, վերջերս պարոն Սարգսյանի գլխավորությամբ ավագանու անդամներից այցելել են թիվ **20** պոլիկլինիկա, որովհետև վիտամին **D**-ի հետ կապված հիմնական խոսակցությունները գալիս էին այդ պոլիկլինիկայից: Տնօրենի կողմից բոլոր փաստաթղթերը ներկայացվել են, որ բալիկները ստանում են: Եղել է



դեպք, որ այդ օրը չի եղել վիտամին **D**, մյուս օրը ծնողին տրամադրվել է այդ վիտամին **D**-ի քանակը: Եթե կան որևիցե խնդիրներ Ձեր կողմից բարձրացված ասկատի հետ կապված, կխնդրեմ Ձեզ առարկայական այդ տվյալները տրամադրեք մեզ, որպեսզի դիմենք ուստիկանություն, համապատասխան մարմիններ, որ զբաղվեն այդ հարցերով:

#### **Անի Խաչատրյան**

-Տարիներ շարունակ Ձեր գործառույթն ի՞նչ է եղել, որ պատվաստանյութերի իրազեկման և մնացածի հետ կապված նոր էք զբաղվում:

Ինչ վերաբերում է պատասխանի սկզբին, ասեմ, որ շահերի բախում եմ այստեղ տեսնում: Ձեր մերձավորների աշխատանքի հետ կապված, սովորաբար, շահերի բախումն ուրիշ անունների ներքո է քողարկվում, որ Դուք ասացիք ես կապ չունեմ այդ ամենի հետ: Եվս մեկ անգամ հավելեմ, որ ծուխն առանց կրակ չի լինում, շնորհակալություն:

#### **Կամսար Բաբինյան**

-Շնորհակալ եմ, պատվաստումների հետ կապված ասեմ, որ առաջին անգամ չէ որ մենք պատասխանատվության միջոցներ ենք ձեռնարկում:

#### **Անի Խաչատրյան**

-Երկրորդ հարցս ուղղված է Արաբկիր վարչական շրջանի ղեկավարին: Ձեզ մոտ, կարծես թե, կոլեկտիվի հետ խնդիրները չեն հարթվում: Ինչու՞ է այդպես, ինչի՞ց են առաջացել խնդիրները և ինչպե՞ս էք պատկերացնում դրանց լուծումը:

#### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Արամ Դանիելյանը, խնդրեմ:

#### **Արամ Դանիելյան**

-Շնորհակալություն տիկին Խաչատրյան: Ձեր կողմից մի փոքր առաջ արված արտահայտությունը, որ ծուխն առանց կրակ չի լինում, կարծում եմ այս դեպքում առանց կրակ ծխի մասին ենք խոսում: Կոլեկտիվում իրական արժեք ստեղծող աշխատակիցները, ովքեր այս իրականության մեջ արդեն ընկալել են, որ աշխատավարձով և առավելագույնը մոտիվացիան կարող է լինել պարզևավճարները, շատ նորմալ աշխատում են: Բավականին բարձր ցուցանիշներ ենք գրանցում աշխատանքի ընթացքում, իսկ մնացած բամբասանքների վրա, կարծում եմ, հարգելի ավագանիների, պարոն քաղաքապետի և մեր գործընկերների ժամանակը պետք չէ վատնել:

#### **Անի Խաչատրյան**

-**30%** պարզևավճար տվել էք ներքին օդակին, **70%** վերին օդակին, ովքեր Ձեր մերձավորներն են: Աղմուկից հետո մյուս ամիս նոր ավելացրել էք մնացածի տոկոսները: Դա

կրակ չի, ինչու՞ մնացած վարչական շրջանների ղեկավարները չունեցան խնդիրներ: Խնդիրը Ձեր մեջ է, որին, կարծում եմ, պարոն քաղաքապետը պետք է լուծում տա:

Ինչ վերաբերում է վարչական շրջանի աշխատակիցների գիտակից լինելու հարցին, Դուք հենց նոր այս դահլիճում աշխատողներին որակում տվեցիք, որը խստիվ դատապարտելի և անթույլատրելի է:

Պարոն քաղաքապետ, Դուք Երևանի քաղաքապետն եք և Ձեր վարչական շրջանների ղեկավարներից մեկը հենց նոր Ձեր աշխատակիցներին տվեց որակում՝ անգիտակից անվանելով, որը բոլորս լսեցինք, շնորհակալություն:

**Հայկ Մարության**

-Անկեղծ ասած՝ անգիտակից բառ չեմ հիշում:

**Անի Խաչատրյան**

-Խոստանում եմ ձայնագրությունը հրապարակել:

**Հայկ Մարության**

-Ձայնագրությունը կնայենք, բայց ես համակարծիք եմ պարոն Դանիելյանի արտահայտած մտքին: Դա ոչ միայն քաղաքապետարանին է ուղղված, այլ ողջ հանրապետությանը: Ես առաջին օրվանից ասել եմ, եթե մարդիկ պատրաստ են նոր Հայաստանի նոր օրենքներով աշխատել, իրենք մեզ համար ողջունելի, ցանկալի և այն պրոֆեսիոնալներն են, ովքեր իրենց ունակությունները կարող են ծառայեցնել մեր հանրությանը: Եթե մարդիկ պատրաստվում են հին օրենքներով շարժվել, ապա իրենք մեր շարքերում տեղ չունեն, սրա մասին է խոսքը: Դուք լավ գիտեք, որ մեր մոտեցումները նույնն են, կարծում եմ Ձեր մոտեցումն էլ է նույնը տիկին Խաչատրյան: Այստեղ այլ կարծիք լինել չի կարող:

**Անի Խաչատրյան**

-Շնորհակալություն, պարոն Դանիելյան խնդրում եմ կանոնակարգը կարդալ և իմացեք, որ ես, որպես ավագանու անդամ, ինչ հարց ցանկանամ, կարող եմ հնչեցնել: Դուք չփորձեք իմ հարցերին որակումներ տալ:

**Հայկ Մարության**

-Տիկին Խաչատրյան, հարցերին ոչ ոք որակում չի տվել, խոսքը վերաբերում էր իր պատասխանին: Պարոն Դանիելյանը նշեց, որ չի ուզում այստեղ զբաղեցնել հարգարժան մարդկանց՝ բամբասանքների մասին լուրեր տարածելով:

Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Լյուդմիլա Մարգարյան, խնդրեմ:

## **Լյուդմիլա Մարգարյան**

-Հարգելի գործընկերներ, օրեր առաջ հանդիպեցի մի նյութի, որը մեծ մտահոգությունների տեղիք տվեց: «Հետք» լրատվական կայքը հետազոտություն էր անցկացրել Երևանի վարչական չորս շրջանում՝ Արաբկիրում, Քանաքեռ-Զեյթունում, Նոր Նորքում, Ավանում, որի արդյունքում պարզվեց, որ վերջին տարիներին մոտ **29** մանկապարտեզ օտարվել է, անցել է ձեռքից ձեռք: Ըստ էության, սկզբնական շրջանում նախկին բարձրաստիճան մարդիկ կամ նրանց կողմից հովանավորյալ մարդիկ սեփականաշնորհել են, հավանաբար, կոպեկներով, հետագայում տարբեր-տարբեր վաճառքների արդյունքում սկզբնական գնորդի հետքերը կորել են: Եվ սա այն դեպքում, երբ մենք բազմաթիվ երեխաներ ունենք, ովքեր տարիներ շարունակ այդ խնդրի առջև են կանգնած, մանկապարտեզ հաճախելու համար հերթագրվում են: Խոսքը միայն վարչական չորս շրջաններից **29** մանկապարտեզի մասին է, պատկերացրեք, եթե ամբողջ քաղաքն ուսումնասիրվի, ինչ փաստերի առաջ ենք կանգնելու:

Հարցս հետևյալն է՝ ունե՞նք լծակներ կամ հնարավորություն, որպեսզի կարողանանք մտածել, թե ի՞նչ ուղղությամբ աշխատանք տարվի, իրավական ի՞նչ հարթության վրա կարելի է աշխատանք տանել, որպեսզի համայնքապատկան այդ շենքերը վերադարձվեն քաղաքին և այդ խնդիրը կարողանանք լուծել: Հասկանում եմ, բարդ խնդիր է, երկարաժամկետ գործընթաց է պահանջվում, սակայն, կարծում եմ, ինչ-որ պահից պետք է սկսել և հասկանալ, որ դա ևս հանցագործություն է, որը կատարվել է ժամանակին և պետք է կարողանալ դրանք վերադարձնել: Դա առաջին հարցը:

## **Հայկ Մարության**

-Նախ՝ մենք ոչ թե կհասնենք դրան, այլ առաջին օրվանից դրանով զբաղվել ենք, նախ սկսել ենք նրանից, թե ինչ կարող ենք այս պահին անել, գույքագրում ենք բոլոր մանկապարտեզները, հասկանում ենք ինչ կազմակերպություններ կան այնտեղ: Այն կազմակերպությունները, որոնք անհասկանալի գործունեություն են իրականացնում, առավել ևս ուղղակի անվճար տրված հիմունքներով, գույքագրում ենք և այդ կազմակերպությունները քիչ-քիչ ազատում են տարածքները:

Սա առաջինը, երկրորդը՝ այս պահին ինչ հնարավոր էր ետ ենք բերել, մեկ մանկապարտեզ էտ ենք բերել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում, որը երևի թե պետք է վերանորոգվի և սկսի գործել: Մնացած մանրամասները կներկայացնի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

## **Տիգրան Վիրաբյան**

-Շնորհակալություն հարցի համար: Ընդհանրապես **2018** և **2019** թվականներին տարբեր կազմակերպությունների կողմից տնօրինվող և առանց իրավական հիմքերի մանկապարտեզների տարածքներից շուրջ **5100** քմ տարածք արդեն վերադարձվել է համայնքին, այդ տարածքներն օգտագործվելու են ըստ իրենց նշանակության:

Ինչ վերաբերում է տարբեր տարիներին՝ տարբեր ճանապարհներով և տարբեր միջոցներով սեփականաշնորհված մանկապարտեզներին և ընդհանուր շենքերին, այդ մասով նույնպես աշխատանք տարվում է:

Պարոն Մարության, ես կուզենայի նշել, որ շատ կարևոր է մեր ավագանիների դերը և նշանակությունը և ԻՄ ՔՍՅԼԸ խմբակցության ավագանիների հետ մենք մի մասնաշենքի մասով արդեն աշխատում ենք: Տիկին Մելքում Մելքումյանը բարձրաձայնել է այդ խնդրի մասին, փաստաթղթերը ներկայացրել է, առանձին ուսումնասիրություն է կատարել այդ մանկապարտեզի մասով և փաստաթղթերը ներկայացվել է, հիմա գործընթացները շարունակաբար տեղի են ունենում: Կխնդրեի ավագանու բոլոր անդամներին, որոնց ուշադրության կենտրոնում հայտնվում են նման տարածքներ, ակտիվ համագործակցեն մեզ հետ, օգնեն, նեցուկ լինեն, որպեսզի կարողանանք այն տարածքների մասով, որոնցում կան իրավական հիմքեր, կարողանանք այդ տարածքները նույնպես վերադարձնել համայնքին: Բնականաբար այդ վերադարձված տարածքներն ուղղվելու են միմիայն մանկապարտեզներում նոր խմբասենյակներ բացելուն և այդ առումով արդեն իսկ աշխատանքային մեծ ճակատ ենք բացել մեզ համար: **5000** քմ բավական ծանրակշիռ տարածք է, որպեսզի կարողանանք առաջին փուլով աշխատել և չենք սահմանափակվել, աշխատանքները շարունակվում են:

Կան կազմակերպություններ, որոնց գործունեությունը տվյալ տարածքներում իրոք կարևոր է համայնքի համար, բխում է համայնքի շահերից և այդ կազմակերպությունների հետ փորձում ենք ընդհանուր լուծում գտնել, որպեսզի և կազմակերպությունը հնարավորություն ունենա շարունակել աշխատանքը և չխանգարի մանկապարտեզների բնականոն գործունեությունը: Շնորհակալություն:

## **Լյուդմիլա Սարգսյան**

-Շնորհակալություն, ճիշտն ասած, իմ մտահոգությունները մասամբ փարատվեցին և ուրախալի փաստ է, որ նման բարդ գործի մեջ կարողացել եք այդքան հաջողություն գրանցել, որը շատ ողջունելի է: Հուսանք, որ գործընթացը շարունակական կլինի և վերջիվերջո կլուծվի պետական մանկապարտեզներից օգտվելու ավելի լայն հնարավորությունը:

Երկրորդ հարցս եմ ուզում բարձրաձայնել. Պարոն Մարության Ձեզ էլ եմ ժամանակին ասել, քաղաքում փոքրիկ շտրիխների միջոցով՝ առանց մեծ ծախսերի հնարավոր է քաղաքը բավականին բարեկարգել և ավելի հաճելի դարձնել: Խոսքը վերաբերում է կանգառներին, վարչական շրջաններ կան, որոնք շատ բարեկարգ են, բայց այնտեղ կանգառները խայտառակ վիճակում են, որը, անկեղծ ասած, նվաստացնում է մարդուն և նման կանգառում կանգնելը հենց առավոտից փչացնում է մարդու տրամադրությունը: Դրանք փոքրիկ ծախսեր պարունակող գործեր են և կարելի է այդ ուղղությամբ աշխատանք տանել:

Անկեղծ ասած՝ Ավան վարչական շրջանի ղեկավարն ինձ խոստացավ այդ հարցով զբաղվել, բայց անցել է երեք ամիս և այդ ուղղությամբ որևէ գործ չի արվել: Որպես օրինակ խոսում եմ Ծարավ աղբյուրի փողոցի վրա գտնվող կանգառի մասին: Ընդորում մի կանգառ է և գտնվում է խայտառակ վիճակում: Կարծում եմ այդ ուղղությամբ պետք է աշխատանք տանել, որը մեծ ծախսեր չի պահանջում, սակայն քաղաքը բավականին բարեկարգ է դարձնում: Շնորհակալություն:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալ եմ տիկին Սարգսյան, ուղղակի ուզում եմ ասել կանգառների վերջնական լուծումը նաև պայմանավորված է տրանսպորտային ցանցի վերջնական լուծման հետ և այսպես, թե այնպես բոլոր կանգառները, որոնք այս պահին կան, միջազգային ստանդարտներին համապատասխան նորմալ վիճակի են բերվելու, նաև ավելանալու են: Բնականաբար, կարծում եմ դրանց լուծումն ավելի շուտ կտրվի, քան տրանսպորտային ցանցինը, քանի որ վերջնական պետք է պատրաստ լինեն բոլոր կանգառները, ճիշտ կահավորված լինեն, ճիշտ վայրում լինեն, որ ավտոբուսները մտնեն և սկսեն շահագործվել: Անկախ ամեն ինչից դա ավելի արագ կլինի, քան ցանցի ներդրումը: Ունենք կոնկրետ գույքագրված կանգառներ, գիտենք ամեն մեկի խնդիրը և ինչպես պետք է ձևափոխվեն:

### **Լյուդմիլա Սարգսյան**

-Հասկացա, որ դեռ անորոշ ժամանակով այդ փոքրիկ խնդիրների լուծումը հետաձգվում է այն տրամաբանությամբ, որ կարող են կանգառները փոխվել<sup>6</sup>:

### **Հայկ Մարության**

-Այո, միևնույն է այդ մեծ ծախսը պետք է անենք, ուղղակի գումարի հարցն է, եթե միևնույն է գումար է ծախսվելու և ընդհանուր լուծում է տրվելու, հիմա կետային ծախս անելով արդյունքի չենք հասնի: Իրականում քիչ չեն այն կանգառները, որոնք պետք է կարգի բերվեն: Կարգի բերելուց հետո հնարավոր է դրանց տեղը փոխվի և, եթե կահավորված լինեն, հնարավոր է տեղափոխելուց վնասվեն և այլն: Սպասում ենք ընդհանուր լուծումով սա տանք: Շատ լավ հիշում եմ մեր խոսակցությունը Ծարավ աղբյուրի փողոցի կանգառի մասին,

քննարկումը եղել է, բայց ուզում ենք նման լուծում տալ: Իհարկե կարող ենք բացառություններ անել, ամենավատ վիճակում գտնվող կանգառները կարգի բերել, սակայն համակարգային ընդհանուր մոտեցումն այդպիսին է լինելու:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Չաքարյան, խնդրեմ:

**Լևոն Չաքարյան**

-Շնորհակալություն, իմ հարցը վերաբերում է սփյուռքի մեր հայրենակիցներին: Երեկ հանդիպել եմ մեր հայրենակցին, ով հուսալքված է, նա այստեղ ունի գնված հող և դրա հետ կապված խնդիր կա: Խնդրիրը կայանում է նրանում, որ իր հարևանն ունի բացված պատշգամբ այդ հողամասի վրա և ինչու եմ ասում հուսալքված է, որովհետև այս մարդը կարծում է, որ իր հարցը ոչ մի կերպ չի լուծվում: Դիմում է տարբեր տեղեր և չի կարողանում վերջնականապես ստանա իր խնդրի պատասխանը: Ես ունեմ լուսանկարներ, որտեղ ակնհայտ երևում է, որ այդ թույտվությունն օրենքի խախտումով է եղել: Ես ուզում եմ բոլորիս հորդորել, թե՛ քաղաքապետարանի աշխատակիցներին, թե՛ իմ գործընկերներին, չնայած կարծում եմ, որ դրա կարիքը չկա, որ մենք պետք է սփյուռքի մեր հայրենակիցների հանդեպ առանձնահատուկ վերաբերմունք ունենաք: Կոնկրետ այս մարդն ինձ ասում է, որ ինքը տատանվում է մշտական մնա Հայաստանում, թե գնա, որովհետև անընդհատ խնդիրների է հանդիպում:

Հարցս ուզում եմ ուղղել Դավթաշեն վարչական շրջանի ղեկավար պարոն Թումասյանին, արդյոք տեղյակ եք այս խնդրի մասին, եթե այո, ասեք ինչ լուծումներ եք տեսնում: Կցանկանայի, որ այս հարցին նաև պատասխաներ քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչություն պետ պարոն Դարբինյանը, եթե այստեղ է, որովհետև ինձ դիմող քաղաքացին ասաց, որ ինքը հեռախոսագրույզ ունեցել է նաև պարոն Դարբինյանի հետ:

**Հայկ Մարության**

-Պարոն Չաքարյան կասեք հասցեն, որպեսզի մարդիկ իմանան, կոնկրետ որ հատվածի մասին է խոսքը:

**Լևոն Չաքարյան**

-Ներողություն եմ խնդրում, Դավթաշեն 3-րդ թաղամաս, 56 տուն հասցեի մասին է խոսքը: Քաղաքացին ունի ծանուցում, որ հունիսի 18-ին դիմել է քաղաքապետարան սույն հարցով, եթե պետք է կարող եմ ասել ծանուցման բանալին: Խնդրում եմ ուղղակի այս քաղաքացուն պատասխանել ոչ միայն գրավոր, քանի որ ինքը լեզուն հասկանալու հետ խնդիր ունի: Հնարավորության դեպքում խնդրում եմ նաև հանդիպում կազմակերպել, որպեսզի նրան հասկանալի լինի խնդրի լուծման տարբերակները:

### **Հայկ Մարության**

-Շատ լավ, շնորհակալություն: Կարծում եմ գործը տեղում պետք է նայել, կոնկրետ գործի բանալիով, որպեսզի հստակ պատկերացնեն խոսքն ինչ խնդրի մասին է:

Հարցին կպատասխանի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետ Ռոբերտ Դարբինյանը, խնդրեմ:

### **Ռոբերտ Դարբինյան**

-Շնորհակալ եմ հարցի համար: Բարձրացրած հարցի հետ կապված ընդամենը տեղյակ եմ, որ գտնվում է ուսումնասիրության փուլում: Ես քաղաքացիների ընդունելության օրն անձամբ ընդունել եմ նշված քաղաքացուն, եթե չեմ սխալվում անունը Դանիել էր: Անձամբ լսել եմ բարձրացված խնդիրների մասին, հորդորել եմ դիմում գրել և ստանալ այն շինթույլտվությունը, որը տրվել է հարևանին, որի հետ կապված կարծես թե կան խնդիրներ:

Նշեմ, որ այս հարցը գտնվում է ուսումնասիրության փուլում, միակ խնդիրը կայանում է նրանում, որ հարևան կառուցապատողը նշված շինությունը կառուցել է, բնականաբար, քաղաքաշինական փաստաթղթերի հիման վրա, այսինքն՝ համաձայնեցված նախագծի շրջանակներում համապատասխանաբար տրվել է շինթույլտվություններ: Ըստ էության, կառույցի շինարարությունը հասել է ավարտի և հարևան կառուցապատողը ներկա փուլում ընդամենը դիմել է ավարտական ակտի փաստագրման համար: Այս հարցի հետ կապված նշեմ, որ **2015թ. մարտի 19-ի հ.596-Ն** որոշումը սահմանում է ակտի մերժման կոնկրետ հիմքեր և այդ համատեքստում ես քաղաքացուն պարզաբանել եմ, որ հարցը կուսումնասիրվի և քաղաքացին կարող է վստահ լինել, որ եթե այդ հիմքերը լինեն, բնականաբար, ավարտական ակտի տրամադրումը կմերժվի:

Նշված դիրքորոշումն ուղղակի վերջնական չէ, բայց քաղաքացու բարձրացված հարցի ուսումնասիրությունից տեղում, այնուհանդերձ գերծ մնալով ակտի կայացման վերաբերյալ կարծիք հայտնելուց՝ նշել եմ, որ **հ.596-Ն** որոշումն ակտի մերժման կոնկրետ նման հիմք չի սահմանում: Բոլոր դեպքերում հարցը ճարտարապետության և քաղաքաշինության վարչության աշխատակիցների հետ համատեղ կուսումնասիրվի և քաղաքացուն կտրվի սպառիչ պատասխան: Հակառակ դեպքում քաղաքացին ստիպված է լիելու շինթույլտվությունը կամ հետագայում տրվելիք ակտը, եթե այդպիսի որոշում կայացվի, բողոքարկել դատական կարգով: Խնդիրը կայանում է նրանում, որ շինթույլտվությունը վկայակոչված խնդիրների լույսի ներքո պետք է ի սկզբանե բողոքարկվեր, շնորհակալություն:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալ եմ պարոն Դարբինյան: Պարոն Զաքարյան, ցավոք սրտի Դուք շատ լավ գիտեք, որ այսպիսի խնդիրները հաճախ են հանդիպում: Առնչվում ենք անգամ այնպիսի

խնդիրների հետ, որ այս պահին շինարարություն է տեղի ունենում, որին դեմ ենք բոլորս, քաղաքապետարանի աշխատակիցները, ավագանու անդամները, բնակիչները, բայց չենք կարող դադարեցնել շինարարությունը, քանի որ շինթույլտվությունը տրված է և կա համապատասխան փաստաթուղթ: Այլ տարբերակ չի մնում, քան որ բնակիչները դիմեն դատարան և որպես հայցի ապահովման միջոց այդ պահին դադարի շինարարությունը: Սակայն շատ հաճախ դա էլ է դառնում խնդիր, քանի որ ուշացնում են հայցի ընդունումը: Սա մի խնդիր է, որի հետ մենք բախվում ենք գրեթե ամեն օր:

Ես գալիս եմ աշխատանքի և առաջին հարցը, որ ստանում ենք վարչական շրջանների ղեկավարից վերաբերում է այս խնդրին: Այս հարցի հետ կապված խորհրդակցություն եմ կազմակերպում, քննարկումներ են լինում իրավաբանի հետ, վարչական շրջանի ղեկավարի, բնականաբար, քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետի հետ: Օգտագործում ենք բոլոր միջոցները, փորձում ենք մի բան անել, բայց քանի որ ընդունել ենք այն փաստը, որ այսուհետ գործելու ենք օրենքի սահմաններում, շատ հաճախ այդ օրենքի սահմանները հենց մեր դեմ է աշխատում:

Կան կոնկրետ դեպքեր, ինչպես օրինակ այս պահին Արզումանյան փողոցի վրա կա այդ խնդիրը, այգու մեջ շինարարություն է տեղի ունենում, մյուս դեպքը, որ նշեցիք սփյուռքահայերի խնդիրների վերաբերյալ է: Մի օրինակ նշեմ, երբ Սանկտ Պետերբուրգում էինք, հանդիպեցինք մի անձնավորության հետ, ով **3000** քմ հողատարածք ունի Աջափնյակ վարչական շրջանում, հետևելով վարչապետի հորդորներին, որ ներդրումներ կատարեն Հայաստանում, ցանկանում է այդ տարածքում բազմաֆունկցիոնալ շենք կառուցել: Այս պահին իր **3000** քմ հողն այգու մեջ է, որը գնվել է **2003**թ., այնուհետև դարձել է այգի: Մի կողմից, եթե ինքը գա իր բազմաֆունկցիոնալ շենքը կառուցի, պետք է այգին քանդվի, մյուս կողմից այդ մարդը չգիտի, թե ինչ պետք է անել, մենք էլ չգիտենք: Այդ մարդը շատ պատրաստակամ անձնավորություն է, հասկանում է նաև մեր խնդիրը, որ մենք չենք կարող թույլ տալ, որ այգու մեջ շինարարություն լինի: Այս պահին հող ենք փնտրում, որպես էկվիվալենտ, որ ինքն այնտեղ շինարարություն իրականացնի, իսկ այս հողը նվիրի քաղաքին:

Ցավոք նշեմ, որ այսպիսի դեպքերը շատ են, կան տասնյակ դեպքեր որոնք վերաբերում են հենց այգիներին, որոնց մասով գնացել ենք, խոսել ենք: Ինչ վերբերում է բնակիչներին հետ խոսելուն, հանդիպելուն, գրեթե բոլոր այսպիսի խնդիրները, որոնց համար պետք է հանդիպում, համապատասխան ոլորտի վարչության պետերը հանդիպում են և քննարկում, շնորհակալություն:



### **Լևոն Զաքարյան**

-Շնորհակալություն, երկրորդ հարցս կրկին վերաբերում է մանկապարտեզներին: Ես և ավագանու իմ գործընկերներ՝ Սաթենիկ Մկրտչյանը, Գայանե Մելքոմ Մելքոմյանն աշխատանքային խմբի նման զբաղվել ենք նաև, այսպես կոչված, Վերոնիկայի մանկապարտեզով: Մեզ համար բավականին պարզ է խնդրի լուծումը, ուղղակի կցանկանայի այստեղ խոսել այս հարցի մասին, քանի որ, ինչպես օրինակ, «Հետք» լրատվականը և շատ այլ լրատվականներ անդրադարձել են այս հարցին:

Գիտենք, որ ժամանակին Մալաթիա-Մեբաստիա վարչական շրջանի ավագանին մանկապարտեզն անհատույց տրամադրել է Ալեքսանյան ընտանիքին: Հիմա կարծես սկսել է գործընթացը, ցանկանում եմ տեղեկանալ ինչ փուլում է գտնվում մանկապարտեզի վերադարձը Երևան քաղաքին:

### **Հայկ Մարություն**

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը, խնդրեմ:

### **Տիգրան Վիրաբյան**

-Միանգամից անդրադառնամ հարցին, այսպես ասած, եզրափակիչ մասով: Այն մարդկանց, որոնց տրվել է մանկապարտեզը, պատշաճ ծանուցվել են, որ մինչև հունիսի 30-ը ծանուցման ժամկետը լրանում է: Երևանի քաղաքապետարանը միակողմանի լուծում է պայմանագիրը՝ մանկապարտեզը վերադարձնելով համայնքին:

### **Լևոն Զաքարյան**

-Շնորհակալություն:

### **Հայկ Մարություն**

-Հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Թեհմինա Վարդանյան, խնդրեմ:

### **Թեհմինա Վարդանյան**

-Շնորհակալություն, առաջին հարցս վերաբերում է կենդանաբանական այգում այս պահին տեղի ունեցող գործընթացներին կամ գուցե արդեն նաև էլքին, հուսով եմ գոնե նախանշվում է ինչ-որ բան, քանի որ բազմաթիվ տնտեսավարողներ դիմում են՝ կապված վերջին ամիսներին այնտեղ տեղի ունեցող գործընթացների հետ: Այսինքն խաղահրապարակներ, կարուսելներ, սննդի կետեր ունեցող տնտեսավարողները, փաստացի ինչ բացվել է կենդանաբանական այգին, նշված տնտեսավարողների կետերից որևէ մեկը չի գործում: Պարոն Վիրաբյանի հետ ես շուրջ մեկ ամիս առաջ խոսել եմ այս հարցի շուրջ, ասաց, որ գուցե դա լինի մրցութային կարգով և տնտեսավարողները գան մասնակցեն մրցույթին: Խնդրում եմ ներկայացնել իրավիճակն այս պահին, քանի որ տնտեսավարողների տեսանկյունից էլ ամռան ավարտին քիչ է մնացել, սեզոնը շուտով կփակվի դեռևս որևէ

գործունեություն չեն կարողացել այդտեղ ծավալել: Պարոն Վիրաբյան, խնդրում եմ տալ ամփոփ տեղեկատվություն՝ ի՞նչ էք արել, ի՞նչ էք անում, ինչպե՞ս է լինելու հաջորդիվ այդտեղ տաղավար ունենալու, պահելու կամ մրցույթին մասնակցելու հարցը:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

### **Տիգրան Վիրաբյան**

-Շնորհակալություն հարցի համար: Կենդանաբանական այգու տարածքները տարբեր տնտեսվարողների 1 տարի ժամկետով տրվել է վարձակալությամբ կամ սեզոնային՝ ընդամենը 6 ամիս աշխատանքային ժամկետով: Ըստ իս դա տեղի է ունեցել տնտեսվարողներին կախման մեջ պահելու և, չակերտավոր ասված, երկար ժամանակ ազատություն չտալու համար, քանի որ այլ նպատակ չեմ կարող տեսնել այս ամենում: Եթե տարածքները տալիս էին երկարաժամկետ և աճուրդներով, տնտեսվարողները հնարավորություն էին ունենում ծանրակշիռ ներդրումներ անել՝ վստահ լինելով, որ իրենց բիզնեսները հաջորդ տարիներին որևէ կերպ չեն խոչընդոտվելու:

Պայմանագրերը կնքվել են ընդամենը տարածքն օգտագործելու իրավունքով, պայմանագրերում հստակ նշված չի եղել որևէ քառակուսի մետր, ո՞ր տարածքի մասին է խոսքը: Տրվել է վարձակալությամբ հանրային օգտագործման տարածք եզրույթի տակ, որը, այսպես ասած, իրենից ոչինչ չի ներկայացնում: Շատ դեպքերում եղել են տարիներ, որ ընդհանուր տարածքը բավականին ցածր գնով երկու տարով տրվել է մեկ տնտեսվարողի, որից հետո տնտեսվարողը տարածքը տրամադրել է ենթավարձակալությունների բավականին բարձր գներով:

Հանդիպել եմ գրեթե բոլոր տնտեսվարողների հետ, ասում ենք, հարգելիներս, մենք խնդիր չունենք որպեսզի որևէ տնտեսվարող երևացող և աներևույթ թելերով կապված լինի քաղաքապետարանի հետ, հայտարարում ենք տարածքների աճուրդներ, մասնակցեք աճուրդներին, առաջարկեք բարձր գին և այդ տարածքներն օգտագործեք երկարաժամկետ, ձեր բիզնես մոդելները հաշվարկեք երկարաժամկետ:

Այս մասով, բնականաբար, կա անհանգստություն, որովհետև տնտեսվարողների մեջ կան մարդիկ, ովքեր ունենալով ընդամենը 6-ամսյա օգտագործման իրավունք՝ մի քանի տասնյակ հազարավոր դոլարների ներդրում են կատարել, իսկ երաշխիքները, որ հաջորդ տարիներին հենց իրենք են տնտեսվարելու այդ տարածքները, չգիտեմ ովքեր են տվել՝ չնայած որ շատ դեպքերում այդ երաշխիքների պատասխանը փորձում են ստանալ Երևանի քաղաքապետարանից: Խոսել ենք տնտեսվարողների հետ, այժմ ընդհանուր չափագրման գործընթացն ավարտվել է, գտնվում ենք գնահատման գործընթացում: Ըստ իս մոտ

**20-25-օրյա** ժամկետում կկարողանանք տվյալ տարածքների համար աճուրդներ հայտարարել, ի դեպ՝ քննարկում ենք ունեցել պարոն Մարությանի հետ և ընդհանուր մի լոթով չենք առաջարկելու, այլ բաժանելու ենք տարբեր չափաբաժինների, որպեսզի գործընթացին մասնակցեն ոչ միայն մեծ բիզնեսները, այլև փոքր տնտեսվարողները նույնպես հնարավորություն ունենան մասնակցելու:

Ինչ վերաբերում է այս տարածքների վարձակալություններից եկած գումարն արդյոք վնասում է կենդանաբանական այգու բնականոն գործընթացը ֆինանսական մասով, պիտի նշեմ, որ ոչ և, եթե հիշողությունս ինձ չի դավաճանում, այդտեղ տարեկան մոտ **12** կամ **11** մլ. դրամի վարձակալության արժեք է գոյացել, ամիսն ընդամենը **1** մլ. դրամ, տարեկան **250 000** այցելու ընդունող կազմակերպությանը: Այս մասով, ըստ մեզ, կկարողանանք էլ ավելի շատ գումար հավաքագրել և պիտի նշեմ, որ այդ **10** մլ. դրամը, եթե համեմատական տանեմ **2018թ.** հետ, կենդանաբանական այգին **2018թ.** մայիսի **1-ից** հունիսի **1-ի** ընթացքում հավելյալ արդեն **10** մլ. դրամի տոմս է վաճառել: **2018թ.** վաճառվել է **31** մլ. դրամի տոմս, **2019թ.**՝ **41** մլ. դրամի: Մի ամսում կարողացել է տարվա իր ֆինանսական խնդիրը հոգալ և կարծում եմ, որ այս տեմպերով մինչև տարեվերջ բավականին լուրջ, ինչ-որ տեղ նաև կասկածելի արդյունքներ կունենանք:

#### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն:

#### **Թեհմինա Վարդանյան**

-Շնորհակալություն և երկրորդ հարցս: Պարոն քաղաքապետ, կրկին ուզում եմ անդրադառնալ թիվ **19** պոլիկլինիկայի հետ կապված խնդիրներին, մասնավորապես, եթե չեմ սխալվում երկու նիստ առաջ հարց ու պատասխանի ժամանակ խոսեցինք քաղաքապետի կարգադրությունների մասին, որից մեկը **01.11.2018թ.** էր տրված, իսկ երկրորդը՝ **22.01.2019թ.**, այսինքն՝ շուրջ երեք ամիս անց: Հանձնաժողովների կազմերը մեկ հոգու տարբերությամբ են փոխվել, այսինքն՝ հիմնական գործառույթը նախորդն ուժը կորցրած էր ճանաչվել: Պարոն Հարությունյանը, եթե չեմ սխալվում, ասաց, քանի որ պոլիկլինիկայի փաստաթղթերը գտնվում են քննչական մարմիններում առաջին կարգադրությունը չեղյալ է համարվել և տրվել է երկրորդ կարգադրությունը: Հիմա կուլիսային բազմաթիվ խոսակցություններ եմ ունեցել, պարոն քաղաքապետ, Ձեզ հետ էլ եմ քննարկել, պարոն Հարությունյանն էլ է տեսակետ հայտնել, էլ չեմ խոսում պարոն Բաբինյանի հետ անարդյունք քննարկումների մասին:

Հիմա խնդրում եմ, պարոն Բաբինյան, պատասխանել ո՞ր փուլում է գտնվում երկրորդ կարգադրությունը, ի՞նչ էք արել: Եվ, եթե պիտի պատասխանեք, որ քննչական մարմնում են

գտնվում, մենք ոչինչ չենք կարող անել, ապա այդ դեպքում ինչ կարիք կար քաղաքապետի երկրորդ կարգադրության: Ի՞նչ գործընթացներ եք արել, **2014**թ. փետրվարի **11**-ին ավագանու որոշմամբ տրվել է հավատարմագրային կառավարման, այս ամիս լրացել է պայմանագրի հինգ տարին, ի՞նչ եք արել պոլիկլինիկայի հետ կապված: Շնորհակալություն:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի առողջապահության վարչության պետ Կամսար Բաբինյանը, խնդրեմ:

### **Կամսար Բաբինյան**

-Շնորհակալություն հարցի համար: Ինչ վերաբերում է, ինչի համար քաղաքապետի երկու որոշում է եղել՝ տեղեկացնեմ, որ առաջին որոշումը չեղարկվել է, որովհետև, ինչպես Դուք նշեցիք, բոլոր նյութերը գտնվում էին Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական կոմիտեում: Փաստաթղթերին ծանոթանալու հետ կապված կային դժվարություններ, քաղաքապետի կողմից գրություն ուղարկվեց քննչական կոմիտեի նախագահին, որպեսզի մեզ, հանձնաժողովին հնարավորություն ընձեռվի ամբողջ ծավալով ուսումնասիրել այն նյութերը, որոնք վերաբերում են Երևանի քաղաքապետարանի լիազորություններին: Դրանից հետո, երբ քննչական կոմիտեի կողմից թույլտվություն ստացանք, եղավ քաղաքապետի երկրորդ կարգադրությունը, որպեսզի կարողանանք ուսումնասիրել, քանի որ կար ժամանակային գրաֆիկ:

Ինչ վերաբերում է ուսումնասիրությանը, ապա դրանք կատարվել են Երևանի քաղաքապետարանի առողջապահության, իրավաբանական, ֆինանսական վարչությունների և ներքին աուդիտի բաժնի կողմից: «Մամվել Սարգսյան և գործընկերներ» ՍՊԸ-ն **2014**թ. թիվ **19** պոլիկլինիկական վերցրել է կառավարման և հանձն էր առել, որպեսզի կատարի **320** միլիոն դրամի ներդրում: Մեր կողմից ուսումնասիրվել է ամբողջ փաստաթղթաշրջանառությունը, սարքավորումների հետ կապված տարբեր մատակարարների գնահարցումներ են իրականացվել և քաղաքապետարանի կողմից իր՝ **320** միլիոն դրամ ներդրումային առումով որևիցե շեղում չի հայտնաբերվել: Սակայն ուզում եմ նշել, որ մնացած մասով, այսինքն՝ դատափորձագիտական, դատահաշվապահական, բոլոր փաստաթղթերը տարբեր փորձաքննությունների են ուղարկվել քննչական կոմիտեի կողմից և վերջնական արդյունքը կլինի քննչական կոմիտեի վերջնական եզրակացության հիման վրա: Շնորհակալություն:

### **Թեմիլա Վարդանյան**

-Պարոն Բաբինյան, եկեք բառախաղով և աչքկապոցիով չզբաղվենք, որովհետև շուրջ **1,5** տարի է զբաղվում ենք այդ խնդրով, մեր հանդիպումներին Դուք ևս համակարծիք եք ինձ հետ, բայց չգիտես ինչու նիստերի դահլիճում նման կերպ եք արտահայտվում, երևի չեք

ուզում պարոն Սարգսյանը սրտնեղի, որովհետև վստահ եմ՝ պարբերաբար նիստերը դիտում է: Ինչ վերաբերում է արված աուդիտին, եթե վերջացել է, ես անպայման գրությունով կդիմեմ և փաստաթղթերը կխնդրեմ՝ տեսնելու համար ի՞նչ աուդիտ եք անցկացրել, ո՞ր ամիսներին են այդ պոլիկլինիկայում ներդրումներ եղել և հինգ տարվա ընթացքում ի՞նչ գործընթացներ են տեղի ունեցել: Մնացածի հետ կապված հուսով եմ, որ ինչպես հաճախ նշվում է նոր Հայաստան՝ նոր իրողություններ, որ իսկապես քննչական մարմինը կլինի անաչառ և որևէ մեկը, որևէ վարչության պետ, որևէ պաշտոնյա չի կարողանա դրան խառնվել և իրականությունը շատ շուտ բոլորիս պարզ կլինի և, պարոն Բաբինյան, ես այդ ժամանակ ժպիտով կնայեմ Ձեր մտահոգ դեմքին: Շնորհակալություն:

#### **Կամսար Բաբինյան**

-Շնորհակալություն, ես ինքս էլ շահագրգռված եմ, որ այս հարցը վերջնական լուծում ստանա:

#### **Հայկ Մարության**

Հարցին կանդրադառնա քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը, խնդրեմ:

#### **Սերգեյ Հարությունյան**

-Շնորհակալություն, հավելեմ, որ երեկ կապվեցի քննչական կոմիտեի վերահսկողության վարչության պետի հետ, որպեսզի Ձեր խնդրանքով ճշտեի մոտավոր ժամկետները: Ասացին, որ փորձում են ամեն ինչ անել, որպեսզի մաքսիմալ շուտ լինի, դեռ հստակ ժամկետ չեն ասել, բայց գործն ուսումնասիրության մեջ է և ակտիվ աշխատում են մի քանի փորձագիտական խմբեր, որոնց հանձնարարական է եղել քննչական կոմիտեի կողմից: Ասացին, երբ հստակ տեղեկատվություն լինի գործի ավարտի մասին, տեղյակ կպահեն: Պարոն Մարության, ինչպես երեկ Ձեզ զեկուցել եմ մեր դիրքորոշումը չի փոխվել և սպասում ենք քննչականին: Շնորհակալություն:

#### **Թեհմինա Վարդանյան**

-Ինձ թվում է, **2022**թ. ես էլի այս կարգադրությունների, էլի պոլիկլինիկայի հարցը տալու եմ, պարոն Հարությունյան, ասելու եք սպասում ենք քննչական կոմիտեի պատասխանին: Խնդրում եմ լուրջ վերաբերվենք քաղաքի սեփականությանը, որը տրված է կառավարման և հնարավորինս հետ կանչենք այդ որոշումը, քանի որ պարոն քաղաքապետ, Դուք միշտ շեշտում եք, որ շատ կարևոր է ամեն ինչը լինի համայնքինը, համայնքի ենթակայության տակ՝ տրանսպորտը, աղբը և այլն: Սակայն ահռելի պոլիկլինիկա տվել ենք կառավարման, արդյունքի մասին բազմաթիվ անգամներ խոսել եմ և բոլոր հիմքերը ունենք, որպեսզի հնարավորինս շուտ հետ կանչենք ավագանու այդ որոշումը: Շնորհակալություն:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն, տիկին Վարդանյան, վստահ եղեք, որ ամենաշահագրգռված անձանցից մեկը ես եմ այս պարագայում, որպեսզի հարցը վերջնական լուծում ստանա: Հետաքրքիր է նախ ինչով է այս ամենը վերջանալու՝ կապված քննչական մարմինների հետ, ցավոք սրտի դրա համար ես պատասխան չեմ կարող տալ, ուղղակի կարող եմ իմ կողմից հորդորել մաքսիմալ արագ այս գործընթացը կատարվի, որովհետև, այո, մի մեծ պոլիկլինիկա և ընդհանրապես բոլորս սպասում ենք ի վերջո այդ գործողությունների ավարտին:

Ինչ վերաբերում է համայնքապատկան գույքերին, նրանք, որոնք սխալ են ղեկավարվում վստահաբար հետ պիտի գան, և համայնքն արդեն իր անելիքը կանի, կարծում եմ բոլորը համոզված են և մեր գործողություններով ամեն օր դրանում համոզվում են: Շնորհակալություն:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Միքայել Մանրիկյան, խնդրեմ:

### **Միքայել Մանրիկյան**

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ: Հարցս դարձյալ առողջապահական ոլորտի շրջանակներում է: Բոլորս գիտենք, որ Խորհրդային Միությունից ունենք ժառանգած, այսպես կոչված, գլխավոր մասնագետների ինստիտուտը, որը, ըստ բժշկական աշխարհի եզրահանգման, ներկա պահին գործում է ոչ լիարժեք և մեր խմբակցության կողմից մշակվել է նոր նախագիծ, որը կբարձրացնի այդ ինստիտուտի դերը և էֆեկտիվությունը: Կցանկանայի իմանալ Ձեր կարծիքը սրա շուրջ:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի առողջապահության վարչության պետ Կամսար Բաբինյանը:

### **Կամսար Բաբինյան**

-Շնորհակալություն հարցի համար: Ես համամիտ եմ Ձեզ հետ և, հաշվի առնելով, որ վերջերս առողջապահության նախարարության կողմից նաև գլխավոր մասնագետ եզրույթը վերացվեց, հիմա կոչվում են գլխավոր խորհրդատուներ: Երևանի ավագանու հարգելի անդամների մեջ կան նաև բժիշկներ և կուզենամ ձեր մշակած նախագծին մենք էլ ծանոթանանք և փորձենք բոլորս միասին մեկ նախագիծ ներկայացնենք:

### **Միքայել Մանրիկյան**

-Շնորհակալություն, ես անպայման մեր մյուս երկու խմբակցության հարգարժան անդամների և Ձեզ հետ կունենանք քննարկում տվյալ նախագծի շուրջ: Երկրորդ հարցս

դարձյալ առողջապահական ոլորտից է: Սբ. Աստվածամայր բժշկական կենտրոնի աշխատակիցները, մասնավորապես՝ ծննդատան, շատ մտահոգված են, խոսակցություններ են պտտվում պարոն Դալլաքյանի կողմից հնչեցված տեսակետի շուրջ, որ հնարավոր է ծննդատունը ենթարկվի կրճատման կամ փակվի: Կցանկանայի այս հարցի շուրջ պարզաբանումներ ստանալ:

#### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի առողջապահության վարչության պետ Կամսար Բաբինյանը:

#### **Կամսար Բաբինյան**

-Ասեմ, որ Սբ. Աստվածամայր ծննդատունը գտնվում է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում, այնտեղ խնդիրներ կան՝ կապված ծնունդների հետ, ամսական կտրվածքով 20-25 ծնունդ է գրանցվում: Ուզում եմ Ձեզ հավաստիացնել, որ որևիցե ծննդատան փակման կամ կրճատման հետ կապված խոսակցություն այս պահին չկա:

#### **Միքայել Մանրիկյան**

-Շնորհակալություն:

#### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Հայկ Հովհաննիսյան, խնդրեմ:

#### **Հայկ Հովհաննիսյան**

-Հարցս Սպանդարյան կայարանի այդ թաղամասի վերաբերյալ է: Արդյոք այդ հատվածն ընդգրկված է ասֆալտապատման աշխատանքների շրջանակներում, թե՛ ոչ:

#### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի շինարարության և բարեկարգման վարչության պետ Գրիգոր Հարությունյանը:

#### **Գրիգոր Հարությունյան**

-Պարոն քաղաքապետ, նշված տարածքն ընդգրկված չէ, սակայն ունենք տնտեսում, որի հաշվին կարող ենք ասֆալտապատում իրականացնել այդ հասցեում, որովհետև ասֆալտապատման աշխատանքների ծավալները շատ սուղ են:

#### **Հայկ Հովհաննիսյան**

-Ցավալի է, որ ընդգրկված չէ, որովհետև հոկտեմբեր ամսից մենք ստանձնում ենք քաղաքային իշխանությունը, կարծում եմ այս 7 ամսվա ընթացքում մենք պետք է կարողանայինք այդ արվարձանում ինչ-որ լուծում տալ: Պարոն Արեյանը և ես, մեր խմբակցության մի քանի ավագանու անդամների հետ, հանդիպել ենք բնակիչների հետ: Խնդիրները բազմազան են և կարող եմ ասել 18-րդ դարի պատկեր է այնտեղ:

### **Գրիգոր Հարությունյան**

-Հարցը նրանում է, որ ամբողջ Երևան քաղաքում կա **400.000** քմ գրունտային ճանապարհ և մեր աշխատանքների ծավալների մեջ, բոլոր վարչական շրջանների համար, ներառված է ընդամենը **5130** քմ գրունտային աշխատանքներ: Ժամանակավոր լուծումները տրվում են, և այս տարի տնտեսումների հաշվին որոշ չափով կբարելավենք ճանապարհները:

### **Հայկ Հովհաննիսյան**

-Երկրորդ հարցս աղբահանության վերաբերյալ է: Երկու շաբաթ առաջ խոսեցի գնումների վարչության և մի քանի ստորաբաժանումների հետ՝ պարզելու, թե ձեռք բերված **6000** աղբամաններից **2000**, որոնք արդեն պետք է Երևանում լինեին, ինչ ժամկետներում կհասնեն, որպեսզի մեր հնչեցրած քաղաքական հայտարարություններն ստույգ լինեն:

Եվ երկրորդը՝ մոտ ապագայում աղբի տեսակավորման և վերամշակման հետ կապված ինչ ծրագրեր կան: Կարծում եմ նոր աղբավայր ստեղծելով և հնարավորինս շրջակա միջավայրը փրկելով հարցին լուծում չի տրվում, քանի որ դրա համար երկար ժամանակ է պահանջվում:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Մարգարյանը:

### **Հրաչյա Մարգարյան**

-Աղբամանների վերաբերյալ կարող եմ ասել՝ այսօր կամ վաղը կստորագրվի համաձայնագիրը և **10** օրվա ընթացքում աղբամանները կտեղափոխվեն Երևան: Կարծում եմ մինչև հուլիսի **18-ը 1200** աղբաման կունենանք:

Աղբի վերամշակման վերաբերյալ տարբեր առաջարկներ կան, բայց բոլորը սպասում են, որպեսզի քաղաքային իշխանության կամ պետության կողմից այդ գործունեությունը սուբսիդավորվի: Այս պահի դրությամբ երկու կազմակերպություն կա, ովքեր համայնքից խնդրում են, որ իրենց տրամադրվի աղբ և ինչ-որ տարածք, որտեղ կարող են գործունեությունն իրականացնել: Այս հարցը նախնական քննարկման փուլում է և հավելյալ տեղեկություն լինելու դեպքում կտեղեկացնենք հանրությանը:

### **Հայկ Մարության**

-Կապված տեսակավորման հետ ցանկանում եմ ավելացնել՝ քանի դեռ չի լուծվել ընդհանուր աղբահանության խնդիրը, բնակչության կողմից տեսակավորման մասին խոսք լինել չի կարող: Առաջնահերթ պետք է կարգավորել աղբահանությունը և տեղադրել համապատասխան աղբամաններ, այնուհետև՝ տեղեկացնել բնակչությանը: Սակայն կարծում ենք, այդ ամենին զուգահեռ, այնուամենայնիվ, բնակչությունն այս պահին որոշ տեսականին կարող է տեսակավորել, մասնավորապես՝ թուղթը: Կան ծրագրեր, որտեղ պետք է



ներգրավվեն նաև դպրոցները: Այսինքն՝ պետք չէ չսպասել խնդրի վերջնական լուծմանը նոր սկսել այդ գործընթացը, այլ գուցահեռ սկսել աշխատանքները, այնուհետև՝ միացնել միմյանց:

### **Հայկ Հովհաննիսյան**

-Շնորհակալություն, շատ ողջունելի է պարոն քաղաքապետ: Այո, կարծում եմ համապարփակ կարելի է զարգացնել այս ոլորտը և վերջապես հասնենք աղբի ճիշտ կառավարման մոդելին:

### **Հայկ Մարություն**

-Ցանկանում եմ հանրությանը և ավագանու անդամներին պարզաբանել, թե ինչու ենք **2000** աղբաման պատվիրել, իսկ մնացածը մի փոքր ուշ: Իսկզբանե Սանիթեք ընկերությունը խոստացել էր, որ **2000** աղբաման կպատվիրի և նույն քանակությամբ աղբաման էլ կպատվիրվի Երևանի քաղաքապետարանի կողմից և կապահովվի **4000** աղբամանով: Սակայն ոչ մի գործողություն չարվեց նրանց կողմից, բերվեց ընդամենը **220** աղբաման: Այնուհետև՝ **2** անգամ **2000** խմբաքանակով աղբամաններ դրվեց, երբ պարզ դարձավ, որ **8000** աղբամաններից **4800** գտնվում են անմխիթար վիճակում՝ նման են պլաստմասե ինչ-որ զանգվածի: Ռոշում ընդունվեց ևս **2000** աղբաման պատվիրել, որպեսզի կոմպենսացվի այս խմբաքանակը: Սա է գործընթացը մաս-մաս կատարելու պատճառը: Սակայն միանվագ **6000** աղբաման պատվիրելու դեպքում էլ շահող ընկերությունը չէր կարող ամբողջությամբ մատակարարել, քանի որ այդ ընկերությունների ծանրաբեռնվածության պատճառով պատվերները դանդաղ են կատարվում և պատվերները հերթականությամբ են կատարվում:

Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Մարկոս Հարությունյան: Մարկոս Հարությունյանը բացակայում է դահլիճից, հաջորդ հարցի համար ձայն է տրվում ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սաթենիկ Մկրտչյանին, խնդրեմ:

### **Սաթենիկ Մկրտչյան**

-Գիտենք, որ մանկապարտեզները համայնքի ենթակայության տակ են, ինչը լավ հնարավորություն է ընձեռում, որ առավելագույնս հենց մեր համայնքի առանձնահատկությունը հաշվի առնելով կազմակերպենք նրանց աշխատանքը: Մեր համայնքի, որպես մեծ քաղաքի առանձնահատկություններից մեկն է, որ կան բազմաթիվ աշխատող կամ աշխատելու ցանկություն ունեցող ծնողներ: Այժմ խոսելու եմ աշխատող մայրերի մասին, քանի որ մեր հասարակությունում երեխաների խնամքը հիմնականում մայրերի վրա է դրված: Մեր մանկապարտեզի կառուցվածքը և աշխատանքի կազմակերպվածությունն այնպես է, որ երկու շատ կարևոր կետով չենք աջակցում աշխատող մայրերին:

Առաջինն այն է, որ գործող գրանցման կարգով երեխաներին գրանցում ենք միայն

երկու կամ երեք տարեկանը լրանալուն պես, այն դեպքում, երբ մայրերի ֆիզարձակուրդը երեք տարի է և շատ մայրեր կամ հրաժարվում են աշխատանքից, կամ տատիկ պապիկներին են դիմում, եթե չունեն, դայակ են վարձում, գումարներ են վարձում, կամ դիմում են մասնավոր ընկերությունների՝ երեխաներին այդ ժամանակահատվածում պահելու համար: Քանի որ սա քաղաքապետի որոշում է՝ կարծում եմ, որ այս որոշումը վերանայելու կարիք ունի:

Երկրորդ կետը, որով աշխատող ծնողներին կրկին չենք աջակցում, այլ ավելի խանգարում ենք, այն է, որ մանկապարտեզներում աշխատանքային ժամերն ավարտվում են ժ. 17.30-ին և ծնողները կրկին գումար են ծախում վերջին երկու ժամը երեխաների խնամքն ապահովելու համար: Այս պարագայում առաջարկում եմ պարտադիր դարձնել երկարօրյաների խմբակները՝ հավանաբար վճարովի ծառայություններով, որպեսզի ծնողները կարողանան ավելի ողջամիտ գումարներով իրենց երեխաների այդ վերջին երկու ժամի խնամքն ապահովեն: Այս դեպքում չեմ խոսում արտոնության մասին, այլ ուղղակի այն երկու խոչընդոտի, որոնց հանդիպում են ծնողները: Սա առաջին հարցը:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

### **Տիգրան Վիրաբյան**

-Շնորհակալություն հարցի համար: Երկարօրյաների հետ կապված նշեմ, որ հիմա քննարկում ենք դրանք վճարովի ծառայություն դարձնել, ի դեպ, չեմ հիշում Դուք քննարկմանը ներկա էիք, թե՛ ոչ, ավագանու անդամների հետ այդ հարցը քննարկել ենք: Փոխքաղաքապետ պարոն Սարգսյանի հետ նույնպես քննարկել ենք այդ հարցը, այժմ հաշվարկում ենք՝ հասկանալու համար, թե հավելյալ վճարովի ծառայությունն ի՞նչ կարժենա: Ուզում եմ ուշադրություն դարձնենք այս հարցին, խոսքը վերաբերում է երկարօրյա հավելյալ ընտրովի ծառայություն ստանալու մասին և թող սխալ չընկալվի, հանկարծ չհայտնվեն վերնագրեր, որ Երևանում մանկապարտեզները վճարովի են դառնում, այդ պատճառով շեշտում եմ՝ սա լինելու է վճարովի ծառայություն այն ծնողների համար, ովքեր կցանկանան իրենց երեխան երկարօրյա մնա մանկապարտեզում: Նրանք ինքնակամ կորոշեն իրենց երեխային մանկապարտեզում թողնել, թե՛ ոչ: Այդ ծրագիրը հիմա քննարկում ենք և ուղղակի հաշվարկում ենք, թե ծառայությունն այդ մասով ինչ արժեք կունենա:

Երկրորդ մասով, որ գրանցումը լինի մինչև երեք տարեկանը լրանալը, քննարկել ենք մոտեցումը, որը մեր կողմից ընդունելի չէ:

### **Մաթենիկ Մկրտչյան**

-ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության մի քանի անդամներով և գրավոր նամակներով, և

քննարկումներով ենք սկսել այս հարցը, ուրախ եմ, որ տեղ է հասնում: Մակայն գրանցման մասով, այնուամենայնիվ, կարծում եմ արժե ևս մեկ քննարկում անել:

Երկրորդ հարցս վերաբերում է Սանկտ Պետերբուրգ կատարած քաղաքապետի պաշտոնական այցի մանրամասներին: Գիտեմ, որ շատ լավ այցելություն է եղել մշակութային հրաշալի ծրագրով: Հարցս այն մասին է, թե ինչպես է տեղի ունեցել իրազեկումը մինչև այցի կատարումը և վստահ ենք արդյոք, որ պետերբուրգյան հասարակությունը՝ ոչ միայն հայկական, այլև պետերբուրգյան հասարակությունը կարողացել է տեղեկանալ հատկապես մշակութային կոմպոնենտին: Պետերբուրգի հասարակությունից ստացել եմ մտահոգություններ, որ, օրինակ, այնպիսի թատերական հրաշալի ներկայացում ինչպիսին «Կյանքը ճամպրուկի մեջ» է, անցել է գրեթե կիսադատարկ դահլիճում: Կարո՞ղ եք մանրամասնել, ընդհանրապես ինչպե՞ս է տեղի ունենում իրազեկման ողջ ընթացքը: Լինում են արդյոք աֆիշաներ, հեռուստատեսային հայտարարություններ և սանկտպետերբուրգյան զանգվածային լրատվական միջոցներում այս ամենն ինչ արձագանք է գտել:

#### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

#### **Տիգրան Վիրաբյան**

-Շնորհակալություն հարցի համար: Պետք է նշեմ, որ դահլիճը դատարկ չի եղել, նախ մոտո ներկայացում է, որը թվաքանակով ավելի քիչ հանդիսատեսի համար է նախատեսված: Հաշվի առնելով, որ կազմակերպչական աշխատանքներն սկսվել են բավական ուշ և ազատ հարթակներ չեն եղել, ստիպված ենք եղել համաձայնել, ընդունել պետերբուրգյան մեր գործընկերների առաջարկը՝ խաղալ **650**-տեղանոց դահլիճում, քանի որ ազատ այլ հարթակ չկար, որովհետև ներկայացումը **100** կամ **150** հանդիսատեսի համար է: Իրազեկման գործընթացում Երևանի քաղաքապետարանի լրատվության վարչությունն իր լիազորությունների հնարավորության շրջանակում արել է ամեն ինչ. գովազդային հոլովակներ, պաստառներ և հավելյալ իրազեկման հրավիրատոմսերի բաշխում: Պետերբուրգում իրազեկման կազմակերպման գործընթացի պատասխանատուն այնտեղի մեր գործընկերներն են, ովքեր իրենց հնարավորությունների, լիազորությունների շրջանակում արել են իրազեկումը, բաժանվել են հրավիրատոմսերը և, ըստ իս, կարողացել են անել իրենց հնարավորությունների մաքսիմալը:

#### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Արմեն Ներսիսյան, խնդրեմ:

### **Արմեն Ներսիսյան**

-Երեկ պատահական այցելել էի Շիրակի փողոց հ. 3 հասցե, որտեղ գտնվում է «Սանիթեք» ընկերության գրասենյակը, մեքենաները: Պատահաբար տեսա, որ այնտեղ էին նաև պարոն Կամո Արեյանը և Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարը: Սանիտարական հիգիենիկ վիճակից ելնելով՝ պարոն Արեյանը բավականին հրահանգներ տվեց, որպեսզի տարածքը մաքրվի: Շնորհակալություն իրենց, սակայն այստեղ բնակիչները սարսափելի վիճակում են ապրում, գարշահոտության պատճառով ընդհանրապես չեն կարողանում պատուհան բացել: Մարդիկ չգիտեն ինչ անեն, որ այս հարցը լուծվի, խնդրել են նաև ինձ, ես էլ խնդրում եմ իմ գործընկերներին:

Եկեք այս հարցին լուծում տանք, պարոն քաղաքապետ, որ այդ «Սանիթեք» ընկերությունը Շենգավիթ վարչական շրջանի տարածքից ընդհանրապես հեռանա: Բավական չէ այդ գարշահոտությունը կետերի միջոցով շնչում են, մի հատ էլ «Սանիթեք» ընկերության պատճառով: Խնդրում եմ միջոցներ կիրառեք «Սանիթեք» ընկերությանն անհապաղ տարածք տրամադրեք ոչ մարդաբնակ վայրում, թող անհապաղ հեռանա Շենգավիթ վարչական շրջանից:

### **Հայկ Մարության**

-Անկեղծ ասած՝ պայմանագրով չգիտեմ ինչպես է դա կարգավորվում, միգուցե Հրաչյա Սարգսյանը կամ Կարեն Համբարձումյանը կներկայացնեն, սակայն անկախ պայմանագրից իրենք պետք է, բնականաբար, սանիտարահիգիենիկ պայմանները նորմայի մեջ պահեն: Կան նորմաներ, որոնք իրենք չեն կարող անցնել, սա առաջինը: Պարոն Ներսիսյան, կարծում եմ, սա այն դեպքն է, որ այս ընկերությունը տապալում է ամեն ինչ՝ ոչ միայն աղբահանությունը, այլ նաև իր տարածքը մաքուր պահելը, մի խոսքով, ամեն ինչ:

Անկեղծ ասած՝ չեմ կարող ասել մեկ, երկու կամ երեք տարի առաջ ինչպես էր այդտեղ մաքրությունը պահվում. այս նույն վիճակն էր, թե գնալով վատացել է, բայց գիտեմ, որ այնտեղ ևս եղել են խնդիրներ կապված աղմուկի, հոտի հետ, եղել է նաև միջադեպ: Այնպես որ այս ուղղությամբ, կարծում եմ, այս ամենի հանգուցալուծման վերջում այդ հարցն էլ միանգամից կլուծվի, կվերջացնենք:

### **Արմեն Ներսիսյան**

-Պարոն քաղաքապետ, արագ արձագանքման տեսանկյունից նկատեցի, որ պարոն Կամո Արեյանը և Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարն այնտեղ էին, ինչի համար շնորհակալություն եմ խնդրում: Բնակիչների կես խոսքից մարդիկ եկել էին և հուզող հարցերը ցանկանում էին լուծել: Ես նույնպես պատրաստ եմ աջակցել այս հարցի լուծմանը, միգուցե իրավաբանական տեսանկյունից ճնշումներ գործադրենք, որպեսզի ուրիշ տարածք

տրամադրենք, նրանք շուտ այդտեղից հեռանան: Մարդիկ, իրականում, չեն կարողանում պատուհան բացել, երեխաները փողոց դուրս չեն գալիս, հավատացնում եմ Ձեզ: Ինքս, որ տեսա սարսափեցի, անկեղծ ասած առաջին անգամ էի այդ տարածքում գտնվում: Խնդրում եմ իրավաբանական վարչության պետին ուսումնասիրել այդ պայմանագրերը, ինչպես նաև անմարդաբնակ մի տարածք կարողանանք տրամադրել, որպեսզի հեռանան այդտեղից:

Շենգավիթ վարչական շրջանում բավական չեն այդ գետառների, գետերի զարշահոտությունը, բնակիչները պարտավոր չեն շնչել այդ հոտը, սարսափելի իրավիճակ է:

#### **Հայկ Մարության**

-Պարոն Ներսիսյան, ես տեղյակ եմ այդ խնդրի մասին, լավ է որ Դուք անձամբ եք տեսել այդ ամենը: Եվ՝ պարոն Արեյանը, և՛ պարոն Մկրտչյանը տեղում լինում են, այդ հարցով մենք անընդհատ զբաղվում ենք, դրա լուծումը կտրվի:

#### **Արմեն Ներսիսյան**

-Մեկ ժամ շուտ անենք պարոն քաղաքապետ, բնակիչները գոհ և շնորհակալ կլինեն:

Երկրորդ հարցս հնչեցնեմ: Պարոն քաղաքապետ, ինչ ես ընտրվել եմ ավագանու անդամ, Գետառի հարցը Ձեզ անընդհատ հիշեցնում եմ: Լսել եմ, որ 37 մլն. դրամ վճարում ենք տվյալ կազմակերպությանը, որպեսզի Ողջաբերդ գետը և Գետառը մաքրեն: Կարող եմ Ձեզ հավատացնել, 10 օր հետո այնտեղ նույն վիճակն է տիրում, բնապահպանության վարչության պետ Խաչիկ Հակոբյանը տեղյակ է, ես հաճախ եմ վիդեոներ ուղարկում իրեն: Այդ 10 օրվա մաքրության համար արժե՞, որ 37 մլն. դրամ գումար տրամադրենք: Շատ շնորհակալ ենք, իհարկե, տվյալ կազմակերպությանը, բայց այդ չափի գումար իզուր տեղն ենք ծախսում: Այս խնդիրները պետք է ակունքներից սկսած լուծվեն: Մայակովսկի գյուղից են գալիս այս գետերը, այդ գյուղից վերև էլ մի երկու գյուղ կա, գյուղապետերին պետք է կանչենք բացատրական աշխատանքներ տանենք, իրենք էլ գյուղացիների հետ բացատրական աշխատանքներ տանեն: Այդպես գանք մինչև Երևան և Երևանից դուրս գանք, այս գետերը կարծում եմ մաքրել է պետք: Ցանկանում եմ ասել, որ ոչ մի կոպեկ մի տրամադրեք մաքրման աշխատանքների համար, որովհետև ես փաստեր ունեմ, որ 10 օր հետո նորից նույն վիճակն է տիրում:

#### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի խորհրդակցական Կամո Արեյանը, խնդրե՛մ:

#### **Կամո Արեյան**

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, երեկ մենք Արմեն Ներսիսյանի հետ Գետառի հատվածն ենք նայել միաժամանակ. Ողջաբերդի առուն, որ խառնվում է Գետառի

հետև և ինչ վիճակ է ստեղծվում Վերին Շենգավիթ հաստիճանում: Այն ինչ վերաբերում է գետերի մաքրման ոչ նպատակահարմար, ոչ արդյունավետ լինելուն, թույլ տվեք այս հարցում համաձայն լինելով ավագանու անդամ պարոն Ներսիսյանի մտահոգությանը, չհամաձայնել, որ գետերը պիտի չմաքրենք: Գետերի մաքրումը պարտադիր կանոն է, պարտադիր նորմ է, յուրաքանչյուր տարի ոռոգման սեզոնից առաջ ջրառն ինքը մաքրում է բոլոր ջրանցքները, Երևանի քաղաքապետարանը մաքրում է ներքաղաքային գետերը, հեղեղատարներն ու առուները: Երեկ ես վստահեցրել եմ պարոն Ներսիսյանին, որ եթե մենք չմաքրենք, կունենանք ավելի վատթար և խցանված վիճակ, դա պարտադիր է: Ես հասկանում եմ, որ ավագանու անդամը տեսնելով մեկ ամիս հետո վիճակը, դրա համար է մտահոգ, թե ինչու ծախսեցինք այդ գումարը:

Ասեմ պատճառը. պատճառը մեր բնակչությունն է, ուրիշ ոչ մեկը պարոն քաղաքապետ: Հրազդան գետի աղտոտվածությունն սկսում է սկիզբ առնելու վայրից՝ Սևանից, և վերջանում մինչև իր գետաբերան թափվելը: Ամբողջ տարածքով Հրազդանն աղտոտվում է Գեղարքունիք, Կոտայք մարզերով, Երևան քաղաքի տարածքով, Արարատի մարզով անցնելու ճանապարհին, բոլորը նետում են Հրազդան: Հրազդանը Երևանում ունի մեկ այլ խնդիր, որ բաց կոյուղատար համակարգը թափվում է Հրազդան գետ:

Ինչ վերաբերում է ջրանցքներին և Գետառ գետին, ցանկանում եմ, որ ավագանին մեկընդմիջտ այս տեղեկատվությանը տիրապետի և հաշտվի այն իրողության հետ, որ պատճառները և՛ օբյեկտիվ են, և՛ սուբյեկտիվ: Երևանում ներտնտեսային և միջտնտեսային ցանցը **473** կմ է, **31** կմ մայր ջրանցքներն են՝ ստորին Հրազդանը, Քանաքեռի դերիվացիոն ջրանցքը և Արտաշատի ջրանցքը: **31** կմ-ից ընդամենը ծածկած է **1.3** կմ-ը, մնացած ամբողջն անցնում է բաց տարածքով, բաց ջրանցքներ են: Ընդհանուր **473** կմ-ից **106** կմ-ն է ծածկած, բայց մայր ջրանցքների՝ ընդամենը **3.1** կմ-ը: Այս բաց ջրանցքները, այդ թվում Գետառը, Ողջաբերդի առուն այսօր դարձել են բնակչության կենցաղային աղբը նետելու վայր: Մենք բազմաթիվ միջոցառումներ ենք կիրառել, աղբաման ենք տեղադրել: Երեկ պարոն Ներսիսյանի հետ եղել ենք բնակելի թաղամասում և տեսել ինչ վիճակ է տիրում: Դրան ավելացել են արտադրական օբյեկտներ, որտեղ արտադրական ջրեր են թափանցում և՛ Ողջաբերդի առուն և Գետառը: Ամենավտանգավոր հաստիճանները Էրեբունի և Շենգավիթ վարչական շրջաններում են: Ինչ նշում է ավագանու անդամը համապատասխանում է իրողությանը, ես դա չեմ կարող առարկել, ոչ ոք չի կարող առարկել: Փաստը մնում է փաստ, որ մեր բնակչությունն է աղտոտում այդ տարածքը, ամբողջ կենցաղային աղբը և կոյուղին տանում են դեպի ջրանցքները:

Միակ լուծումն էր, պարոն քաղաքապետ, մի հարցով Ձեզ գեկուցել եմ, որ ծածկվեին ջրանցքները և ծածկվեր ամբողջ հունը: Ջրային կոմիտեից ժամանակին ստացել ենք դրա պատասխանը, որ դա անհնար է, որովհետև խաթարված է ջրանցքների օտարման գոտին ապօրինի կառուցապատումների արդյունքում և դրանց ծածկումը:

Իմ անձնական կարծիքով, այո, վտանգավոր է քաղաքամայր Երևանի տարածքով կիլոմետրերով բաց ջրանցքների առկայությունը: Եվ՝ շահագործման տեսանկյունից, և՛ մարդկանց կյանքի անվտանգության տեսանկյունից դա վտանգավոր է և անթույլատրելի, բայց սա է մեր իրողությունը: Միակ ճանապարհը կմնա գնալ վարչարարության, վարչական շրջանների ղեկավարները նորից ծանուցեն բնակիչներին, որ դա համարվում է արգելված վայրում աղբ թափելու վարչական պատասխանատվության փաստ և աստիճանաբար փորձենք զսպել բնակչությանը:

Առանձին հարց է Ողջաբերդի և Գետառի կարգավորումը, ինչպես խոստացել ենք ավագանու անդամին կփորձենք այլ ուժերով ևս մեկ անգամ այդ խառնարանը մաքրել Շենգավիթ վարչական հատվածում: Պահել կառավարելի դեպի Երևանյան լճից դուրս Հրազդանին խառնվող ջրերի մասում, որպեսզի կարողանանք Շենգավիթ վարչական շրջանում, Հրազդան փողոցում հատկապես և Վերին Շենգավիթում կառավարելի դարձնել այս գործընթացը: Մասնավոր այս դեպքին կփորձենք առաջիկայում համատեղ ուժերով լուծում գտնել: Գլոբալ առումով նշեցի այն վիճակն ինչ որ կա պարոն քաղաքապետ:

### **Արմեն Ներսիսյան**

-Պարոն Արեյան, մեծ հարգանքով Ձեզնից ներեղություն եմ խնդրում, մոռացա ասել, որ Ձեր և վարչական շրջանի ղեկավարի հետ ենք այցելել այնտեղ: Դուք իրավացի եք ամեն ինչ տեսել եք Ձեր աչքերով: Ես հիմա օգտվելով առիթից իմ խոսքն եմ ուզում փոխանցել Երևան քաղաքի բնակիչներին. «Միրելի բնակիչներ, օտար երկրներում, որ տեսնում ենք գետերը մաքուր և թափանցիկ, ինչքան ենք ուրախանում, բայց երբ գալիս ենք Հայաստան տեսնում ենք, որ բնակիչներն ամբողջությամբ աղտոտում են գետերը: Խնդրում ենք ձեզ սիրելի երևանցիներ, մի աղտոտեք, ամոթ է, այդտեղ մարդիկ նախկինում լողացել են, ձուկ են բռնել: Խնդրում եմ, որ այսուհետ աղբ չթափեք, որովհետև ափսոս է մեր գետերը, որոնք հոսում են Երևանի տարածքով և զարշահոտություն է տիրում»:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն պարոն Ներսիսյան, մենք նույնպես միանում ենք Ձեր կոչին: Այո, պարոն Արեյան ես համաձայն եմ Ձեզ հետ, թեկուզ ամեն օր մաքրենք, մարդիկ եթե աղբն ամենօրյա ռեժիմով նետեն գետը, ոչ մի արդյունքի չենք հասնի: Պարոն Սարգսյանը երեկ

արված լուսանկար ուղարկեց ինձ այս պահին, խայտառակություն է, բայց ամբողջը, կներեք, մարդու գործունեության արդյունք է, ոչ մի բնական բան չկար:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սերգեյ Ապրեսյան, խնդրե՛մ:

### **Սերգեյ Ապրեսյան**

-Պարոն Մարության, համայնքը նախատեսում էր Հրաչյա Քոչարի փողոցում մայթեր կառուցել: Կիսնդրեի տեղեկացնել, ինչ փուլում են գտնվում աշխատանքները:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Արամ Դանիելյանը:

### **Արամ Դանիելյան**

-Շնորհակալություն հարցի համար: Հրաչյա Քոչարի փողոցի այդ հատվածում, որտեղ **0.5** կմ մայթ պետք է կառուցվի՝ Գայի դպրոցից մինչև Վրացական փողոց, այս պահին ավարտվել են նախագծանախահաշվային աշխատանքները, որոնք մրցույթով էին կատարվում և հիմա դրված է մրցույթի: Ես տեղեկացա, որ ՀՀ ֆինանսների նախարարության հետ կապված մոտ մեկ շաբաթ հետաձգվել էր, եթե չեմ սխալվում այսօր կամ վաղը մրցույթը կհայտարարեն: **50-60** օրվա ընթացքում կունենանք մրցույթի արդյունքներում շահած ընկերություն, որը կառուցապատում կիրականացնի մայթերի մասով:

### **Սերգեյ Ապրեսյան**

-Երկրորդ հարցս՝ պարոն Դանիելյան մամուլում տեղ գտած նյութերի համաձայն Ձեր ղեկավարած վարչական շրջանի աշխատակիցները ոչ համաչափ են պարզևավճար ստացել: Կիսնդրեի բացատրել, թե ինչ կոնցեպտով եք որոշել:

### **Արամ Դանիելյան**

-Շնորհակալություն: Հարգելիներս պարզևավճար գաղափարն իրենից ենթադրում է, որ դա աշխատավարձ չէ, հետևաբար ավել ջանք թափած աշխատողին կամ հավելյալ աշխատանք կատարած մարդուն պետք է հատկացնել ավելին, քան մեկ այլ աշխատողի, ով աշխատել է նորմալ ռեժիմով, ընդամենն իր սովորական գործառույթներն է կատարել: Դրանից ելնելով՝ պարզևավճարն ի սկզբանե որոշել ենք այդ սկզբունքով տալ: Այլ հարց է, որ այդ սկզբունքները քանի որ նախկինում չեն եղել, երբևէ վարչական շրջաններն իրենց պրակտիկայում չեն ունեցել եռամսյակային պարզևավճարներ, հետևաբար կարող է լինել որոշակի կրիտերիաների հետ կապված անհամաձայնություններ:

Ինչ վերաբերում է բամբասանքներին, թե վերին օղակներին շատ է տրվել, ներքին օղակներին՝ քիչ, ուզում եմ փաստել, որ նախ՝ առաջինը, եթե ներքին օղակ ենք համարում ստորին մակարդակի աշխատողներին, ովքեր համայնքային ծառայող չեն, տեխնիկական աշխատանք են իրականացնում՝ պահակներ, հավաքարարներ և այլն, բոլորին տրված է եղել



**100%:** Երկրորդը, որ ասում են մերձավոր, ուզում են հասկանալ մերձավորն ով է: Իմ աշխատակիցները բոլորն ինձ համար մերձավոր են, եթե իրականում իրենք ուզում են աշխատել և աշխատանքի արդյունքում հասնենք հաջողության, բոլորն իմ մերձավորներն են:

**100%** պարզևավճար ի սկզբանե որոշվել և տրվել է **39** հոգու, **70%**` **37** հոգու, **50%**` **34** հոգու: Եվ եթե կա մեկը, ով կարող է ասել, որ **100%** պարզևավճար ստացած **39** հոգին մերձավորներ են, խնդրում եմ փաստեն: Այս խնդիրը մեզ մոտ շատ վաղուց արդեն փակված էջ է, մեր աշխատակիցների հետ իբրև մի ընտանիք, խնդիրներ, որ լինում են` հարթվում, անցնում են: Որոշում ենք կայացրել, տարբերությունները, որ մնացել էին այս եռամսյակ բոլորին տալ, բայց միևնույն է այս նույն սկզբունքով են լինելու այսուհետ պարզևավճարները, այսինքն` հավելյալ ջանք թափելու համար է տրվելու, թե չէ կլինի աշխատավարձ:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը` ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գայանե Վարդանյան, խնդրե՛մ: Գայանե Վարդանյանը բացակայում է դահլիճից, հաջորդ հարցի համար ձայն է տրվում ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Էռնեստ Ավանեսով, խնդրեմ:

### **Էռնեստ Ավանեսով**

-Շնորհակալություն: Ուզում եմ մտահոգությունս հայտնել ավագանու անդամների և քաղաքապետարանի գործադրի նամակագրության հետ կապված և, մասնավորապես, մի դեպքի հետ կապված կցանկանայի պարզաբանում ստանալ: Ավելին հասկանալի լինելու համար, տեղեկացնեմ, որ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում տեղակայված թիվ **92** մանկապարտեզ այցի ընթացքում պարզել ենք, որ այնտեղ կա շուրջ **4** խմբասենյակ, որոնք ունեն կապիտալ վերանորոգման կարիք և այդ դեպքում հնարավոր կլինի այդ հատվածի բնակիչների փոքր երեխաներին, մասնավորապես, մուրային խմբեր ընդունելու համար: Այդ խնդիրը գրեթե ողջ քաղաքում առկա է, այսինքն` մուրային խմբերի բացակայությունը:

Հատկապես այդ տարածքում խնդիրը սուր է, քանի որ մանկապարտեզը, որը գտնվում է Սվաճյան և Շերամի փողոցների հատման շենքեր մեջ և ունի մուրային խումբ` բավականին հեռու է գտնվում: Այդ խնդրի շուրջ հետաքրքիր զրույց ունեցանք տնօրենի հետ, ով համաձայն էր, որ վերանորոգման աշխատանքներ լինելու պարագայում հնարավոր է մուրային խմբերի բացման աշխատանքների գործընթաց իրականացնել: Այս խնդրի մասին, պարոն քաղաքապետ, Դուք էլ եք տեղյակ, որի հետ կապված ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության մի շարք անդամներով համապատասխան դիմումն ստորագրել ենք և Ձեր անունով մուտք արեցինք, որին ի պատասխան ստացանք հետևյալ պատասխանը, որ այդ խնդիրն ուսումնասիրվել է և նման անհրաժեշտություն չկա: Կցանկանայի հասկանալ, ինչպես եք

չափել, որ չկա նման կարիք, այնինչ ասում ենք, որ կա: Շնորհակալություն, սա առաջին հարցը:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

### **Տիգրան Վիրաբյան**

-Շնորհակալություն հարցի համար: Ինչ վերաբերում է, թե որ մանկապարտեզում, ինչ քանակությամբ տեղերի կարիք կա, ինքներդ շատ լավ գիտեք: Այդ փաստաթուղթը և գնահատումները մեր սեղանին են և ամենօրյա ռեժիմով ուսումնասիրում ենք: Առաջնահերթությունը տալիս ենք ըստ կարիքների և ոչ թե մի քանի ծնողի կամ մի խումբ ծնողների ցանկությամբ, որովհետև, եթե սկսենք այդ մեխանիզմով աշխատել, թե որ վարչական շրջանում բնակիչների որ հատվածն ինչ է ցանկանում, հիմնական ուղուց կշեղվենք և իսկական գնահատումները կդառնան երկրորդային:

Ինչ վերաբերում է մտուրային խմբեր բացելուն, կա խնդիր, բայց այստեղ մեր քաղաքականությունը մի քիչ այլ է, քանի որ, ըստ թույլտվությունների, մտուրային խմբում կարող ենք ունենալ ընդամենը ընդունվող **20** երեխա, իսկ հիմնական խմբում՝ **30**: Այդ տարածքը փորձում ենք օգտագործել իր ամբողջ հնարավորություններով և բացել հիմնական խմբեր, որտեղ կկարողանանք **33** %-ով ավելի երեխաներ ընդունել մանկապարտեզ: Եթե մեր քաղաքականության մեջ հիմնական շեշտն սկսենք դնել մտուրային խմբեր բացելու վրա, չենք կարողանա արդյունավետ օգտագործել այն ռեսուրսները, որոնք ունենք: Գուցե որոշ ժամանակ անց, երբ այս մանկապարտեզների խնդիրն իր սրությամբ կզիջի այլ խնդիրների, կկարողանանք հանգիստ, նորմալ ռեժիմով աշխատել և առաջնահերթությունները գնահատել: Պետք է նշեմ, որ հիմա խմբեր, նոր խմբեր բացելու, նոր մանկապարտեզների նոր սենյակներ վերանորոգելու, նոր խմբասենյակներ բացելու առումով և ընդհանրապես մանկապարտեզների հերթագրումների առումով ճգնաժամային կառավարում ենք իրականացնում և մեզ համար շատ կարևոր է ամեն մի ավել երեխա ընդունել խմբասենյակ, սա է խնդիրը:

### **Էռնեստ Ավանեսով**

-Ճիշտն ասած՝ չհասկացա ցուցանիշը որն էր, ինչի հիման վրա էք դուք ընտրում: Ի դեպ՝ տեղեկացնեմ, որ **4-5** օր առաջ մի խումբ ծնողներ այդ մանկապարտեզի նույն խնդրի հետ կապված փոստով նամակ են ուղարկել, որը պետք է հասնի, այսինքն՝ ինձ համար ավելի կարևոր է ծնողի ցանկությունը: Ի՞նչ չափանիշներով էք չափում այնտեղ մտուրային խումբ, թե այլ խումբ բացելու կարիք կա, քանի որ տրամաբանորեն մտուրային խմբի երեխաներին ավելի դժվար է մի վայրից այլ վայր տեղափոխել, քան՝ ավելի մեծերին:

### **Տիգրան Վիրաբյան**

-Շնորհակալություն արձագանքի համար: **8000** երեխայի **16 000** ծնող պահանջում է, որպեսզի իրենց երեխաներն օր առաջ հաճախեն մանկապարտեզ, իսկ որ հատվածներում, որ վարչական շրջաններում, որ մանկապարտեզներում են հերթագրումներն ավելի գերբեռնված, թերբեռնված, դրանց ուսումնասիրությունը և մոնիթորինգն անում ենք մենք: Եթե սկսենք ուղղակի ուղղորդվել, թե որ վարչական շրջանից ենք ավելի շատ նամակ ստանում, առաջնահերթությունը մտուրային խումբ բացենք, թե սովորական, այդ դեպքում մեր հիմնական ուղղությունը կկորցնենք և կսկսենք ուղղակի պատասխանել նամակների և որ թաղամասից, որ վարչական շրջանից, որ մանկապարտեզից ավելի շատ ծնող դիմի, որպեսզի իրենց մոտ մտուրային կամ հիմնական խմբասենյակները բացվեն ավելի շուտ, մեր հիմնական ուղղությունը կկորցնենք: Այդ պատճառով ամեն ինչ վերահսկելի է, ամեն ինչ ենթարկվում է մոնիթորինգի և գնահատումներն արվում են շատ օբյեկտիվ և որևէ վարչական շրջան առավելություն չունի: Մենք ենք որոշում, բոլորի կարիքները գիտենք, խորքային ուսումնասիրվում ենք և գնահատում:

### **Հայկ Մարություն**

-**8000** երեխա հերթում և **16000** ծնող սպասում են, որ իրենց երեխաները հաճախեն մանկապարտեզ: Այս պահին կարիքը կա, բայց տեղ չկա: Ենթադրենք **10** ծնող գրել է, որ իրենք ուզում են, որ իրենց երեխաները հաճախեն մանկապարտեզ, չի նշանակում, որ **8000**-ից հանած **10**-ը, մնացածն այդ իրավունքը չունեն, եթե չեն գրել: Մենք տիրապետում ենք այդ ցուցակներին, թե որտեղ քանի երեխա կա, հիմա, եթե սկսենք գնալ նամակագրությամբ, կսկսենք հիմնական ուղուց շեղվել:

### **Տիգրան Վիրաբյան**

-Պարոն քաղաքապետ, անհանգստությունը նաև մտուրային խմբեր բացելու մասով էր, բայց, ըստ իս, այդ մասով սպառիչ պատասխանեցի, որ մեզ համար ավելի նպատակային է, որպեսզի լինեն հիմնական խմբեր, որ կարողանանք թեկուզ **10** երեխա ավել ընդունել մանկապարտեզ:

### **Էռնեստ Ավանեսով**

-Այստեղ խոսքը վերաբերում է տարածքներին, որոնք պարզապես չեն օգտագործվում, որոնք վերանորոգման արդյունքում կարող են ծառայել համայնքին, այդ թվում նաև այդ կարիքների համար, այսինքն՝ այլ խմբերի համար: Ասացի, որ մտուրային խմբերի վիճակն ավելի սուր է, գուցե ավելի նպատակահարմար է դա, բայց Դուք ասում եք այլ չափանիշներ: Ես, համենայնդեպս, քաղաքացիների, այս դեպքում ծնողների հետ երկխոսության այս

փաստը մեր նախընտրական ծրագրի խոստման շրջանակներում էի ընկալում, մասնավորապես, ուղիղ ժողովրդավարության և դա էր հիմնական խնդիրը, ոչ միայն իմ:

Երկրորդ հարցը կապված է կրկին համայնքային հաստատությունների հետ, որոնցից շատերը կրկին անմխիթար վիճակում են, խոսքը մարզադպրոցների մասին է: Ունենք մարզադպրոցներ, որոնք ունեն պարզապես մի քանի քառակուսի մետր, փոքրիկ տարածք, որտեղ վարչական աշխատողներն են նստում, իրենց գրասենյակն է և հիմնականում բացօթյա տարածքներում են մարզաձևերի պարապմունքները կազմակերպվում: Արդյոք նախատեսում ենք կամ հնարավորություն ունենք այդտեղ, կարող եմ նշել մի քանիսը, օրինակ՝ Աջափնյակ վարչական շրջանի մարզադպրոցը, որտեղ վոլեյբոլի, բասկետբոլի, ֆուտբոլի և հանդբոլի մարզաձևեր կան, գործում է և այդ ամենը բացօթյա է: Դա պատկանում է համայնքին և երեկոյան նաև բակի երեխաներն են այդտեղ խաղում: Արևի և, մասնավորապես, անձրևի պայմաններում դրսում անհնար է մարզումներ իրականացնել, արդյոք հնարավոր չէ գոնե թեթև ծածկեր կառուցել և որոշ առումով թեթևացնել հոգսը, հնարավորություն տալ մարզումներն ավելի արդյունավետ կազմակերպել: Շնորհակալություն:

#### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

#### **Տիգրան Վիրաբյան**

-Շնորհակալություն հարցի համար: Գրեթե **10** օր առաջ Երևան քաղաքի ենթակայության բոլոր մարզադպրոցների տնօրենների հետ խորհրդակցություն-քննարկում ենք ունեցել: Քննարկման ժամանակ հստակ հանձնարարական է տրվել բոլոր սպորտդպրոցների տնօրեններին գույքագրել խնդիրները՝ հատկապես գույքային և տարածքային խնդիրները, ինչ ունենք անելիք: Ինքներդ շատ լավ գիտեք, որ մարզադպրոցները և Երևան քաղաքի մարզական կյանքն այլ հունով են գնացել, Երևանի մարզական կյանքում միջամտություններն այլ են եղել, և մենք հիմա ստիպված ենք ըստ կարևորությունների իրավիճակը հետ բերել մարզադպրոցներում: Բնականաբար սպորտի բաժնի, սպորտ կոմիտեի հետ են ունեցել քննարկումներ և պիտի կարողանանք մարզադպրոցների հետ գույքագրենք խնդիրները:

Ի դեպ՝ պետք է ասեմ, որ ես առավել քան վստահ եմ, որ խնդիրների ծավալներն ավելի մեծ են, քան մեր հնարավորությունները, որովհետև խնդիրները շատ երկար տարիների են, որոնք ուղղակի կարիք չի եղել երևան հանելու: Ուզում եմ վստահեցնել, որ մեկ ամիս ժամկետ է տրված խնդիրների գույքագրման համար, երբ տնօրենների կողմից խնդիրները վերջնական բարձրաձայնած և թղթին հանձնած՝ դրված կլինեն մեր սեղանին, առաջնահերթությունների սխեմա կկազմենք և ըստ հերթականության ժամանակացույց

կկազմենք, թե որ մարզադպրոցները պիտի վերանորոգենք առաջնային կամ որ մարզադպրոցների համար այլ պայմաններ պիտի ստեղծենք հավելյալ, նորմալ պարապմունքներ անցկացնելու համար: Շնորհակալություն:

**Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գրիգորի Երիցյան, խնդրեմ:

**Գրիգորի Երիցյան**

-Վերջերս բնապահպանության վարչության պետ պարոն Հակոբյանը նշեց, որ Երևանում շուտով կբացվի 3 նոր պուրակ, որոնց ընդհանուր տարածքը կկազմի 25 հա: Ինձ և վստահ եմ նաև քաղաքացիներին հետաքրքիր է, թե ո՞ր տարածքներում են այդ պուրակները լինելու, ե՞րբ են ավարտվելու աշխատանքները և ի՞նչ ոռոգման համակարգ է տեղադրվելու:

**Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի բնապահպանության վարչության պետ Խաչիկ Հակոբյանը, խնդրեմ:

**Խաչիկ Հակոբյան**

-Շնորհակալություն հարցի համար: 25 հա տարածքը նախատեսված է երեք մասնաբաժնով: Առաջինը՝ Սարալանջի անտառ-պուրակն է, որտեղ վերականգնման ծրագիր է իրականացվելու: Երկրորդը նախատեսված է անտառապատել Նուբարաշեն վարչական շրջանում աղբավայրի հարևանությամբ գտնվող 8.5 հա տարածքը և 7 հա տարածք նախատեսված է Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասի ետնամասը, դեպի հանքեր, գերեզմանատներ, այդ հատվածում: Երեք մասով այդ աշխատանքները հիմա տարվում են, նախագծային փուլում են: Երեք հատվածում, այսինքն, ողջ 25 հա վրա նախատեսվում է կաթիլային ոռոգման համակարգի ներդրում, որն առաջին մասշտաբային լուծումն է լինելու, ինչպես նաև մանրամասն քննարկվում են բոլոր ջրառի կետերը, որպեսզի կարողանանք կաթիլայինով ունենալ ոռոգման երաշխավորված համակարգ, շնորհակալություն:

**Գրիգորի Երիցյան**

-Շնորհակալություն պատասխանի համար, մի ճշտող հարց, երբ կավարտվեն աշխատանքները:

**Խաչիկ Հակոբյան**

-Աշխատանքները կմեկնարկեն լավատեսորեն օգոստոս ամսին, հոկտեմբեր ամսի երկրորդ կեսին նախատեսում ենք ունենալ ծառատնկումներ, իսկ աշխատանքները, կարծում եմ, երեք տեղերում էլ լինելու են շարունակական, քանի որ ստեղծվում են նոր տարածքներ, շնորհակալություն:

### **Գրիգորի Երիցյան**

-Շնորհակալություն, երկրորդ հարցը, որ ցանկանում եմ հնչեցնել, կարծում եմ մի փոքր զգայուն է հատկապես, գուցե աշխատակազմի ներկայացուցիչների համար: Ինձ մինչև ավագանու անդամ դառնալը, ինչպես նաև այս հետհեղափոխական փուլում շատ է հետաքրքրել այս հարցը: Խոսքը շահերի բախման մասին է, ինչի շուրջ այսօր արդեն փոքր-ինչ խոսել ենք: Չնայած ես էլ տարբեր հերոսների անուններ գիտեմ, բայց դրանք չեմ տա և կփորձեմ չանձնավորել:

Վերջին շրջանում շատ է խոսվում անցումային արդարադատության մասին, վեթինգի գործընթաց և այլն: Ընդհանրապես քննարկվում է, թե նոր Հայաստանում ինչպե՞ս բացառել շահերի բախումը և նույնիսկ շահերի բախման նվազագույն առկայության հնարավորությունը: Ավելի պարզ եթե ասեմ, ինձ համար օրինակ էթիկապես, նաև շահերի բախման տեսանկյունից ընդունելի չէ, որ առողջապահության վարչության աշխատակիցն ունի մասնավոր բուժօգնություն, կրթության վարչության աշխատակիցը կամ որևէ մասնագետ ունի մասնավոր դպրոց կամ մանկապարտեզ, տրանսպորտի վարչության աշխատողներն ունեն սեփական երթուղայինի գիծ և այլն: Սա, բնականաբար, հստակ շահերի բախում է, որը մեր խմբակցությունում մի քանի անգամ քննարկել ենք: Գլոբալ առումով եմ ցանկանում հարցնել, ոչ թե անձնավորված, թե որն է տեսլականը քաղաքային իշխանությունների, գործադիրի, շահերի բախման մեխանիզմները բացառելու վերաբերյալ և ինչ աշխատանքներ են տարվում այս ուղղությամբ, արդյոք տարվում են, շնորհակալություն:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալ եմ պարոն Երիցյան, կարծես թե պատասխանն իրավաբանական ոլորտից է, որովհետև, ընդհանուր ասեմ, դա պետք է կարգավորի օրենքը: Օրենքով, եթե այս պահին խախտում կա, օրենքի խախտում կա, դրանով պետք է զբաղվեն իրավապահ մարմինները, եթե չկա և եթե այդ խախտումն իրավապահ մարմինները չեն կարող բացահայտել կամ արձանագրել, նշանակում է օրենքը թերի է գրված: Իմ պատասխանը հետևյալն է. գրել այնպիսի օրենք կամ օրենքներ, որոնք օրենքի ուժով բացառեն այս գործընթացը, այլ մոտեցում ես չեմ պատկերացնում: Կարծես, թե սպառիչ էր պատասխանը:

### **Գրիգորի Երիցյան**

-Շնորհակալություն, ես համամիտ եմ Ձեզ հետ: Կարծում եմ օրենքի դաշտում իրապես բացեր ունենք, եթե կարողանանք համագործակցել Ազգային ժողովի մեր գործընկերների հետ շահերի բախման հետ կապված օրենսդրությունը վերանայելու ուղղությամբ, կարծում եմ հետաքրքիր կլինի: Գիտեմ, որ ավագանու անդամները նույնպես նման նախաձեռնություն ունեն, գուցե առաջիկայում ունենանք որոշման նախագիծ, որը նույնպես ուղղված կլինի

քաղաքապետարանում շահերի բախման բացառմանը: Բոլորս էլ քաջատեղյակ ենք, որ այդ շահերի բախումը կա և դա նորություն չէ ոչ ոքի համար, շնորհակալություն:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալ եմ պարոն Երիցյան, պարզապես հռետորական մի հարց տամ կապված Ազգային ժողովի հետ: Ինձ, իրոք հետաքրքիր է Ազգայի ժողովի պատգամավորներից, ես չեմ առանձնացնում խմբակցությունները, կա՞ն մարդիկ, ովքեր բիզնես ունեն, բայց իրենց անունով չէ: Երևի, թե կան և եթե իրենց անունով չէ, ապա օրենքն այստեղ ինչպես է կարգավորում: Հիմա, որ Դուք ասում եք Ազգային ժողովն ընդունի որոշում, այդ ընթացքում դժվարությունների է հանգելու, ինչպես ընդունի այդ որոշումը, որ միայն քաղաքապետարանին վերաբերի: Համենայնդեպս, լիովին Ձեզ հետ համաձայն եմ, բայց միևնույն է, կարծում եմ, որ այստեղ պետք է օրենքի կարգավորումներ լինեն:

Իմիջիայլոց, սա էլ ասեմ, որ մարդիկ չմտածեն միայն Հայաստանի վրա է այս օրինակը բերվում, ամբողջ աշխարհում այս խնդիրը կա, այսինքն՝ թղթով բիզնեսները մի պաշտոնյաինը չէ, բայց իրականում բոլորն էլ լավ գիտեն, որ տվյալ մարդունն է: Այդ խնդիրը կա ամբողջ աշխարհում, չգիտեմ ինչպես են կարգավորում, այնտեղ էլ չեն կարողանում կարգավորել:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արմեն Գալջյան, խնդրեմ:

### **Արմեն Գալջյան**

-Շնորհակալություն, օրեր առաջ քաղաքապետարանը հայտարարեց վերելակների առաջին, նոր՝ թվով 20 խմբաքանակի ձեռքբերման, գնման մասին: Ուզում եմ իմանալ՝ կա արդյոք ձեռք բերված պայմանավորվածություն բնակիչների հետ և ի՞նչ սկզբունքով է երկխոսություն կատարվում ընդհանրապես բնակիչների հետ, որովհետև մյուս տարվա սկզբից, երբ արդեն համակարգային փոփոխություններ սկսվեն վերելակների հետ:

Ի՞նչ եք կարծում արդյոք կբախվենք խնդիրների, թե ոչ և տեսնում եք արդյոք ավագանու անդամների և բնակիչների միջև այս հարցի շուրջ երկխոսության անհրաժեշտություն:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Հայկ Մարգսյանը:

### **Հայկ Մարգսյան**

-Շնորհակալություն, պարոն Գալջյան, այո տեսնում եմ այդ ռիսկը, բնականաբար, բախվելու ենք բնակիչների քմահաճույքներին: Այդ ճանապարհով արդեն անցանք 7 ամիս մի քանի տարբեր էպիզոդներով ու հասկացանք, որ ամենաֆանտաստիկ,

ամենաանհավանական կարիքներն ու պահանջները կարող են հնչել: Քաղաքապետի հանձնարարությամբ այս 20 վերելակների տեղադրման պիլոտային ծրագիրը հենց այդ նպատակն էր հետապնդում, որ կարողանայինք բացահայտել, թե բացի իրավական, ֆինանսական և տնտեսական այն բարիերները, որ հաղթահարել ենք արդեն ծրագրով, ինչ բարոյական, հոգեբանական և կենցաղային բարիերների կարող ենք հանդիպել:

Վստահ ենք, որ այս 20 վերելակների տեղադրումը մեզ համար կբացահայտի այս խնդիրները, որոնց ավելի լավ կպատրաստվենք: Բնակիչների հետ աշխատանքը տարվել է և տարվում է հենց այս պահին: Պարոն Արեյանը, եթե չեմ սխալվում, հենց այս փուլում բանակցությունների և հանդիպումների շարք է ունենում այդ 20 հասցեների մուտքերի բնակիչների հետ, որպեսզի իրավական և քաղաքացիական հարաբերությունները կարգավորվեն այնպես, որ բնակիչների շահերը չտուժեն և նաև քաղաքապետարանի ծրագիրը չտուժի: Ավելի մանրամասն կարող է պարոն Արեյանը բացահայտումներ անել:

### **Արմեն Գալջյան**

-Շնորհակալություն, ուզում էի ընդամենն օգտվել առիթից, որպեսզի այս խնդիրը ևս մեկ անգամ հանրային քննարկվի, Դուք էլ ավելի մանրամասն խոսեք և մարդիկ ավելի լավ հասկանան:

### **Հայկ Մարության**

-Հարցին կանոնադառնա Երևանի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը, խնդրեմ:

### **Կամո Արեյան**

-Շնորհակալություն, ինչպես նշեց պարոն Մարգարյանը, վարչական շրջանների ղեկավարների հետ ունեցել ենք հանդիպում, քննարկվել է հարցը, ամբողջ մեխանիզմը՝ բնակչին իրազեկելու, ծրագրի ողջ էությունը բացատրելու, ծրագրի անհետաձգելիությունը և անհրաժեշտությունը հասկանալու, չէ որ միշտ դա եղել է գույքագրման լրջագույն աշխատանք: Այս վերելակները պատահաբար չեն ընտրվել՝ մասնագիտական լուրջ եզրակացությամբ, սպասարկող արտոնագրված մասնագետների եզրակացությամբ են ընտրվել այս անհետաձգելի, փոխարինման ենթակա վերելակները: Բնակիչ, վարչական շրջանի ղեկավար, կառավարման մարմին և քաղաքապետարան համատեղ մշակել ենք ծրագիրը և արդեն անցել գործի, վարչական շրջանների ղեկավարներն էլ են սկսել բանակցել:

Դուք իրավացի եք, հանրային իրազեկում և համաձայնություն պետք է լինի, որովհետև գործ ունենք այսօրվա օրենսդրությամբ բաժնային սեփականության հետ: Կարծում եմ ծրագիրը չի ունենա լուրջ խոչընդոտներ, բայց իրավացի է պարոն Մարգարյանը, որ նման դեպքերում ամենալավագույն ծրագիրն անգամ իր մեջ կարող է ունենալ անհավանական



թիրախ, որի հաղթահարման համար հիմա պետք է անենք ամեն ինչ: Սա պետք է դառնա լավագույն նախադրյալը մայրաքաղաքում, որպեսզի հետագա խոշոր ծրագիրն անցնի շատ հարթ, շատ անխոչընդոտ, իրավական ու ֆինանսական բոլոր մեխանիզմները լուծված: Վստահեցնում ենք Ձեզ, կանենք ամեն ինչ հանրային իրազեկումն ու համաձայնությունն ամենակատարյալ ճանապարհով լուծելու՝ մինչ վերելակների ներկրումը:

### **Արմեն Գալջյան**

-Այս հարցս ծագեց, երբ երեկ տեսա Արցախի փողոցում բնակիչների տեսանյութը, որ, չնայած առաջարկը շատ շահավետ էր, բայց մարդիկ, չգիտես ինչու, չէին համաձայնվում: Այս դեպքում էլ, կարծում եմ, կրկին խնդիրներ են առաջանալու:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գայանե Մելքոն Մելքոնյան, խնդրեմ:

### **Գայանե Մելքոն Մելքոնյան**

-Հարցը վերաբերում է Աբովյան փակուղի հ. 5 հասցեում գտնվող մի խնդրահարույց դեպքի, որի մասին Դուք լավ տեղյակ եք, որովհետև բնակիչը՝ Յուլիա Զաքարյանը, կարծես թե նոյեմբեր կամ դեպտեմբեր ամսին Ձեզ մոտ ընդունելության է եղել: Դա այն բակն է, որտեղ նախատեսվում է մեծ շինարարություն և դատական վեճ կա, այլ կերպ ասած Թումանյան փողոց հ. 30:

Հիմա կոնկրետ այս բնակչի խնդիրը քանի ամիս է կարծես չի լուծվում, կապված է նրա հետ, որ այդ շինարարական հրապարակին կից իրենց ընտանիքն ունեցել է երկու փոքրիկ ավտոլվացման կետ, որոնց կեսը քանդվել է շինարարության ժամանակ, մյուս կեսը կա դեռ՝ կիսաքանդ վիճակում է: Քանի որ շենքը չի կառուցվել և դատական գործընթաց է սկսվել, կառուցապատողն այդտեղ մետաղական պատնեշով տարածքը փակել է, փաստացի նաև այս տիկնոջ սեփականության այդ գույքի մուտքն էլ է փակվել: Արդյունքում նա չի կարողանում օգտվել իրեն օրինական կարգով պատկանող գույքից: Նրա դիմումի պահանջն այն է եղել, որ հարցն ուսումնասիրվի և մուտքը բացվի, որ կարողանա օգտվել իր գույքից: Մենք փաստաթղթերն ուսումնասիրել ենք, անշուշտ մի քիչ բարդ գործ է, որովհետև տարիներով կուտակված բազմաթիվ շերտեր կան, բայց գոնե այս մասով թերևս հնարավոր է մուտքը բացել: Քաղաքապետարանն այնտեղ գեոդեզիա է արել, կարծես թե, կամայական ձևով և չափերով է դրված այդ պատնեշը և հաստատված չէ, որ մինչև այդ հատվածն իսկապես պատկանում է կառուցապատողին:

Նա նաև դիմել է թեժ գծով Կենտրոն վարչական շրջան, պարոն Մնացականյանը քաջ տեղյակ է գործից: Գիտեմ, որ ընթացքի մեջ է, զբաղվում են այդ հարցով, բայց քանի որ

բազմիցս խնդրել են նաև հրապարակավ այդ հարցը բարձրաձայնել, որովհետև երկար ժամանակ են սպասում: Կխնդրեի թարմացնել տեղեկությունները, թե որ փուլում է գտնվում ուսումնասիրությունը և երբ կարելի է ակնկալել, որ հարցին լուծում կտրվի կամ վերջնականապես կսավի, որ սա լուծելի հարց չէ: Շնորհակալություն:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Վիկտոր Մնացականյանը:

### **Վիկտոր Մնացականյան**

-Շնորհակալություն, այդտեղ հարցը մի քիչ ավելի խորքային է, որովհետև գիտեք այնտեղ կա դատական գործընթաց ու շատ բազմաշերտ է: Կենտրոն վարչական շրջանի եզակի բակերից է, որ բնակիչները միահամուռ դեմ են շինարարությանը: Եթե չեմ սխալվում, ժամանակին տիկին Յուլիայենք տարածքի մի մասը վաճառել են կառուցապատողին, բայց ինչ-ինչ պատճառներով դա դեռ չի ավարտվել: Այն ինչ-որ ուզում է տիկին Յուլիան, որպեսզի այդ մետաղական կոնստրուկցիաները հեռացվեն, այդ մասին տեղեկացրել ենք կառուցապատողին: Կառուցապատողն ասաց, որ դա արել են հարկադիր ծառայությունները, հիմա մենք փորձում ենք դա ճշտել:

Եթե չեմ սխալվում, մի քանի օր առաջ մեր քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի ղեկավարը հանդիպել, գրուցել է տիկին Յուլիայի հետ: Մենք պահանջել ենք գեոդեզիայի վերջնական նիշները, դա ստանալուց հետո միայն, անմիջապես դրանք կիրականացնենք, կփորձենք վարչական շրջանի ուժերով հարցը շտկել: Այստեղ հարցն այն է, որ ժամանակին տիկին Յուլիայի բակի մեջ 3 արհեստանոց է եղել և մի խումբ բնակիչներ բողոքում են, որ լսել են, թե դրանք կարող են վերականգնվել: Այստեղ էլ այլ կողմից խնդիրներ ունենք: Դրա համար պետք է փորձենք իմաստուն որոշում կայացնել: Ամեն դեպքում, ըստ օրենքի, երբ գեոդեզիայի նիշները և հանույթը վերջնական ունենանք այդ մասով կազատենք բացը: Այսինքն՝ ավտոտնակը փակ է, բայց հետևն ամբողջությամբ քանդված է: Այդ տարածքը մտնում է դատական գործընթացի մեջ, իրավաբաններն այդտեղ անելիքներ ունեն և ճշգրտելու: Մի քանի անգամ տիկին Յուլիային ասել ենք, բայց ինքը միանշանակ, չգիտեմ ինչի ուզում է բացենք այդ մի քանի քառակուսի մասը: Այդտեղ մենք, որպես վարչական շրջան, պատասխանատվություն ունենք, որովհետև այդտեղ քանդված է և վտանգավոր, ստիպված ենք այլ քայլեր անել և այլ շինարարական աշխատանքներ տանել, որի ռեսուրսը հիմա չունենք:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Աննա Ջավախյան, խնդրեմ:

### **Աննա Ջավախյան**

-Շնորհակալություն, երկու հարց ունեմ: Առաջինը՝ գիտե՞ք, որ այս տարի նախատեսվում էր Երևանի մանկապարտեզներում հակահրդեհային համակարգ ներդնել: Ուզում եմ տեղեկանալ, թե ինչ փուլում են այժմ այդ աշխատանքները:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Հայկ Մարգարյանը, խնդրեմ:

### **Հայկ Մարգարյան**

-Հակահրդեհային համակարգի տեխնիկական բնութագիրը պատրաստ է, այս պահին տրված է տեղադրելու մրցույթի, մշակել է շինարարության և բարեկարգման վարչությունը: Այնտեղ աշխատանքը մի փոքր ձգվեց այն պատճառով, որ բավական նեղ մասնագիտական բնութագիր էր անհրաժեշտ իրականացնել, որպեսզի այդ համակարգն իրապես ծառայի իր նպատակին, որովհետև մեկ լարի բարակաության և հաստության, այդ ազդանշանների, դետեկտորների տեղադրման այդ ամբողջ գործընթացը կարող էր չտալ այն արդյունքը, որը մեզ պետք էր: Այդ համակարգը մշակվեց բոլոր էքսպերտների կարծիքներ, մի քանի բնութագրեր ենք վերցրել, մշակել և արդյունքում ունենք պատրաստի հայտը, որը կարծում եմ վաղը կտեղադրվի արդեն օնլայն հարթակում՝ որպես մրցույթային հրավեր:

### **Աննա Ջավախյան**

-Շնորհակալություն, երկրորդ հարցս կրկին մանկապարտեզներին է վերաբերում, բայց այս անգամ արդեն վերանորոգման աշխատանքներին: Այս տարի **30** մանկապարտեզներում պետք է կապիտալ վերանորոգում կատարվեր: Ուզում եմ իմանալ, թե երբ են սկսվելու բուն վերանորոգման աշխատանքները: Ինչքանով որ տեղյակ եմ մեծամասնությունում վերանորոգման աշխատանքները դեռ չեն սկսվել, նաև ինչպես պետք է լուծվի մանկապարտեզների սաների հաճախելիության հարցը, արդյոք բոլոր երեխաները կկարողանան ժամանակավոր տեղեր ունենալ մոտակա մանկապարտեզներում:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Հրաչյա Մարգարյանը, խնդրեմ:

### **Հրաչյա Մարգարյան**

-Նշեմ, որ այդ **30** մանկապարտեզ հետ կապված նախագծանախահաշվային փաստաթղթերն մինչև օգոստոս ամիսը կվերջացնենք և առաջին շինարարական աշխատանքները, կարծում եմ, կսկսենք սեպտեմբեր ամսվանից: Այս տարի կարծում եմ, որ **1-2** մանկապարտեզ կսկսենք, բայց ամբողջ մեծ ծավալով աշխատանքները տեղի կունենան հաջորդ ամիս: Սա ինչ նախատեսված է ՄԱԿ-ի ծրագրով, բացի այդ մենք համայնքի բյուջեի հաշվին **1.300.000.000** ՀՀ դրամ նախատեսել ենք, որպեսզի վերանորոգման աշխատանքներ

իրականացնենք: Այդ նախագծերը պատրաստ կլինեն երևի մի երկու շաբաթից: Այդ մանկապարտեզների մասով շինարարական աշխատանքները կսկսվեն արդեն ավելի շուտ, երևի հուլիս ամսից:

Ինչ վերաբերում է երեխաների տեղափոխման հետ կապված հարցին, հիմա 2 մանկապարտեզ ունենք, որոնք դիտարկում ենք: Պետք է պարոն Վիրաբյանի հետ էլ քննարկենք, որպեսզի տեսնենք, թե ինչպես ենք երեխաներին տեղափոխելու այլ մանկապարտեզներ, մինչև որ վերանորոգման աշխատանքներն իրականացվեն: Այս պահին այսքան է տեղեկատվությունը:

#### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն, պարոն Սարգսյան, այսինքն՝ 30 մանկապարտեզի վերանորոգումը նախատեսված է ՄԱԿ-ի ծրագրով:

#### **Հրայր Սարգսյան**

-Այո, 30 մանկապարտեզի վերանորոգումը նախատեսված է ՄԱԿ-ի ծրագրով, իսկ 21 մանկապարտեզի մասով նախագծանախահաշվային փաստաթղթերը մրցույթի էինք դրել, որպեսզի մեր բյուջեով իրականացնեիք, որի համար այս տարի նախատեսված է 1.300.000.000 ՀՀ դրամ: Վերջնական, երբ որ նախագծանախահաշվային փաստաթղթերի արդյունքն ունենանք, կհասկանանք թե քանի մանկապարտեզ ենք կարողանում այդ գումարով վերանորոգել: Կարծում ենք մոտավոր քանակը 11 կամ 12 է լինելու:

Մնացածի մասով արդեն հաջորդ տարի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման վրա ժամանակ չենք ծախսի: Վերանորոգման աշխատանքներն ավելի վաղ կարող ենք սկսել, կարծում եմ մարտ ամսվանից և արդյունքներն ավելի ակնհայտ կլինեն:

#### **Աննա Ջավախյան**

-Ցանականում էի ճշտել արդյոք կա հստակ այն մանկապարտեզների ցանկը, որոնք նախատեսված են վերանորոգել ՄԱԿ-ի ծրագրով, որոնք՝ մեր բյուջեով: Կարող եմ գրությունով դիմել, ստանալ այդ ցանկերը:

#### **Հրայր Սարգսյան**

-Այո, խնդիր չկա կարող ենք տրամադրել և՛ ՄԱԿ-ի ծրագրով նախատեսված 30 մանկապարտեզի և՛ մեր բյուջեով նախատեսված 21 մանկապարտեզի ցանկերը: Այդ 21-ից որում վերանորոգում կիրականացնեք այս պահի դրությամբ դեռ պարզ չէ, կարծում եմ մեկ ամսից պարզ կլինի:

#### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյան, խնդրեմ:

## **Արման Անտոնյան**

-Հարգելի պարոն քաղաքապետ, հարգելի գործընկերներ, ավագանու հարգելի անդամներ, ցավոք սրտի, բոլորիս Երևանը վերածվել է մի մեծ ավտոշուկայի և ավտովարձակալության ծառայության: Չեմ խոսում անիվների վրա անհասկանալի կրպակների ինչ-որ հավաքածուի մասին, որոնք շուրջօրյա կայանված են կարմիր գծերի վրա, ինչը մեծ դժգոհություն է առաջացնում պարտաճանաչ վարորդների կողմից:

Ես՝ որպես ավագանու անդամ, քաջատեղյակ եմ համապատասխան օրենքների և կարգավորումների բացի մասին: Սակայն հերթական անգամ խնդրում եմ բարձրաձայնել նախատեսվող գործընթացի մասին և, առհասարակ, ի՞նչ տեսլական ունի Երևանի քաղաքապետարանը, մասնավորապես, Կենտրոն վարչական շրջանը քաղաքի փողոցների բեռնաթափման առումով: Սա առաջին հարցը, շնորհակալություն:

## **Հայկ Մարություն**

-Ես ավելի ընդհանրական պատասխանեմ, որովհետև այս հարցը շատ հաճախ է հնչում և հարցի պատասխանը միակն է, եթե ավելի գլոբալ նայենք, սա կապված է տրանսպորտային նոր ցանցի հետ: Տրանսպորտի նոր ցանցը լինելու դեպքում կսկսենք բեռնաթափման գործընթացը, որովհետև բեռնաթափումը՝ բազմիցս նշել եմ արգելքների շարան է լինելու: Արգելքների շարանը կարող ենք սկսել միայն այն ժամանակ, երբ կունենանք այլընտրանք, որն առաջարկել ենք քաղաքացիներին: Մենք քաղաքացուն ի՞նչ ենք ասում՝ հարգելի քաղաքացի անձնական մեքենայով մի արի կենտրոն, նա միանգամից հարց է տալիս, այդ դեպքում, հարգելի քաղաքապետարան, ինչո՞վ գամ, պատասխանը պետք է ունենանք՝ օգտվիր տրանսպորտի նոր ցանցից: Սա այն երկխոսությունն է, որը պետք է տեղի ունենա: Քանի դեռ չկա տրանսպորտի նոր ցանցը, իմաստ չունի արգելքների շարանն սկսել, որը կարող է օբյեկտիվ դժգոհություն առաջացնել: Բոլորս լավ գիտենք, որքան էլ ես և դուք սիրում ենք հեծանվով քաղաքում երթևեկելը, հասկանում ենք առողջարար, բայց բավականին բարդ կլինի հեծանվով Ջրվեժից կենտրոն գալը:

Ինչ վերաբերում է երկրորդ, երրորդ շարք կանգնած ավտոմեքենաներին, խոսել եմ ոստիկանության հետ, նրանք խնդիր ունեն, եթե վարորդը տեղում չէ, չեն կարողանում այդ մեքենաները տուգանել: Այստեղ նույնպես օրենսդրական փոփոխությունների կարիք կա, որ կարողանան խախտման դեպքում կտրոնը դնեն ավտոմեքենայի դիմապակու վրա, լուսանկարեն որպես ապացույց և վերջ դրանով ավարտեն: Այստեղ խնդիրներ ունենք, կարծում եմ՝ այս առումով աշխատանքն այսպես, թե այնպես տարվում է, որովհետև, երբ հարց եմ տվել, պատասխանում են, որ այս ուղղությամբ աշխատանքներ տարվում են: Դարձյալ այն համոզման եմ, որ, քաղաքային ոստիկանության ստեղծումը կհեշտացնի այս

գործընթացը, քանի որ ոստիկանությունը, որի մեջ մտնում է նաև կրիմինալ ոստիկանությունը չի հասցնում երթևեկության հետ կապված բոլոր հարցերը կարգավորել: Քաղաքային ոստիկանության պարագայում միակ գործառույթը դա կլինի և ավելի արդյունավետ կաշխատեն: Սա ընդհանուր, բայց ընթացքում իհարկե փոքր քայլեր արվելու են, մինչև մեծը լինի:

#### **Արման Անտոնյան**

-Շտրիակալություն, պարոն քաղաքապետ, իսկ ի՞նչ կասեք կարմիր գծերի վրա շուրջօրյա կայանած վաճառվող, վարձակալությամբ տրված մեքենաների մասին, որոնք առաջացնում են օրինապահ վարորդների դժգոհությունը: Ի՞նչ կարլի է անել սրա հետ կապված, էլ չեմ խոսում անիվների վրա տարատեսակ ու անճաշակ կրպակների մասին, որոնք քաղաքում օրեցօր շատանում են:

#### **Հայկ Մարության**

-Շրջիկ առևտրի նախագիծն արդեն ուղարկել ենք կառավարություն, այնտեղից պետք է գնա Ազգային ժողով: Նախագիծը հետ է եկել, քանի որ փոքր լրամշակումների կարիք կա: Քաղաքապետի խորհրդական Կարեն Համբարձումյանը մի քանի բառով կներկայացնի:

#### **Կարեն Համբարձումյան**

-Պարոն քաղաքապետ, Դուք ճիշտ եք, այդ առումով հարցը երկու կոմպոնենտ ունի, մեկը շրջիկ առևտրի կանոնակարգումն է, որը նախատեսվում է այդ օրենքի նախագծով անել: Չափանիշներ են սահմանվելու շրջիկ առևտրի կետերի մասով: Այսինքն՝ դա, այսպես ասած, անճաշակ և տգեղ չի լինու, հստակ չափանիշներ են լինելու: Նախատեսվելու է նաև ժամային հստակ ռեժիմ, թե ինչ ժամանակահատվածում կարող է շրջիկ կետն այդտեղ կայանել: Ինչ վերաբերում է հանրային տարածքների երթևեկելի մասերում կայանած ավտոմեքենաներին, ապա նույնպես նախատեսվում է օրենսդրական փոփոխություն այն իմաստով, որ, եթե ավտոմեքենայի վրա չկա պետհամարանիշ, ապա նա իրավունք չի ունենալու կայանել հանրային տարածքում՝ ճանապարհի երթևեկելի եզրին կամ կարմիր գծի վրա:

#### **Հայկ Մարության**

-Իսկ եթե կա, բայց վարձույթի մեքենա է և օրերով կանգնած է:

#### **Կարեն Համբարձումյան**

-Դա դիտարկվելու է որպես բիզնես, որովհետև բիզնես է ծավալելու և այլ մոտեցում է լինելու, քան սովորական քաղաքացու համար, ով իր մեքենան է կայանել:

#### **Հայկ Մարության**

-Նախագծի մեջ դա՞ էլ է ներառվելու:

## **Կարեն Համբարձումյան**

-Այո:

## **Արման Անտոնյան**

-Պարոն քաղաքպետ, Դուք ճիշտ նշեցիք, որովհետև վերջին երկու դեպքերում իրենք հետապնդում են գուտ կոմերցիոն բնույթ, ինչն արդեն հավասար իրավական դաշտում չէ այլ վարորդների հետ մեկտեղ:

Թույլ տվեք երկրորդ հարցս հնչեցնեմ: Բազմաթիվ երևանցիների ահազանգերի և որոշակի ուսումնասիրության արդյունքում գործընկերներիս հետ պարզել ենք, որ հանրային գոտիներ համարվող տարածքների, մասնավորապես, այգիների մեծ հատվածներ, եթե ոչ ամբողջությամբ, գտնվում են այս կամ այն սեփականատիրոջ լիազորության ներքո, ասեմ ավելին՝ ժամանակին տրվել են նաև համապատասխան շինթույլտվություններ: Ուզում եմ հատուկ շեշտել այն հանգամանքը, որ տվյալ գոտիները՝ այս պարագայում այգիները, գտնվում են հայտնի **60**-րդ հոդվածի ներքո: Վստահ եմ այս գերինդիքը վերաբերում է նաև Երևանի բոլոր վարչական շրջաններին և կարող եմ Ձեր թույլտվությամբ մասնավորեցնել Նոր Նորք վարչական շրջանում առկա այգիները:

Հարցս է՝ ի՞նչ քաղաքականություն է մշակել Երևանի քաղաքապետարանը հանրային գոտիները քաղաքին և քաղաքացուն վերադարձնելու գործընթացում: Շնորհակալություն:

## **Հայկ Մարության**

-Շնորհակալություն, ընդհանուր առմամբ **60**-րդ հոդվածի հետ կապված ասեմ, որ, նախ շատ անհասկանալի է ինչպես են ձեռք բերել, լավագույն դեպքն այն է, որ այդ պահին չունեն շինթույլտվություն: Եթե չկա նման բան, դիրքորոշումը միանշանակ է, որ այդտեղ չի լինելու ոչ մի բան, բացի նրանից, որ եթե այնտեղ մայթ է, պետք է մայթ լինի, եթե կանաչ տարածք է, պետք է լինի կանաչ տարածք: Խնդիր չունենք, ոչ մի տարբերություն չկա հանրային է, թե սեփականատեր ունի, հակառակը, եթե սեփականատեր ունի հողի հարկ է վճարելու, կարևորը ծառայի իր նպատակին:

Նույնատիպ թեմաների հետ կապված, օրինակ՝ շատ հետաքրքիր դեպք ունեինք երեկ: Դատախազությունից նախագիծ էին բերել, գեղեցիկ շենք է, երկու շենք միացված իրար մի հողակտորի վրա է, պարոն Մեսչյանի հետ նայեցինք, այդ նախագծի հետ նաև գրություն, որովհետև նախօրոք էլ էինք ստացել, ծանոթ էի, երկրորդ գրությունն էր եկել դատախազությունից: Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի մասին է խոսքը, ուրեմն այնտեղ **2006**թ. համայնքից հողատարածք է գնվել **1 200 000** ՀՀ դրամով, **2007**թ. **247 000 000** ՀՀ դրամով վաճառվել է արդեն բարեխիղճ գնորդի և դրանով ավարտվել է գործընթացը:

**2016թ.** նորից քրեական գործ է բացվել, զարմացա, որ **2006թ.** էլ էր քրեական գործ բացվել, պարզվեց քրեական գործ են բացել, որ փակեն, որովհետև ասել են **10**-ը տարին անցել է, այլևս անելիք չունենք: Չնայած չարաշահում է եղել, բայց, քանի որ ժամկետն անցել է, ոչ ոք քրեական պատասխանատվություն չի կրելու և ավարտված գործ էր: Հիմա այս նախագտիծը եկել է և դատախազությունից այսպես են մեկնաբանում, որ իրենք անելիք չունեն, քանի որ **10** տարին անցել է, ոչ ոքի չենք կարող բռնել, բայց դուք այդ հողը հետ վերցրեք իրենցից: Ճիշտն ասած՝ պարոն Համբարձումյանին զանգահարեցի, խնդրեցի ծանոթանալ այդ գործին՝ հասկանալու համար կարողանում ենք այդ հողը հետ վերցնել: Հետաքրքիր է դատախազությունն ասում է, որ իրենք այստեղ անելիք չունեն, բայց դուք տեսեք ինչ եք անում և մի նախագիծ էլ կա այդտեղ, դրան էլ բռնուս բարեխիղճ գնորդ, ով լավ նախագիծ է ներկայացրել, ուզում է կառուցել այդ շենքը, բայց ասում ենք սպասեք տեսնենք այդ հողը քոնս է, թե՛ ոչ: Կագուսային իրավիճակ է ստեղծվել: Պարոն Համբարձումյան, խնդրում եմ երկու բառով ներկայացնել:

#### **Կարեն Համբարձումյան**

-Այո, այդ խնդիրը կա, պարոն Մարության, ընդ որում դատախազությունից երկու գրություն է եկել, այսինքն՝ ակնհայտ մեր ուշադրությունն այդ խնդրի վրա են հրավիրում: Սկզբնական փաստաթղթերը, քանի որ արխիվ են գնացել, պահանջվել է, կուսումնասիրենք, վերջնական պատասխան կտանք: Գործը կարճվել է, և հարցը տեղափոխվել է քաղաքացիաիրավական հարաբերությունների դաշտ:

#### **Հայկ Մարության**

-Շատ լավ, կխնդրեմ մաքսիմալ արագ անել, քանի որ կառուցապատողն սպասում է մեր որոշմանը:

#### **Արման Անտոնյան**

-Պարոն քաղաքապետ, հասկանում եմ Ձեզ, ուղղակի հարցս վերաբերում է կոնկրետ այն այգիներին, որոնք անուններ ունեն և մեր խմբով հանդիպել ենք Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի հետ, զարմացել ենք, որ նույն անուններով այգիները սեփականաշնորհված են, որտեղ կան սրճարաններ և մարդիկ պատրաստվում են տվյալ շինթույլտվության համաձայն կառուցել նոր սրճարաններ: Առնվազն երեկ մոտ **10** բնակիչ դիմել են ինձ, թե ի՞նչ է լինելու և սա էր նաև պատճառը, որ հերթական անգամ այս հարցը բարձրաձայնեմ այստեղ:

Այսինքն՝ ոչ թե ուղղակի կանաչ գոտիներում է այդ ամենը կատարվում, այլ կոնկրետ անունով այգիներում ու սեփականության վկայականներով: Գուցե հարցս տանում եմ մեկ այլ հարթություն, ինչու և ինչպես է վաճառվել այդ հողը, որը **60**-րդ հողվածի տակ է, բայց,



այնուամենայնիվ, ինչ լուծումներ ունենք ոչ թե կանխելու, գիտեմ Ձեր խիստ հսկողության տակ է, այլ գոնե հնարավորինս հետ բերելու այդ ամենը Երևան քաղաքին: Շնորհակալություն:

**Հայկ Մարության**

-Պարոն Անտոնյան, ուզում եմ ասել Ձեր կողմից բարձրացված հարցն ինձ համար շատ սկզբունքային հարց է և ամենօրյա ռեժիմով հետևում ենք, մոնիթորինգ ենք անում, բացի այդ, իրավական դաշտում բոլոր հնարավոր միջոցները կձեռնարկենք, որպեսզի այդ այգիները հետ գան համայնքին: Սակայն ամեն անգամ չէ, որ օրենքը թույլ է տալիս, պետք է անենք մաքսիմալ ինչ հնարավոր է:

**Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Հայկ Միրզոյան, խնդրեմ:

**Հայկ Միրզոյան**

-Շնորհակալություն պարոն քաղաքապետ, երկու հարց ունեմ: Առաջինը վերաբերում է բացօթյա առևտրին: Երևանյան այս ամառվա տապին մեր քաղաքացիները, ովքեր զբաղվում են փողոցային առևտրով, մասնավորապես պտուղ-բանջարեղենային առևտրով, ունենում են իրացման լուրջ խնդիր: Եղանակային պայմանների պատճառով փչանում է վաճառվող ապրանքը և լրացուցիչ աղբագոյացում է առաջանում, որը տեսքից զցում է մայթերն ու փողոցները:

Մյուս կողմից խնդիր ունեն գնորդները, որն ավելի անհանգստացնող է: Այսինքն՝ առողջությանն ամիջական վտանգ կարող է սպառնալ այս դեպքում և վերջապես մայթերը շատ տեղերում դառնում են ուղղակի անանցանելի: Օրինակ՝ երեխաների հետ զբոսնող ծնողների համար, առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց համար և այլն:

Ասեմ, նաև որ այս վիճակը շատ տգեղացնում է մեր քաղաքը, ոչ միայն մեզ համար, այլև՝ զբոսաշրջիկների, քանի որ ամառը համարվում է զբոսաշրջության ամենալավ շրջանը: Լուծման յուրատեսակ ու լավ օրինակ եղավ Արաբկիր վարչական շրջանում, մասնավորապես՝ Կոմիտասի շուկային հարակից տարածքում, երբ քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավար Արամ Դանիելյանի ջանքերով մաքրվեցին, ազատվեցին և Երևանին վերադարձվեցին այդ մայթերը, ինչի համար շնորհակալություն եմ հայտնում:

Ես ուղղակի ուզում եմ հասկանալ, մենք ինչ ռազմավարություն և քաղաքականություն ունենք այս խնդրի լուծման ուղղությամբ:

**Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

### **Մերգեյ Հարությունյան**

-Շնորհակալություն, պարոն Միրզոյան դա ապօրինի առևտուր է: Փողոցում իրականացվող առևտուրը, բնականաբար, վտանգավոր է, ապօրինի է և հարիւր չէ ժամանակակից քաղաքի տեսքին: Մենք միջոցներ ենք ձեռնարկում, որպեսզի փորձենք մինի շուկաների տեսքով տարածքներ ապահովենք տնտեսվարողներին, այդ բիզնեսով զբաղվողներին, որպեսզի կարողանան իրենց գործունեությունը ծավալել:

Այն, որ փողոցներում առևտուրը կա, դա իհարկե տգեղ է և շատ վատ, բնականաբար, փորձում ենք ամեն ինչ անել, որպեսզի բացառենք այդ դեպքերը: Վարչական շրջանների ղեկավարների ջանքերով պարբերաբար ստեղծվում են մինի շուկաներ, ուղարկում են տարբեր տարածքների վերաբերյալ տեղեկատվություն, որոնք ճարտարապետների հետ ուսումնասիրում ենք: Ստեղծվում են այդ փոքրիկ վայրերը, որտեղ կարող են իրենք տնտեսվարեն, պարզապես կա տնտեսվարողների մի որոշակի զանգված, որոնք ոչ մի պայմանի չեն համաձայնվում, բացի իրենց նշած հասցեից: Դրանք հիմնականում այն տնտեսվարողներն են, ովքեր նախկինում աշխատել են գործող մոտակա շուկաներում: Գիտեք հիմա բազմաթիվ շուկաներ այլևս չեն գործում, բայց իրենք սովոր են այդ միջավայրին և ցանկանում են մնալ այդտեղ:

### **Հայկ Միրզոյան**

-Շնորհակալություն, օգտվելով առիթից, կոչ եմ անում քաղաքացիներին իրենց առևտուրը կազմակերպել շուկաներում:

Երկրորդ հարցս վերաբերում է Նազարբեկյան թաղամասի **48** հասցեում գտնվող անավարտ շենքին: Նշեմ, որ Խորհրդային տարիներից ի վեր, այս շինարարությունը չի հասցվել ավարտին, այնտեղ կա բաց տանիք, ինչը բերում է շենքի վթարայնության աճին: Ճակատագրի բերումով այնպես է ստացվել, որ այնտեղ սկսել են բնակվել Երևանի քաղաքացիներ, ովքեր հիմնականում սոցիալապես անապահով և հաշմանդամություն ունեցող անձինք են: Խնդիր է առաջանում այս մարդկանց անվտանգության հետ կապված, մասնավորապես հասկանալի է, որ բաց տանիքի պայմաններում, այսօր արդեն **3**-րդ կարգի վթարային դարձած բազմաբնակարան շենքը, մի որոշ ժամանակ հետո կդառնա **4**-րդ կարգի վթարային:

Նշեմ, որ այս հարցի հետ կապված բավականին մեծ ուսումնասիրություն է իրականացվել մեր ավագանիներից Գայանե Եղիազարյանի հետ: Խնդրի լուծման համար մեծ ջանքեր է գործադրվել նաև Աջափնյակ վարչական շրջանի ղեկավար Գևորգ Բաբայանի կողմից և ասեմ, որ ամենամեծ աշխատանքն իրականացվել է քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանի կողմից: Ես ուղղակի ուզում եմ հասկանալ, թե խնդիրը

լուծման որ փուլում է, որովհետև այդ բնակիչներն այս հարցերի պատասխանն անընդհատ մեզնից են պահանջում:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրայր Մարգարյանը:

### **Հրայր Մարգարյան**

-Խնդիրը բավականին երկար ժամանակ է, որ առկա է, համալիր լուծում հնարավոր չի եղել տալ: Մենք այս պահի դրությամբ էլ համալիր լուծում չենք կարողանում տալ, քանի որ այդ շենքը նույնպես վթարային է: **9**-րդ հարկում նոր բնակելի տարածք կառուցելը կամ մեծ շինություն ապահովելը, որպեսզի անձրևաջրերը չներթափանցեն շենք, հնարավոր չէ: Մասնագետների կողմից հաշվարկ էր իրականացվել և առաջարկվել էր, որպեսզի **9**-րդ հարկն ամբողջությամբ հեռացվի, որը ծախսային տեսակետից ավելի թանկ է:

Միևնույն ժամանակ այնտեղ բնակվող որոշ բնակիչներին վերաբնակեցնելու խնդիր էր առաջանալու: Որպես միջանկյալ լուծում այնտեղ կապահովեինք տանիքի ամբողջությամբ իզոլացում, որպեսզի անձրևաջրերը չթափանցեն ներս: Այնտեղ կան վերելակի համար հորաններ, քանի որ վերելակները տեղադրված չեն եղել, դրանք ամբողջությամբ կփակվեն, որը հնարավորություն կտա շենքի շահագործումը մի փոքր ավելի երկարացնել, մինչև հասկանանք ընդհանուր պետական համակարգում վթարային շենքերի հետ ինչ քաղաքականություն պետք է իրականացնի պետությունը և համայնքը:

Նազարբեկյան թաղամասի **48** շենքի նախագծանախահաշվային փաստաթղթերն արդեն մրցույթի ենք դրել, վերջնական արդյունքներն ունենալուն պես աշխատանքները կսկսվեն, կարծում եմ մինչ աշուն արդեն ամբողջությամբ աշխատանքներն ավարտված կլինեն: Աշունը և ձմեռը շենքում կդիմավորեն առանց ջրերի:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արթուր Մանուկյան, խնդրեմ:

### **Արթուր Մանուկյան**

-Եվ՛ մասնագիտական, և՛ սիրողական, և՛ բոլոր շրջանակներից բազմաթիվ դժգոհություններ կան մեր այգիներում բնապահպանական խնդիրները, կարծես թե այդքան էլ գոհացուցիչ չեն լուծվում: Գարնանից սկսած այդ դժգոհություննրն սկսվեցին և մինչև այսօր չեն դադարում: Հիմա արդեն չորանալու, չջրվելու խնդիր կա, որոնց մասին ևս մեկ անգամ բարձրաձայնում եմ այստեղ:

Երկրորդ հարցս վերաբերում է փողոցներում գծանշումների բացակայման խնդրին, ինչի հետևանքով վարորդները դուրս են գալիս հանդիպակաց գոտի և վթարային իրավիճակ

ստեղծում: Որոշակիորեն ծանոթ եմ խնդրի լուծումներին, բայց կցանկանայի այստեղ այդ մասին բարձրաձայնվեր:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն, ասեմ, որ երկուշաբթի օրը գործակարգավարական խորհրդակցությունների ժամանակ ես նույնպես դժգոհություն եմ հայտնել կանաչապատման և կանաչ տարածքների հետ կապված: Այո, այստեղ թերացումներ կան, եթե կան թերացումներ, պետք է դրա մասին խոսել, հասկանալ, գույքագրել խնդիրները, պատճառները և մյուս տարի արդեն այդ խնդիրները լուծված կլինեն, հնարավոր կլինի շատ ավելի որակով այդ ամենը կազմակերպել: Այդ խնդիրների հետ կապված, իհարկե, ինչ-որ բացատրություններ կան, բայց ես միշտ ասում եմ, որ այդ բացատրությունները ոչ ոքի չի հետաքրքրում, մարդիկ պետք է արդյունք տեսնեն:

Այդ բացատրություններն ավելի օբյեկտիվ են գծանշումների հետ կապված: Պետք է քաղաքապետարանն ասֆալտապատի փողոցները, ավարտի և նոր գծանշումն սկսվի: Նշեմ, որ մենք արդեն ուղարկել ենք այն բոլոր փողոցների ցանկը, որոնք ասֆալտապատվել են, ինչպես նաև այն փողոցները, որոնք այս տարի պլանավորված չեն ասֆալտապատել: Մենք ոստիկանության մեր գործընկերներին աշխատելու, բավականին, մեծ ֆրոնտ ենք տվել, որովհետև իրենք են իրականացնում գծանշման աշխատանքները: Ասֆալտապատման աշխատանքների ուշացումը շատ օբյեկտիվ պատճառով է եղել: Գործընթացը մեկ անգամ հետ է ընկել ֆինանսների նախարարության համակարգի չաշխատելու պատճառով, մեկ անգամ էլ բողոքարկվել է, ինչի հետևանքով բավականին հետ է ընկել գնման գործընթացը:

Նման խնդիրների հետ քաղաքապետարանն առաջին անգամ է առնչվում, որովհետև պարզ ասեմ, երբևիցե չի եղել նորմալ մրցույթ, մարդիկ նախապես իմացել են ով և ինչպես է շահելու: Աշխատանքներն անգամ նախօրոք սկսել են՝ չսպասելով մրցույթի ավարտին, որովհետև գիտեին, որ իրենք են շահելու: Դա, իրականում, լավ արդյունք է տվել այն առումով, որ տվյալ մարդը գիտի ինքն է շահելու, **1-2** ամիս չի սպասել, սկսել է աշխատանքները, մինչև այդ գործընթացը տեղի կունենա: Այս դեպքում մենք այդ իրավունքը չունեինք, որովհետև նախապես չգիտեինք, թե ով է մրցույթի հաղթողը լինելու: Մինչև վերջ սպասում էինք, որ հաղթողը լինի, եղել է անգամ դեպք, որ հաղթողը կար, մինչև պայմանագիրը կնքելն ասում էինք, որ գուցե սկսեն աշխատանքները, ասում էին ոչ, օրենքով պայմանագիրը կկնքվի աշխատանքները կսկսենք: Այստեղ պատճառներն ավելի օբյեկտիվ են:

Հարցին կանդադարառնա քաղաքապետի առաջին տեղակալ Հրայր Մարգարյանը, խնդրեմ:

## Հրայր Մարգարյան

-Կանաչապատման հետ կապված ևս մեկ անգամ առիթ եղել է, նշել եմ, որ տարբեր մոտեցումներ կա կոնկրետ էտի հետ կապված: Հասարակության մի մասն ասում է, որ էտը ճիշտ չեն անում, ժամանակին չի արվել: Այո, ընթացքում երևի խնդիրներ եղել են, բայց, ինչպես գիտեք, ամսի 21-ը քաղաքապետին կից շրջակա միջավայրի պահպանման խորհրդի ձևավորման վերջնաժամկետն էր: Այնտեղ պետք է առաջարկեմ, որ խնդիր դնենք ընդհանուր Երևան քաղաքում կանաչապատման կոնցեպցիայի հաստատմանը, որը, իհարկե, կներկայացնենք նաև ավագանուն: Դա հիմք կհանդիսանա ամբողջ կանաչապատումը Երևան քաղաքում ինչ մոտեցումներով ենք իրականացնելու:

Այս տարի տապը շուտ է սկսվել, ամեն տարի մի շաբաթով եղանակային փոփոխություն է տեղի ունենում: Սևանից ջուրը մեկ շաբաթ ուշ բաց թողեցին և որոշ տեղեր կան, որ խոտածածկույթը չորացավ, բայց հիմա մենք աշխատանքներ ենք իրականացնում, որպեսզի վերականգնենք այն: Ինչպես նաև բնապահպանության վարչության պետի հետ միասին գույքագրում ենք ամբողջ մեր բնապահպանության ոլորտում ինչ հնարավորություններ ունենք: Մի քանի վարչական շրջաններում արդեն GPS համակարգի միջոցով գույքագրել ենք ոռոգման համակարգը, թե ինչ տրամաչափի, երկարության խողովակներ կան: Դա համադրելու ենք այն կանաչապատ տարածքին, որն առկա է տվյալ վարչական շրջանում: Կարծում եմ մինչև տարվա վերջ ամբողջ ոռոգման ցանցի էլեկտրոնային տարբերակը կունենանք: Ինչպես նաև նախատեսում ենք տեղեր, որտեղ հնարավորություն կլինի խորքային հորերից օգտվել, այսինքն՝ կախված չենք լինի այլ մատակարարներից: Երեք օր է արդեն, օրինակ, Էրեբունի և Շենգավիթ վարչական շրջաններում ջուր չկա, քանի որ այդ տեղերում օգտվում ենք Արտաշատի ջրամբարից եկող ջրից: Այնտեղ խնդիր ունենք, վթար է տեղի ունեցել, վաղը նոր պատրաստ է լինելու, բայց 3 օր է չի ջրվել:

Պարոն քաղաքապետ, միևնույն ժամանակ թույլ տվեք նաև նշել, շատ դեպքերում, որ քաղաքացու աչքերով ենք նայում, երբ ես այստեղ չեի, անցնում էինք և տեսնում տեղեր, որտեղ խոտը հնձած կամ մշակած չէր: Մակայն ինչպես քիչ առաջ խոսում էինք համայնքի հողերի վերաբերյալ, բավականին մեծ տարածքներ մասնավոր սեփականության է պատկանում, որտեղ մենք, որպես համայնք, իրավունքներ չենք ունենում որևէ բան իրականացնելու: Օրինակ՝ կարող եմ նշել Ծիծեռնակաբերդի խճուղով, որ անցնեք շատ հաճախ կտեսնեք խոտն ամբողջությամբ դեղնած է, որից քաղաքացիների մոտ հարց կարող է առաջանալ, թե ինչու՞ քաղաքապետարանն այդտեղ որևէ այգի կամ պուրակ չի կառուցում: Դա մասնավոր սեփականություն է և ուղիղ ազդեցություն այդ տարածքների վրա չունենք:

Վերջին շրջանում Նորքում մի քաղաքացի համացանցում վիդեո էր հրապարակել, որտեղ ասում էր, որ Երևան քաղաքում դուք ծառեր եք տնկել, որոնք չեն ոռոգվել և չորացել են: Սակայն այդ հատվածը, որ նշում էին մեծ մասը մասնավոր սեփականություն է եղել:

Ես չեմ բացառում, որ այս տարի Երևան քաղաքում եղել են դեպքեր, որտեղ ծառ ենք տնկել և չորացել է, բայց մոտեցումն այնպիսին է եղել, որ ծառերը տնկենք այն վայրերում, որտեղ ունենանք ջրի համակարգ: Այդ իսկ պատճառով, հիմա նախատեսում ենք ունենալ **2** խորքային հոր, մրցույթ է հայտարարվելու, որպեսզի կախված չլինենք այլ մատակարարներից: Մեկն օրինակ Կոմիտասի պանթեոնի հարակից տարածքն է, որը նույնպես Արտաշատի ջրանցքից է օգտվում: Ժամանակին ունեցել ենք խորքային հոր, որը տարիներ շարունակ չի գործում: Որոշեցինք նույնպես ունենալ խորքային հոր, որպեսզի կարողանանք այդ ամբողջ տարածքը կանաչապատել:

Կարծում եմ, երբ խորհուրդը ձևավորվի, աշխատի, ավելի ինտերակտիվ կլինենք և ամբողջ տեղեկատվությունը հանրությանը մանրամասն կտրամադրենք, շնորհակալություն:

### **Արթուր Մանուկյան**

-Երևանի էկո վիճակը, ուղղակի, շատ աղետալի է և այս հարցերին պետք է շատ սուր և խիստ վերաբերել:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լիլիթ Պիպոյան, խնդրեմ:

### **Լիլիթ Պիպոյան**

-Պարոն քաղաքապետ, մի մասնավոր խնդրի մասին է խոսքս Մաշտոցի **49** հասցեի շենքը, որի նկուղում գտնվում է «Բաս վոյաժ» կազմակերպությունը, որը ուղևորություններ է կազմակերպում հիմնականում Երևան-Թբիլիսի: Այդտեղ ավտոբուսներն առավոտյան **07.00-23.00**, այսինքն՝ թույլատրված միջակայքում, բայց հենց **ժ. 07.00** և **23.00** ուղևորների՝ ավտոբուսներ նստելու և իջնելու հետ կապված աղմուկ է բարձրանում, որպեսզի օդորակիչներն աշխատեն ավտոբուսների շարժիչները միշտ միացված են, տարածքում ծուխ է: Մի խոսքով՝ արդեն **2-3** տարի է բնակիչները տանջվում են և նրանց զայրույթը հասավ գազաթնակետին, երբ մի քանի օր առաջ շենքի դիմացի բոլոր բարդիները հատվեցին: Լուսանկարներ կան, ըստ որոնց բարդիները նորմալ են:

Ես ուզում եմ պատասխան ստանալ այս հարցի շուրջ, արդյոք իրավական է բնակելի շենքի տակ ունենալ այդ կարգի բիզնես և բնակիչներն այդ հատումը կապում են բիզնեսի հետ, որպեսզի ավելի շատ տարածք ազատվի ավտոբուսների կայանման համար: Արդյոք

իրավական է, որ նման կարգի բիզնես լինի, արդյոք բիզնեսը գործում է նորմալ, արդյոք նորմալ հարկատու է և ինչ կասեն ծառերի հաստման մասին:

### **Հայկ Մարության**

-Հարցին, որպես առաջնային օղակ, կպատասխանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Վիկտոր Մնացականյանը:

### **Վիկտոր Մնացականյան**

-Տիկին Պիպոյան, հարկային մասով, բնականաբար, չենք կարող պատասխանել, բայց կարգավորման առումով ասեմ, որ այստեղ ևս թույլ ենք: Կարծեմ անցած հանդիպմանն ասում էինք, երբ գոտևորման հարցը կարողանանք կարգավորել, որ բազմաբնակարան շենքերում նման գրասենյակներ չլինեն: Ցավոք, գիտեք, որ մարդիկ կարողանում են բազմաբնակարան շենքերում մերսման սրահներ բացել, հոսթելներ և այլն: Դա ևս կմտնի փոփոխության մեջ, այժմ քաղաքապետարանում քննարկում ենք ամբողջ գործընթացը:

Ինչ վերաբերում է «Բաս վոյաժի», արդեն գրուցել ենք սեփականատիրոջ հետ, խնդիր ունեինք նրանց գովազդի տեղակայման հետ: Երեկ գրուցել ենք Մատենադարանի տնօրեն Տեր-Ղևոնդյանի հետ, ուզում ենք Մատենադարանի ընդհանուր շրջակայքը բարեկարգենք և հենց Մատենադարան եկող ավտոբուսների տեղակայման հարցը լուծենք: Պարոն քաղաքապետ, նաև սեփականատիրոջը հորդորել ենք, նրանք արդեն նոր գրասենյակ են փնտրում:

Ինչ վերաբերում է բարդիներին, գիշերը ժ. 3-ին «Կենտրոն կանաչապատման» մեր աշխատակիցները գնացել են, այդտեղ մի բարդու փչացած բնում բենզին են լցրել, այրել են: Չարամտությունը չգիտեմ ինչի հետ է կապված, բայց երբ գնացել ենք տեսել ենք, անգամ լուսանկարները կան, որ հարակից երկու բարդին ևս թեքված է եղել և՛ փչակը, և՛ բունն արդեն փտած են եղել: Ուղղակի, երբ նկարել են մոլորության մեջ են գցել, որովհետև բարդին վերնից նկարելուց թվում է բունն առողջ է, բայց ներքևից նայելուց երևում է, որ փտած է, ինչը քամիների պարագայում շատ վտանգավոր է: Դրանք **40-50-60** տարեկան բարդիներ են, ցավոք մեր էկոլոգիայում երկար չեն դիմանում և ընդհանրապես ցանկանում ենք Երևանի կենտրոնում բարդիներ տնկելու պրակտիկան վերացնել: Բարդին ավելի հարմար է ճանապարհների եզրերին տնկել, քանի որ էժան է, մարդիկ չիմանալով ինչ-որ տեղից գնում են, բերում տնկում, և մենք ստիպված քաղաքապետարանի ռեսուրսներով վերականգնում ենք կամ նոր ծառեր ենք տնկում:

### **Լիլիթ Պիպոյան**

-Այսինքն՝ ծառերի հատելը կապ չունի՞ «Բաս վոյաժի» ազահության հետ:

### **Վիկտոր Մնացականյան**

-Ոչ, տիկին Պիպոյան, նկարները կան կարող եմ նիստից հետո ցույց տալ:

### **Հայկ Մարության**

-Բնապահպանության վարչության պետ պարոն Հակոբյանը շատ կարճ կպարզաբանի:

### **Խաչիկ Հակոբյան**

-Տեղում մասնագիտական եզրակացություն է տրվել, խնդիրը գիշերը բռնկված խնդրից է առաջացել: Երբ եղել ենք տեղում, տեսել ենք, որ երկու ծառը մոտավորապես չորս տարի առաջ խոր կոնդի են ենթարկվել, ամբողջությամբ արմատային համակարգից զրկված են եղել, վնասված, ենթակեղևով սնուցում է եղել, մի քանի կանաչ տերև է եղել, լիարժեք չորացած են եղել և իրենցից մեծ վտանգ են ներկայացրել: Կա մասնագիտական որոշում և տեղում «Կենտրոն կանաչապատման» աշխատակիցները հեռացրել են՝ դրանով իսկ ապահովել տարածքի անվտանգությունը: Աշնանը կտրվի կանաչապատման նոր լուծում՝ տարածքին համահունչ և անվտանգ: Շնորհակալություն:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն: Խնդրեմ, հաջորդ հարցը տիկին Պիպոյան:

### **Լիլիթ Պիպոյան**

-Երբ պարոն Խաժակյանը խոսում էր «Երևանի պատմությունը» գրքի մասին, ես ստիպված եմ անդրադառնալ դրան: Հայտնի է, որ գիրքը հրատարակվել է **2018**թ. նոյեմբերին, մոտավորապես, հունվարից սկսած ես, պատվիրակված լինելով հեղինակների կողմից, խնդրում եմ, որ այդ գրքի շնորհանդեսը տեղի ունենա, այն տեղի չի ունենում: Ընդ որում՝ պատճառաբանությունը շատ հետաքրքիր է, որ վարչությունն ուզում է այն կատարել առավել ճոխությամբ, այն պարագայում, երբ մարդիկ կուզենային, որ դա ուղղակի շուտ տեղի ունեցած լիներ: Ճոխությանը գոհ գնալով՝ անընդհատ տեղափոխում ենք: Հանդիպելով հեղինակներին հետ, ովքեր հիմնականում տարեց պրոֆեսորներ են, ուղղակի «գետինն եմ մտնում» ամոթից, իմ՝ ավագանու անդամ լինելու հեղինակությունը գետնով է տրված, ես ոչինչ չկարողացա անել, որ այդ շնորհանդեսը կայանա: Ուզում եմ հիմա խնդրել, որ պարոն Վիրաբյանը հրապարակավ հայտարարի ժամկետը, օրը, որպեսզի ես ստիպված չլինեմ ասելու, որ ասել եմ, բայց հետաձգվում է:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ պարոն Վիրաբյանը:



### **Տիգրան Վիրաբյան**

-Շնորհակալ եմ տիկին Պիպոյան: Գրքի շնորհանդեսը նախատեսված է «Երևանյան ամառ» ծրագրի շրջանակներում, հուլիսի երկրորդ կեսին Երևանի պատմության թանգարանում:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արուսյակ Հարությունյան, խնդրեմ:

### **Արուսյակ Հարությունյան**

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ ես վերջերս տեղեկացա, որ ասֆալտապատման տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունների մրցույթը չի կայացել, ուզում էի տեղեկանալ, թե ինչու՞ և ե՞րբ այն կկայանա:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ Գրիգոր Հարությունյանը:

### **Գրիգոր Հարությունյան**

-Մրցույթը կայացել է, ասֆալտապատման մրցույթի հետ է դա կայանում, ուղղակի 10 վարչական շրջանը շահել է Վանաձորից մի ընկերություն, որը շատ անպատասխանատու է: Աշխատանքի ծավալները տեսել է, ասում է, որ չի կարող այդ գործառույթը կատարել:

### **Արուսյակ Հարությունյան**

-Կարո՞ղ եք նշել, երբ են ստանձնել իրենց պարտականությունները:

### **Գրիգոր Հարությունյան**

-Ընդհանրապես չեն ստանձնել պարտականությունները: Միայն եկել պայմանագիր է կնքել և չի էլ հրաժարվում, որ երկրորդ տեղի հաղթողը մասնակցի:

### **Արուսյակ Հարությունյան**

-Իսկ պայմանագրով ե՞րբ պետք է ստանձնեք իր պարտականությունները:

### **Գրիգոր Հարությունյան**

-Հունիսի սկզբից:

### **Հայկ Մարության**

-Պարոն Սարգսյան, խնդրում եմ պարզաբանեք գնման այս ընթացքը:

### **Հայկ Մարգսյան**

-Մրցույթը կայացել է, տեխսկողն ունի որոշակի պահանջներ իր կողմից իրականացվող աշխատանքների պայմանների ապահովման համար: Այս պահին

բանակցությունները դրա շուրջ են, եթե խոսքը սրա մասին էր: Սա չկայացած մրցույթ չէ, սա կայացած և հաղթած մրցույթ է:

Ինչ վերաբերում է չկայացմանը, մենք չունենք նման տեղեկատվություն, որ ասֆալտի տեխնոլոգիայի մրցույթ չի կայացել, որովհետև ասֆալտի տեխնոլոգիաներն արդեն իսկ իրականացվում են, բացառությամբ այս մի դեպքի: Դրան փոխարինում են մեր աշխատանքները ֆինանսական վարչության կողմից, որը որոշակիորեն կփոխարինի այդ աշխատանքներին մինչև որ ընկերության հետ կգանք ընդհանուր հայտարարի:

### **Հայկ Մարության**

-Սա նույնպես իմ ասածի շարունակությունն է. քանի գործընթացը շատ թափանցիկ է, պարզ է, մրցույթին մասնակցում է յուրաքանչյուր ընկերություն, որն իրավունք ունի: Շահում է ամենացածր գին տվողը և այստեղ բախվում ենք նույն խնդրին: Ամենացածր գին տվողը չունի այն որակավորումները, չի կարողանում ապահովել այն ծավալները, չի պատկերացնում ինչ ծավալների մասին է խոսքը, իսկ իրենց փոխելու գործընթացը բավականին երկար է տևում, եթե օրինական ճանապարհով ենք գնում:

Պարոն Սարգսյանը շատ ճիշտ նշեց, որ այսօր մեր աշխատակիցների միջոցով ենք սա անում, որպեսզի չկանգնեցնենք ամբողջ ընթացքը: Հարցի կարգավորումը պետք է լինի այն, որ եթե տվյալ կազմակերպությունը չի կարող իրականացնել այդ աշխատանքը, պետք է երկրորդ տեղով մրցույթը շահած կազմակերպությունն ստանձնի այդ պարտականությունները:

### **Արուսյակ Հարությունյան**

-Շատ լավ, շնորհակալություն, ուղղակի պետք է խնդրեմ, որ հնարավորինս հետևողական լինենք, որ հնարավորինս շուտ իրենց պարտականություններն իրականացնեն, քանի որ շատ կարևոր գործառույթ ունեն անելու: Ինչից այս մտահոգությունն առաջացավ և ինչից ես տեղեկացա այս խնդրի մասին, որ երբեմն վարչական շրջանների ղեկավարներն են արձագանքում այդպիսի դեպքերի, պետք է ստուգել, արդյոք կա դրական եզրակացություն փորձաքննության կողմից տրված, կարող են արդյոք այդ ասֆալտն օգտագործել, թե՛ ոչ: Բարեբախտաբար մինչ այժմ վարչական շրջանի ղեկավարների շրջանակներում այդ հարցն արագ կարգավորվել է, բայց քանի որ մենք այդ մրցույթը հայտարարել ենք և արդեն կա կազմակերպություն, ով պետք է անի դա՝ իր վերահսկողական լիազորությունները, ապա հետևողական լինենք, որ այն անպայման անի:

Երկրորդ հարցս հնչեցնեմ. այսօր Երևանի հ. 164 դպրոցի տնօրենի մրցույթ է հայտարարված եղել, սակայն այն չի կայացել և կխնդրեի պարզաբանել թե ինչու՞:

**Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետ Աննա Ստեփանյանը:

**Աննա Ստեփանյան**

-Շնորհակալություն, նշեմ, որ, այո, այսօր մրցույթը հայտարարված էր, քվորում չլինելու պատճառով մրցույթը չի կայացել: Ավելին ասել չեմ կարող, որովհետև այստեղ եմ եղել և ավել տեղեկատվություն չունեմ:

**Հայկ Մարության**

-Շնորհակալություն, ավարտվեց հարց ու պատասխանը, ավագանու հարգելի անդամներ, Երևանի ավագանու 2-րդ նստաշրջանի 5-րդ նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

**Կազմեց՝ Անի Եփրիկյան**